Մեծ ճերմակ
Եղբայրության գաղտնիքները

«ԼՈՒՍԱԲԱՑ» հրատարակչատուն
2022

Բովանդակություն

Նախաբան: Մեծագույն գաղտնիքը տեսանելի է դառնում: 5

Կրոնական տեքստեր և ժողովրդական էպոս 17

Հին հնդկական և բուդդայական աղբյուրներ 19

Հիշատակություններ քրիստոնեության մեջ և իսլամում 23

Լեգենդ սուրբ Գրաալի մասին 26

Ասքեր ճերմակաջրության մասին 32

Շամբալան որոնողներն ու նրահյուրերը 41

Որոնողները 42

Ո՞վ է այցելել Շամբալա: 45

Դոկտոր Լառձինի «Կյանքի տաճարը» 47

Խորհրդավոր կոմս Սեն Ժերմենը 53

Ե.Պ. Բլավատսկայայի Առաքելությունը 59

Անմոռանալի հանդիպումներ Ուսուցչի հետ 73

Թեոսոֆիական հայացքների հետևորդները 83

Աննի Բեզանտը Մեծ Ճերմակ օթյակում 85

Չարլզ Ջոնսթոնը Շամբալայի հետևորդների մասին 90

Ֆրանչիա Լա Դյուն Ուսուցիչների մասին 92

Ռերիխների ընտանիքի աշխատասիրությունները 95

Ռերիխների աշակերտներն ու հետևորդները 103
Ալեքսանդր Կլիզովսկին Ճերմակ Եղբայրության Առաքելության մասին 105
Արթուր Հեյդոկը Շամբալայի աշխատանքի նշանակության մասին 107
Ստեպան Ստուլգինսկին էվոլյուցիայի էության և Տիեզերական Օրենքների մասին 112

Երկրի վրա, թե՞ երկնքում 115

Ովքե՞ր են դեսպանորդները 119

XX և XXI դարերի փիլիսոփայական-էթիկական հոգևոր ուսմունքները 123
Բուլղարական ուսուցիչներ Պյոտր Դոնովը և Օմրաամ Միքայել Այվանխովը 125
Ամերիկյան դեսպանորդներ Բալլարդները և Պրոֆետները 129
Ռուսական դեսպանորդ Տատյանա Միկուշինան 136

Պատմական անհատները՝ Ուսուցիչների վերամարմնավորումներ են 143

Եղբայրության ազդեցությունը փիլիսոփայության և գիտության վրա 147

Մեծ Եղբայրությունը գրական ստեղծագործություններում 153
Ֆիլոս. «Երկու մոլորակների բնակիչը» 154
Էլիզաբեթ Հեյչ «Ձեռնադրում» 156
Հ.Պ. «Ձեռնադրվածի կյանքը» 157
Կոնկորդիա Անտարովա «Երկու կյանք» 158
Դենիոն Բրինկլի «Լույսով փրկվածը» 160

Վերջաբան 161



Նախաբան:

Մեծագույն գաղտնիքը տեսանելի էդառնում

Աշխարհաստեղծման գաղտնիքները մարդկության համար բացահայտվում են աստիճանաբար: Մոտիապաշտ վայրենուն իմաստ չունի կայծակի առաջացման կամ ցերեկվա ու գիշերվա հերթագայության մասին պատմելը: Սակայն, երբ առաջավոր գիտական միտքը կյանքի անտեսանելի ոլորտներում կանգնած է կարևորագույն հայտնագործությունների շեմին, գալիս է մարդկությանը լայնորեն այն գիտելիքների հետ ծանոթացնելու ժամանակը, որոնք մինչև այդ մեծագույն գաղտնիք էին հանդիսանում:

XIX դ.-ի վերջում արևմտյան աշխարհի համար բացահայտվեց մարդկության այն հոգևոր Ուսուցիչների գոյության գաղտնիքը, որոնք դարերով ուղղորդում էին նրա էվոլյուցիան: Թեև Հոգևոր Եղբայրությունը Երկիր է եկել հինավուրց ժամանակներից, այն երբեք իր մասին չի ազդարարել: Այս պատճառով էլ դարավերջին նրա գոյության մասին նորությունը տարբեր կերպ ընկալվեց: Ոմանց կողմից ընդունվեց ուրախությամբ և գոհունակությամբ, ոմանց կողմից՝

զարմանքով, երրորդների կողմից՝ թշնամանքով: Բոլորը չեն, որ միանգամից կարող էին ընդունել, թե մարդկությանը կառավարում են աշխարհից թաքնված ինչ-որ իմաստուններ, որոնք տիրապետում են վիթխարի գիտելիքների և գերհրաշալի հատկությունների: Սակայն այստեղ զարմանալի ոչինչ չկա: Մարդկային հասարակության մեջ երեխաներին մշտապես ուղղորդում են, ընտանիքում՝ ծնողները, մանկապարտեզում՝ դաստիարակները, դպրոցում՝ ուսուցիչները:Մանկապարտեզի տարիքի երեխային թողեք մենակ առանց իրենցից քսան տարով մեծ մարդկանց խնամքի: Եվ ի՞նչ կստացվի արդյունքում: Մի մասը պարզապես չի գոյատևի, իսկ կենդանի մնացածները չեն անցնի վայրենու մակարդակից, որ ապրում են «ով ուժեղ է, նա էլ կուշտ է» օրենքով: Ո՛չ, մարդկությունը չէր կարող ինքնուրույն և արագորեն (տիեզերական չափումներով) հասնել իր ժամանակակից քաղաքակիրթ զարգացման աստիճանին, եթե չլիներ Ուսուցիչների օգնությունը: Եվ եթե Արևմուտքը ցնցված էր այս նոր տեղեկատվությունից, Արևելքի համար հոգևոր Ուսուցիչների գոյությունը յոթ կնիքների տակ պահվող գաղտնիք չէր: Շատ ժողովուրդների հինավուրց կրոններն ու էպոսը վկայություններ են պահպանում մարդկության իմաստունների և դաստիարակների մասին:

Արևելքում սրբազան այս հասկացությունն այսպես է հնչում՝ Շամբալա (Սամբհալա): Ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան աղբյուրներում մենք հանդիպում ենք նաև ուրիշ անվանումների՝ Մեծ Ռիշաներ, Լույսի Վեհապետներ, Հակոբի Սանդուղք, Մահաթմաներ, Մեծ Ճերմակ Եղբայրություն, Համբարձյալ Դասեր (Տիրակալներ), Իմաստության Տիրակալներ, Շամբալայի Տիրակալներ, Ունիվերսալ Եղբայրություն,Մեծ Ճերմակ Օթյակ, Ճերմակաջրություն և այլն:

Ասիայի հինավուրց լեգենդներն ասում են, որ Շամբալան քողարկված է կողմնակի հայացքներից: Անհասանելի լեռներով է այն շրջապատված: Լեռներից այն կողմ կանաչ հրաշագեղ հովիտներ կան, բյուրեղի պես մաքուր գետեր ու ջրվեժներ, շքեղ բացատներ ու պարտեզներ: Ստորգետնյա տաք աղբյուրները հովիտներում բարենպաստ միկրոկլիմա են ստեղծում: Անանցանելի անդունդները, քարասողանքները և ձնահյուսերը փակում են դեպի Շամբալա տանող ճանապարհները: Ոչ ոք չի կարող գտնել այնտեղ տանող ճանապարհը, բացի նրանցից, որ կանչված են իմաստունների կողմից:

Լեգենդները տեղեկացնում են, որ Շամբալայում ապրող ճգնակյացները հասել են անհավանական հոգևոր կատարելության: Նրանք վիթխարի գիտելիքներ են կուտակել Տիեզերքի և Բնության օրենքների, անցյալի ու ապագայի մասին: Նրանք կարող են ճամփորդել Տիեզերքում, ապրել ուրիշ մոլորակների վրա, գոյատևել Տիեզերքի ավելի նուրբ աշխարհներում: Իրենց այս բոլոր անսովոր գիտելիքները իմաստունները գաղտնի են պահում, որպեսզի տգետները և իշխանություն տենչացող մարդիկ դրանք չգործածեն ի վնաս մարդկության: Ինչպես հայտնի է, ցանկացած գյուտ կարելի է գործածել ինչպես բարօրության, այդպես էլ չարիք գործելու համար: Սրա վառ օրինակը ատոմային էներգիայի գյուտն է, որ օգտագործվել է տարբեր կերպ՝ ինչպես լույս ու ջերմություն տալու, այդպես էլ քաղաքներ կործանելու համար:

Իմաստունների Գաղտնի Կացարանի մասին լեգենդը արմատներով հասնում է մինչև հինավուրց ժամանակներ և հանդիպում է աշխարհի շատ ժողովուրդների պատկերացումներում:

«Այս բառի հետ (Շամբալա) Արևելքում կապվում են ամենաերանելի զգացումներ, այն բացում է բարեկամության և մեծագույն վստահության դարպասներ: Ավելորդ է ասել, թե Գրահալի և Ճերմակաջրության, Ճերմակ Կղզի Եղբայրությունը, երեց Հովհաննի թագավորությունը և տասնյակ այլ անվանումներ, ինչպես են դարաշրջանների հերթագայության ընթացքում տեղակայվել ժողովրդական գիտակցության, ռասսաների և ազգությունների մեջ, տրոհվելով սրանց հոգևոր զարգացմանը, հասկացողությանը և ազգային բնավորությանը համապատասխան, անփոփոխ կերպով կապված հենց այս Լույսի Պատվարի հետ, որ դարեր շարունակ ամենավեհ հույսերով ու նվիրական սպասումներով խանդավառել է բոլոր ժամանակների բոլոր ժողովուրդների մարդկանց:

Այսպես, օրինակ, հին չինական գրություններում կարդալով, որ կայսր Յույ Մեծը (XXIII դ մթա), ազնվաբարո միստիկը և մեծն ադեպտը իր գիտելիքներն ստացել է «ձյունե լեռնաշղթայի մեծ Ուսուցիչներից»՝ Սիցզանում (Տիբեթում), որտեղ անհիշելի ժամանակներից գոյություն ուներ բարձրագույն գիտելիքի կենտրոնը, մենք, անկասկած, սա կկապենք հենց Շամբալայի հետ: Եթե վեդայականները և բուդդայականները խոսում են Տրայաստրիշնայի երկինքների կամ Տաուլիտյանի՝ հին Վեդաների երեք աստվածների կացարանի կամ Տուշիտի մասին, որտեղ ապագայի Մայտրեյա Բուդդան՝ Աշխարհի Տիրակալն է լինում կամ Նիրմանարատիի, Վայկունտխի երկինքների մասին կամ Դեջունգի՝ «Երանության և իմաստության ակունքի» կամ էլ աստվածների սրբազան լեռան՝ Կայլասի կամ մերուի մասին, որոնց հետ ժողովրդի կոնկրետ գիտակցությունը կապում է պատկերացումն այս սուրբ կացարանի հետ, ապա քրիստոնյանե-

ը խոսում են Երկնային Երուսաղեմի և Սիոն լեռան մասին, իսկ մուսուլմանները՝ Երկնային Կահաբի և Սրբերի Ժողովքի նվիրական սահմանի մասին, որ հանդիսանում է Երկրային Կահաբի նախատիպը: Այսպես թե այնպես, սրանք բոլորն էլ կապված են այս բարձրագույն հասկացության հետ»[1]:

Ով ասես չի որոնել այս հանելուկային երկիրը: Այն փորձել են գտնել բուդդայական վանականները և ուխտավորները, ճիզվիտական միսիոներները և չինական փիլիսոփաները: Շամբալան փնտրել են Հիմալայան լեռներում, Պամիրում, Ավղանստանում, Ալթայում, Գոբի անապատում: XX դարում նրա որոնումների համար տարբեր երկրներից ուղարկվել են գիտական արշավախմբեր, այդ թվում՝ դեպի Տիբեթ գաղտնի արշավախմբեր են ուղարկել ռուսական Էնկավեդեն և ֆաշիստական Անաներբեն:

Հին չինական դաոիստական առասպելը պատմում է հիասքանչ Տեբու երկրի մասին, որ կորսված է Տիբեթում: Համարվում է, որ հին չինական փիլիսոփա Լաո ցզին իր նշանավոր «Դաո դէ-ցզին» տրակտատը՝ Բացարձակի մասին գրել է Շամբալա (Տեբու) կատարած ուխտագնացության ազդեցության տակ: Իսկ տարեց հասակում Լաո ցզին վերադարձել է այնտեղ:

Վկայություն կա այն մասին, որ Պյութագորասը ճամփորդության է դուրս եկել դեպի հիմալայան իմաստունները՝ Մահաթմաները: Եվ նորպլատոնական փիլիսոփա Ապոլոնիոս Թիանացին նույնպես այցելել է Շամբալա:

Շամբալայի մասին հիշատակություններ կան հին հնդկական սուրբ տեքստերում՝ Վեդաներում, Պուրաններում, Մահաբհարատայում:

Ըստ բուդդայական պատմական ժամանակագրությունների՝ հիմալայան իրական թագավորություն Շամ-

բալան՝ Կալապա մայրաքաղաքով գտնվել է Հյուսիսային Հնդկաստանում և գոյատևել է մինչև XIV դ.: Շամբալայի մասին հիշատակություններ կան Կալաչակրա-տանտրայի տեքստում՝ թվագրված X դ.: Ինչպես ասում է բուդդայական տրադիցիան, այդ մագաղաթը վերաբերում է Շամբալա Սուչանդրա թագավորի ժամանակներին. նա Կալաչակրայի իր ուսուցումն ստացել է հենց Բուդդայից:



Տիբեթական Տաշի-Լամա Երրորդի կողմից XVIII դ. գրվել է «Ճանապարհ դեպի Շամբալա» գիրքը:

Արևմտյան ժամանակագիրներն արձանագրել են Կոնստանդին Մեծի, ինչպես նաև Էմանուիլ կայսեր ստացած լուրերը Շամբալայից:

Խաչակրաց արշավանքներից վերադարձած խաչակիրները նույնպես Եվրոպա լուրեր են բերել խորհրդավոր Շամբալայի և Մահաթմաների մասին: Ժամանակի ընթացքում դրանք վեր են ածվել «Գրահալի ամրոցը» ասքապատումին: Այնտեղ ապրում են սուրբ ասպետները, որ պահպանում են «Գրահալի գավաթը»: Գավաթի վրա իջնում է Երկնային Հուրը, որը չարի դեմ պայքարելու ուժ է տալիս: Ասպետները լսում են կանչը և շտապում են նեղյալներին օգնելու: Սրա մասին է պատմվում գերմանացի կոմպոզիտոր Ռիխարդ Վագների «Պարսիֆալ» և «Լոէնգրին» օպերաներում:

Հռոմի XII–XIII դ.դ. քրիստոնեական եկեղեցին կառավարող պապերը մի անգամ չէ, որ Հովհան Երեցի (Այսպես էր անվանում իրեն Ասիայի խորհրդավոր Հոգևոր Կենտրոնի Մեծ Ուսուցիչը) կողմից մերկացնող հավատարմագրեր են ստացել: Պապերից մեկը հովանավորել է դեպի Միջին Ասիա ուղևորված դեսպանությանը, որը երկար որոնումներից հետո վերադարձել է ձեռնունայն՝ առանց Հոգևոր Կացարանը գտնելու:

Վկայություններ Շամբալայի մասին հանդիպում են նաև եվրոպական գիտնականների աշխատանքներում: Շամբալայի գոյության մասին գրել է XVII դ.-ի պորտուգալացի ճիզվիտական միսիոներ Կասելլան, որ 23 տարի ապրել է Տիբեթում: Տիբեթյան լամաները նրա նկատմամբ այնքան խորը հարգանով են համակվել, որ նույնիսկ նրան առաջարկել են ճամփորդել դեպի Շամբալա:

Հունգար բանասեր և ճանապարհորդ Չոմա դե Կյորոշը, որ ապրել է XVIII դարավերջին և XIX դարասկզբին, նույնպես շատ տարիներ է անցկացրել Տիբեթում: Իր աշխատանքներում նա հիշատակել է սրբազան ուսմունքի մասին, որ Շամբալայից է: Նա նույնիսկ ճշգրիտ ցույց է տվել խորհրդավոր երկրի ճշգրիտ կոորդինատները:

Չին գիտնական հնագետ Լառձինը բախտ է ունեցել XX դ.- սկզբում լինելու գաղտնի հիմալայան Կացարանում: Իր տպավորությունները նա գրի է առել մի հոդվածում, որ տպագրվել է «Շանհայ թայմս» թերթում Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հոդվածը առաջ էր բերել ամբողջ աշխարհի հասարակայնության հետաքրքրությունը:

Ռուսական տարեգրություններում, որ պահպանվել են Տամբովի գուբերնիայի հնագույն Վիշենսկո-Ուսպենսկի վանքում, հիշատակվում է դեպի Շամբալա վանական Սերգիյի արշավախմբի մասին: 987 թ. դեպի Արևելք արշավախումբ է ուղարկել կիևյան իշխան Վլադիմիրը՝ որոնելու համար Թագավորական Ճերմակ Ջրերը կամ Ճերմակաջրությունը: Հայր Սերգիյը այդ ժամանակ 30 տարեկան էր, իսկ Կիև վերադարձավ 56 տարի անց, երբ արդեն խորը ծերության մեջ էր: Մահվանից առաջ Սերգիյը խոսել է Ճերմակաջրության մասին և պատվիրել է այդ վկայությունները հաղորդել հաջորդներին, երբ հասնի դրանց բացելու ժամանակը: Միայն XIX դ.-ի վերջին հայտնի դարձավ «Սրբազան պատումներ Ճերմակաջրության մասին»-ը:

XVIII դարում ամբողջ Եվրոպան ցնցված էր կոմս Սեն Ժերմենի տաղանդներով: Կոմսը Շամբալայի պատգամախոսն էր, որ մեծ ազդեցություն էր թողել ամբողջ համաշխարհային պատմության վրա: Թվում էր, թե Սեն Ժերմենը չի ծերանում՝ արտաքուստ 45 տարեկան էր: Իզաբել Կուպեր-Օուկլիի «Կոմս Սեն Ժերմենը: Արքաների գաղտնիքները» գրքում, որ գրվել է 1911 թ. վկայություններ կան այն մարդկանց մասին, ովքեր տեսել են կոմսին: Դա վերաբերում է 1710-1822 թվականներին:

Հիմալայան Մահաթմաների հետ իրենց կապի մասին բացահայտորեն հայտարարում էին XIX – XXI դարերի նշանավոր մարդիկ:

Մեծ Ուսուցիչների առաջին պատգամախոսը, որ Արևմուտքին լուր բերեց Մեծ Ճերմակ Եղբայրության մասին, եղավ Ելենա Պետրովնա Բլավատսկայան: «Լուսավորյալ» հասարակության թշնամանքով ու տգիտությամբ շրջապատված, նա իսկապես հերոսական ինքնազոհություն ցու-

ցաբերեց իր առաքելությունը կատարելիս, այն է՝ մարդկությանը ծանուցել հին Ուսմունքի մասին, որը բացահայտում է աշխարհի իրական գիտափիլիսոփայական պատկերը:

Ուսուցիչներ Մորիայի և Կութ Հումիի ղեկավարությամբ Ե.Պ. Բլավատսկայան կազմակերպեց թեոսոֆիական միություն, որը երկար տարիներ զբաղվում էր հոգևոր լուսավորչական գործունեությամբ և ձեռք էր բերել տասնյակ հազարավոր հետևորդներ ամբողջ աշխարհում: Ելենա Բլավատսկայայի գլխավոր աշխատությունը «Գաղտնի Դոկտրինն» է:

Բացի Ե.Պ.Բլավատսկայայից մեծ ճերմակ Եղբայրությունը իրենց գրքերում նկարագրել են նաև թեոսոֆիական միության այլ երևելի հասարակական գործիչներ: Նրանց թվում են Ջաջ Ուիլյամը, Հենրի Օլկոտտը, Աննի Բեզանտը, Չարլզ Լեդբիտերը, Ալիսա Բեյլին, Ռուդոլֆ Շտեյները, Չարլզ Ջոնսթոնը և ուրիշներ:

Առանձին գիտելիքներ Արևմուտքում հայտնի դարձան Մեծ Իմաստունների և բրիտանական լրագրող Ա.Պ Սիննեթի նամակագրությունից: Ուսուցիչների փոխանցած գիտելիքների հիման վրա Ա.Պ. Սիննեթը գրեց «Էզոթերիկ բուդդայականություն» գիրքը: Հետագայում այս նամակագրությունը լույս է տեսել «Մահաթմաների նամակները» վերնագրով:

XIX – XX դարերի վերջում Ուսուցիչ Հիլլարիոնի ղեկավարությամբ սրանով զբաղվեց ամերիկացի թեոսոֆ Ֆրանչիա Լա դյուն: Նա հիմնեց «Մարդկության տաճար» միությունը, որի նպատակն էր Ե.Պ Բլավատսկայայի սկսած գործը շարունակելը, և գրի առավ «Տաճարի ուսմունքը»:

20-ական թվականներին Ռերիխ ամուսնական զույգն իր հիմալայան արշավի ընթացքում հանդիպեց Հոգևոր Ուսուցիչների հետ: Ելենա Իվանովնային և Նիկոլայ Կոնստանտինովիչին վստահված էր նոր գիտելիքները աշխարհ բերելու

առաքելությունը: Նշանավոր նկարիչ, փիլիսոփա և ճանապարհորդ Ն.Կ. Ռերիխն իր գրքերում հաղորդում էր Մահաթմաների և նրանց երկիր Շամբալայի մասին: Իր բազմաթիվ գեղարվեստական կտավներում նա դրոշմում էր Ճերմակ Եղբայրության նշանները: Ե. Ի. Ռերիխը, պայծառալսության օգնությամբ Մահաթմա Մորիայից ընդունել էր Ագնի Յոգայի կամ Կենդանի Բարոյագիտության Ուսմունքը և այն փոխանցեց ամբողջ աշխարհին: Կենդանի Բարոյագիտության Ուսմունքը հաղորդում էր, որ եկել է հրե էներգիաների և հնարավորությունների Նոր Դարաշրջանը, և գիտելիք էր տրվում այն մասին, թե ինչպես մարդը պատրաստվի նոր էներգիաների ընդունմանը:

XX դարում Մեծ Ճերմակ Եղբայրությունը շարունակում էր աշխատել նաև ուրիշ մարդկանց հետ, որոնք վաստակել էին նոր Ճշմարտություններն աշխարհին ավետելու իրավունքը: Ամերիկայում այդ կարգի բանագնացներ դարձան Գայ և Էդնա Բալլարդները, իսկ այնուհետև Մարկ և Էլիզաբեթ Պրոֆետները, Բուլղարիայում Պյոտոր Դոնովը և նրա աշակերտ Օմրաամ Միքայել Այվանխովը:

Բացառություն չէր նաև XXI դարը: Մեծ Ուսուցիչների գիտելիքների հաղորդման ավանդույթ առաջարկեց Տատյանա Նիկոլաևնա Միկուշինան, որ հրապարակեց իր ստացած Գիտելիքը «Իմաստության Գրքով»:

Վերևում թվարկված աղբյուրները վառ կենդանի վկայությունն են Մեծ Ճերմակ Եղբայրության հետ համագործակության: Դրանցից որոշները ավելի հանգամանալից կքննարկվեն այս գրքում: Բացի դրանից գրքում հատվածներ են բերվում այն գրական ստեղծագործություններից, որոնք բացահայտում են Ուսմունքի ասպեկտները և մարդկության Մեծ Ուսուցիչների գործունեությունը:

Կրոնական տեքստեր
և ժողովրդական էպոս



Ժողովրդական էպոսը ժողովրդի հիշողությունն է իր հերոսական անցյալի, Մեծ Ոգիների, առաջնորդների, հսկաների մասին, որ ինչ-որ ժամանակ ապրել են մարդկանց մեջ և հանդիսացել են իրենց ժողովրդի իդեալը, առաջադրել են կյանքի հոգևոր ուղիներ, եղել են պաշտպաններ ու հովանավորներ: Լեգենդներում և ավանդություններում կենտրոնանում էին ժողովրդի ամենավեհ երազանքներն ու սպասումները: Եվ սակայն յուրաքանչյուր լեգենդի հիմքում ընկած է իրականությունը, թեկուզև ժամանակի ընթացքում գունազարդված ու ձևափոխված, սակայն ավելի ճշմարտացի, քան այն պատմությունը, որ խեղաթյուրվել է ի շահ իշխող խավի:

Այսպես էլ հին կրոնները դարերի ընթացքում վերածվելով դոգմաների և ծեսերի, պահպանել են ուսմունքի էությունը և նախնիների կյանքի մանրամասները: Այս պատճառով էլ այդ աղբյուրները, որ հազարմյակներով պահպանել են նվիրական գիտելիքները, մեզ համար անգին վկայությունների գանձարան են:

Հին հնդկական և բուդդայական աղբյուրներ

Հին հնդկական փիլիսոփայական մատյանները՝ Վեդաները, Պուրանները, Մահաբհարատան[1] ամենահին հայտնի տեքստերից են (Չհաշված հին եգիպտականները): Դրանք կրոնական, փիլիսոփայական հայացքների և ժողովրդական էպոսի սինթեզն են հանդիսանում:



Վկայությունները հին հնդկական աղբյուրներից, Ձեռնադրվածների Եղբայրության, Նրանց Բնակատեղի Շամբալայի, ինչպես և հետագայում Շամբալայից Կալկա Ավատարի՝ ժողովուրդների փրկչի գալստյան մասին իր աշխատություններում հավաքել է ռուս գիտնական, նկարիչ և գրող Նիկոլայ Կոնստանտինովիչ Ռերիխը: Նա գրում է.

«Հիշենք ինդուսական ավանդույթները: Կալկա Պուրանները մատնանշում են Կալկա Ավատարին, որը կգա: *«Ըստ ձեր ցանկության՝ ես ծնվելու եմ Շամբալա վայրում... Ես նորից երկրի վրա կկանգնեցնեմ երկու տիրակալների՝ Մարուին և Դեվապիին: Ես նորից կհաստատեմ Սատիա Յուգային և կվերականգնեմ Դհարման[2]՝ իր նախկին ուժով: Կալի յուգայի պարտությունից հետո ես կվերադառնամ իմ կեցության վայրը». <...>*

Շրիմադ Բհագավաթն իր VI գրքում ասում է. *«Այս մեծ Ռիշաները և մյուս մեծ ճգնավորները, որ ինքնակամ անհայտ էին մնում, ընթանում են Երկրով մեկ՝ նպատակ ունենալով հոգևոր լույս հաղորդել նրանց, որ հետևում են մեծ պատվիրաններին». <...>*

Վիշնու Պուրանիները խոսում են Կալի Յուգայի վերջի մասին, երբ բարբարոսները տիրելու են Հնդկաստանի ափերին:

«Եվ աշխարհում լինելու են ժամանակավոր միապետներ, կռվասեր, դաժան վարքի տեր թագավորներ, որ հակված կլինեն ստի և չարիքի <...>

Ունեցվածքը կլինի միակ չափանիշը: Հարստությունը խոնարհվելու պատճառ կլինի: Տարբեր սեռերի միջև միակ միությունը կիրքը կլինի: Սուտը դատարանում հաջողության միջոց կլինի: Կանայք միայն ցանկասիրության առարկա կլինեն: Հարուստը մաքուր կհամարվի: Հագուստի շքեղությունը արժանապատվության նշան կլինի...

Այսպես կալի Յուգայում կլինի անընդհատ անկում...Եվ այդժամ սև դարի ավարտին կհայտնվի Կալկի Ավատարը... Նա Երկրի վրա արդարություն կհաստատի... այնժամ կվերադառնա Սատիա-ճերմակ դարը»[1].

Հին հնդկական «Մահաբհարատա» էպոսի երրորդ գրքում՝ Արանյակապարվայում (Անտառային գիրք) Մարկանդեյայի բերանով նույնպես հաղորդվում է մեծ արքա Կալկի Վիշնույաշասեի մասին, որ ծնվելու է Սամհալա ավանում և կվերածնի Ոսկե Դարը (նոր Յուգան).

«Ժամը կհնչի, և կհայտնվի երկու անգամ ծնվածը՝ Կալկի Վիշնույաշաս անունով: Նա օժտված կլինի մեծ ուժով, խելքով և հպորությամբ: Նա աշխարհ կգա արժանավոր բրահմանական ընտանիքում՝ Սամբհալա գյուղում և ոգու ուժով կվերածնի վենք և ամեն տեսակի փոխադրամիջոցներ, վինվորական հագուստ, զրահապգեստներ: Այդ դհարմայով հաղթանակող թագավորը կընդունի գլխավոր իշխանությունը և փոթորկվող աշխարհին հանգիստ կբերի: Փայլատակող բրահմանը, բարձր նպատակադրումներով, հայտնվելով (աշխարհին), վերջ գտնի ավերմանը: Այսպես համընդհանուր կործանումը կդառնա Յուգայի (նորի) սկիզբը».

Հետագայում Մարկանդեա իմաստունի այս մարգարեական պատմությունը փոխառվում է, լրացվում և հարմարեցվում որոշ բուդդայական դպրոցների կողմից: Բուդդայականության մեջ Սամբհալան Շամբալան է: Սա արդեն ոչ թե միայն ավան է, այլ հրաշալի երկիր, որը կառավարում է Սուչանդրա արքան: Շամբալան վեդական Հնդկաստանից տեղափոխվում է Տիբեթ: Իսկ Կալկի Վիշնույաշասը բուդդայականության մեջ համընկնում է «ապագա Բուդդայի» Մայտրեայի հետ:

[1] Н.К. Рерих. Сердце Азии. – М.: «Свет», 2019. – 180 с.

Շամբալան երևում է Կալաչակրա-տանտրայի բուդդայական սուրբ տեքստերում, որոնք պարունակում են ապագայում Երկրի վրա տեղի ունենալիք իրադարձությունների մասին մարգարեություններ, իսկ «Շամբալայի արքաները» նկարագրվում են որպես մարդկության Նախահայրեր և Ուսուցիչներ, ովքեր մարդկանց փոխանցում են իրենց ուսմունքները կամ սրբազան տեքստերը, որոնցից մարդիկ իրենց համար կրոններ են ստեղծում: Այդ Ուսուցիչներից են Բուդդաները և Բոդխիսատվաները[2], որ գոյություն ունեն Կալապայում՝ Շամբալայի մայրաքաղաքում: Դրանց թվում

են Բուդդա Շակյամունին (Հաութամա), Մայտրեյա Բուդդան, Ամիտաբհա Բուդդան[2],Պադմասամբհավան և ուրիշներ, այդ թվում նրանք, որ ծնվել են «հրաշքով»[3]:

«Գաղտնի դոկտրինում» հաղորդվում է. «Մայտրեան Հինգերորդ Բուդդայի և բրահմինների Կալկի Ավատարի՝ վերջին Մեսիայի նվիրկան անունն է, որ կգա Մեծ Շրջափուլի ավարտին»: «Այդ Բոդխիսատվան կհայտնվի որպես Մայտրեյա Բուդդա՝ Ավատարներից կամ կամ Յոթերոդ Ռասայի Բուդդաներից վերջինը: Դա ամբողջ Արևելքի հավատամքն է ու սպասումը: Բայց ոչ Կալի Յուգայում՝ խավարի մեր մատերիալիստական սարսափելի դարում՝ «Սև Դարում» կարող է Նոր Փրկիչ հայտնվել»[3]:

Հիշատակումներ քրիստոնեության մեջ և իսլամում

Քրիստոնեության մեջ Մեծ Ճերմակ Եղբայրության մասին հիշատակումը ենթադրաբար կարելի է հանդիպել «ճերմակ հագուստով» սրբերի կապակցությամբ:

Աստվածաշնչում «Հովհաննու Հայտնությունում» գրառված է Հովհաննու տեսիլքը: Նրան հայտնված ՏԵՐԸ «Ես եմ Ալֆան և Օմեգան, Առաջինն ու Վերջինը», որի մազերը ձյան պես ճերմակ են», ցույց է տալիս ապագա Ապոկալիպսիսի պատկերներ:

Այն մարդկանց մասին, որ չեն պղծել իրենց հագուստը, ՏԵՐԸ ասում է.«Նրանք Ինձ հետ քայլելու են ճերմակ հա-

[2] Բուդդա (սանսկրիտով՝ արթնացած), հոգեւոր կատարելության ամենաբարձր աստիճանը. Բոդհիսատվա (սանսկրիտով՝ արթնացման ձգտող էակ), էակ (կամ մարդ) որը որոշել է դառնալ Բուդդա՝ հանուն բոլոր շնչող էակների բարօրության:

գուստով, քանի որ արժանի են դրան: Հաղթողը կզգեստավորվի ճերմակ հագուստով (Հայտնություն, 3:4-5): Աստծո խոսքի համար սպանվածների հոգիներին՝ «նրանցից յուրաքանչյուրին տրվել էին ճերմակ հագուստներ» (Հայտն. 6:11): Հայտնության 19-րդ գլխում միանգամայն հիշարժան է «Արքայից արքայի» նկարագրությունը, որ հիշեցնում է ինդուսների Կալկի Ավատարին, որ հայտվելու է Կալի Յուգայի ավարտին, որպեսզի ոչնչացնի սխալ ապրածներին և երկրի վրա արդարություն հաստատի:

«Եվ տեսա երկինքը բացված, և ահա մի ճերմակ ձի, որի հեծյալը Հավատարիմ ու Ճշմարիտ է կոչվում ու արդարությամբ է դատում ու պատերազմում:

Եվ Նրա աչքերը կրակի բոցի պես էին, ու նրա գլխի վրա շատ թագեր կային ու գրված մի անուն ուներ, որ Իրնից բացի ոչ ոք չգիտի: Եվ արյան մեջ թաթախված պատմուճան էր հագել, ու նրա անունն է ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ:

Ու երկնքում գտնվող զորքերը Նրա ետևից էին գնում ճերմակ ձիերով՝ ճերմակ ու մաքուր բեհեզներ հագած:

Եվ Նրա բերանից մի սրված սուր էր ելնում, որ դրանով հարվածի ազգերին. Նա երկաթե գավազանով կիշխի նրանց վրա և կկոխոտի Ամենակալ Աստծո ահեղ ցասման գինու հնձանը:

Եվ իր պատմուճանի ու ազդրի վրա գրված էր. «Թագավոր Թագավորների և Տեր Տերերի»: (Հայտնություն, 19:11-16)

Ղուրանում նույնպես խոսվում է «ճերմակ զգեստների» մասին, որ անհարժեշտ են արդարակյաց Կյանքի համար:

«Հագեք ճերմակ հագուստ. Իսկապես այն ձեր հագուստներից լավագույնն է...»: (աթ. Թիրմիզի, Աբու Դավուդ, Իբն Մաջահ):



«Ինչ վերաբերում է ճերմակ հագուստի հաճելիությանը, ապա այն ակներև է: Ինչ վերաբերում է նրան, որ այն ամենամաքուրն է, ապա դրա պատճառն այն է, որ ամենաչնչին կեղտը ճերմակի վրա երևում է, և դա անմիջապես լվանում են...» (Աշ-Շավքանի)

«Օ՜վ Ալլահ, մաքրիր ինձ իմ մեղքերից, ինչպես որ ճերմակ հագուստը մաքրեցիր կեղտից»: (Իմամ ակ-Բուխարի, Մուսլիմ)

Լեգենդ Սուրբ Գրահալի մասին

Սուրբ Գրահալի մասին լեգենդը ծնունդ է առել XII-XIII դարերում՝ կելտական և նորմանդական ժողովուրդների մեջ, որ բնակվում էին Եվրոպայի տարածքում: Գրահալի լեգենդի ծագման և նշանակության մասին մանրամասն ուսումնասիրություն է կատարել Ռ.Յա.Ռուձիտիսը. լատիշ գրողը ավելի քան քսան տարի է նվիրել Մեծ Ճերմակ Եղբայրության մասին վկայությունների որոնմանը: Գրողը հաստատում է, որ «Գրահալի մասին լեգենդի մեզ հասած ամենահին վերարտադրությունը Կրետյեն դե Տրուայի ֆրանսերեն վեպն է: Այս ստեղծագործությունն օգտագործել է Վոլֆրամ ֆոն Էշենբախն իր վեհաշուք պոեմում՝ Պարցիֆելի մասին, ու նաև ուրիշ հեղինակներ: Անգլիայում այս լեգենդը միահյուսվել է Արթուր թագավորի և Կլոր Սեղանի ասպետների ասքերին: Տրուբադուրները և միջնադարյան ժողովրդական պոեզիան Գրահալին գովերգում են որպես վեհագույն և նվիրական հասկացություն»[3]:

Լեգենդները պատմում են այն մասին, որ Եվրոպայի կամ Արևելքի անհասանելի վայրերում գտնվում է «փրկության լե-

ռը» (Մունսալվեշը կամ այլ ավանդություններում՝ Մոնսալվաթը[3]): Նրա գագաթին գտնվում է Հաստատուն ամրոցը՝ Գերագույն Եղբայրության կացարանը: Սուրբ Հոգու բոցը ամեն օր իջնում է Գրահալի ամրոցի վրա՝ շուրջը աներևակայելի լույս սփռելով: Սրբազան հրաշագեղ այս տաճարում Եղբայրությունը պահպանում է Գրահալի Գավաթը՝ կախարդական արտիֆակտը, որ իր պահապանին մատակարարում է այն ամենն, ինչ նա խնդրում է: Նրան նայելով՝ մարդն ազատվում է հիվանդություններից ու վնասվածքներից, երիտասարդանում է և հավերժական երիտասարդություն է ձեռք բերում:

Հազվագյուտ մարդիկ կարող են ընկնել այդ սրբազան վայրը. Շատերի համար այն պարզապես աներևույթ է:

«Այս խորհրդավոր վայրը, այս Եղբայրությունը կարող են մուտք գործել միայն սրտով մաքուրները, ովքեր մեծ նվիրվածություն են ցուցաբերել Բարձրագույնին՝ իրենց սրտի համակերպումով, հեզությամբ, ինքնազոհությամբ, թույլերին օգնելու ձգտումով, բարու համար պայքարով և վերջապես, ովքեր ամբողջ կյանքում պայքարել են հանուն սրբազան Գրահալի արժանապատվության: Մի խոսքով, նա, ով կատարելագործել է բարձր առաքինություններն իր աշխարհային կյանքում, և ում ոգին ընդունակ է հաղթահարելու այս աշխարհի բոլոր գայթակղությունները: ...Գրահալի ասպետ և պահապան դառնալը մեծ պատիվ է և բարձրագույն ձեռքբերում, որ մատչելի է մարդու համար այստեղ՝ Երկրի վրա»: Հիշենք, որ XII-XIII դարերը միջնադարի ամենախավար ժամանակն էր, երբ կաթոլիկ եկեղեցին բացառիկ անհանդուրժողականություն էր դրսևորում այլախոհության որևէ արտահայտման հանդեպ. Հավատաքննությունը հերետիկոսներին այրում էր խարույկի վրա, իսկ դեպի Արևելք Խաչակ-

րաց արշավանքների ընթացքում «Հանուն Տիրոջ» ոչնչանում էին տասնյակ հազարավոր «անհավատներ»: Սուրբ Եղբայրության մասին լեգենդը յուրատեսակ հակակշիռն էր եկեղեցու դաժանությունների և ժողովրդի մեջ հսկայական ճանաչում ուներ: Ռ.Յա. Ռուձիտիսը հաղորդում է. «Եղբայրության անդամները Գրահալի Գավաթի միջոցով ուղիղ հաղորդակցության մեջ էին մտնում Բարձրագույն Կամքի հետ՝ առանց եկեղեցու միջնորդության: Յուրաքանչյուրին, ովքեր կարդացել են Գրահալի մասին պոեմները, զարմացնում է նաև մեծ հանդուրժողականության ոգին, մի բան, որ միանգամայն հակառակ էր կաթոլիկականությանը: Հատկապես սա անհասկանալի է թվում Խաչակրաց արշավանքների դարաշրջանում՝ «անհավատ Արևելքի» դեմ, հատկապես արևելյան կրոնների՝ մահմեդականության նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսանկյունից: Եղբայրության կրոնը թվում է՝ բարեկամաբար է վերաբերում բոլոր կրոններին՝ որպես ինչ-որ սինթետիկ էզոթերիկ ուսմունք, գնոզիս, որոշ չափով նման այն գերագույն խորհրդավոր գիտելիքին, որ հիմնված է սիրո վրա, որ Քրիստոսը սովորեցնում էր իր աշակերտներին»:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Գրահալի Գավաթը: Վկայությունները տարբեր են:

Ոմանք համարում են, թե «գավաթով, որ պատրաստված է ամբողջական զմրուխտի կտորից, Քրիստոսը՝ իր աշակերտների հետ ընդունել է սուրբ հաղորդությունը, և սրա մեջ հետագայում Հովսեփ Արիմաթեացին հավաքել է Խաչվածի արյունը: Բանտարկված Հովսեփին այս գավաթը բերել է Ինքը՝ Քրիստոսը՝ հայտնվելով նրան կուրացուցիչ փայլով. Գրահալի լույսը ողողել է բանտի ամբողջ շինությունը: Երկար տարիների ընթացքում Գրահալը Հովսեփին կեն-



դանի էր պահում՝ առանց ուտելիքի, մինչև նրան, որ մեռած էր համարվում, գտան կենդանի՝ վերերկրային լույսով ողողված և ազատ արձակեցին բանտից...»:

Միջնադարի եվրոպական այլ հեղինակների համար սա «երկնային քար» էր կամ «լույսի քար», որ երկիր էր բերվել հրեշտակների մի դասի կողմից, որ այնպիսի փայլով է հայտնվում, որի առջև «խամրում է աշխարհային ողջ լույսը»: Դա կարող է երկնաքարի (մետեորիտի) նման ինչ-որ բան լինել, որ հայտնվել է ուրիշ, հնարավոր է՝ ավելի բարձր աշխարհներից, որ հագեցած են բարձրագույն էներգիայով: Նմանօրինակ քարի մասին շատ է խոսվում արևելյան լեգենդներում...»:



Իսկապես էլ, արևելյան լեգենդները, որ կապվում են Շամբալա հասկացության հետ, խոսում են «Աշխարհի Գանձի»՝ Չինտամանիի կամ «մտածող Քարի» մասին»: Ըստ ավանդությունների երկնաքարը Երկիր է ուղարկվել բարձր զարգացած քաղաքակրթության կողմից՝ Օրիոնի համաստեղությունից և կանգ է առել երկրային Շամբալայի հիմքում: Քարը օգնում է հեռավոր աշխարհներից եկող թրթիռներին»[3]: Եվ եթե հիմնական քարը Շամբալայում է գտնվում, նրա ոչ մեծ բեկորները կարող են տեղակայվել աշխարհով մեկ: Եղբայրության անդամների շնորհիվ Քարից մի կտոր հայտնվում է այն վայրերում, որտեղ անհրաժեշտ է դնել ապգա առաջադեմ փոփոխությունների հիմքը: Քարը պաշտպանում է երկիրը, որտեղ գտնվում է:

Ն.Կ. Ռերիխն իր «Ասիայի սրտում» աշխատության մեջ գրում է. «Մեծն Թիմուրը, ասում են տիրել է այդ Քարին: Քարը սովորաբար բերվում է միանգամայն հասարակ մարդկանց կողմից: Հենց նույն անսպասելի ճանապարհով էլ հարկ եղած պահին անհետանում է, որպեսզի նորից հայտնվի նշանակված պահին բոլորովին այլ երկրում: Այդ Քարի գլխավոր մասը Շամբալայում է գտնվում: Միայն նրա մի փոքրիկ մասն է, որ տրված է և շրջում է աշխարհով մեկ՝ գլխավոր Քարի հետ պահպանելով մագնիսական կապը: Այս Քարի մասին շռայլորեն անվերջանալի առասպելներ են ցրված: Ասվում է նաև, որ Սողոմոն արքան և կայսր Ակբարը տիրել են նրան: Այս ավանդությունները ակամայից Լապիս Էկսիլիսին հիշեցրել են թափառող Քարը, որ գովերգել է Վոլֆրամ ֆոն Էշենբախը և իր ավարտական երգն վերջացրել է հետևյալ բառերով.«Եվ այդ Քարը կոչվում է Գրահալ»[3]:

Հայտնի է, որ Ռերիխներն ստացել են Չինտամանիի Քարը Փարիզում և ապա 1923-28 թվականներին դրանով ուղևորվել են Կենտրոնական-Ասիական արշավին:

Այսպիսով՝ Շամբալան Արևելքում, իսկ Սուրբ Գրահալը Արևմուտքում սրբազան հասկացություններ էին և նվիրական իդեալներ, որոնց ձգտում էին ժողովուրդների սրտերը: Իսկ Գրահալի Գավաթը, որ բազում այլ անվանումներ ունի, ինչպես՝ երկնային Քար, Չինտամանի, Ալքիմիկոսների փիլիսոփայական քար, իրականում գոյություն ունի:

Ասքեր Ճերմակաջրի մասին

Ճերմակաջրի գոյության հավատալիքը՝ սուրբ ճգնավորների միավորումը, պահպանվել է ժողովրդական, հատկապես XVII–XIX դարերի հին ծիսական ավանդություններում: Երբ XVII դարում ռուս միտրոպոլիտ Նիկոնը սկսեց եկեղեցական վերափոխումները, եկեղեցուց ետ մղվեցին շատ ուղղափառներ, այսպես կոչված՝ հնադավան-հերձվածողներ, որ չէին ընդունում նոր ուղղությունը: Նրանց պատկերացումներով աշխարհում կար մի ինչ-որ վայր, որտեղ ճշմարիտ հավատը պահպանվում էր նախեղակ տեսքով: Այդ վայրը անվանվում էր Ճերմակ Լեռներ, Ճերմակ Կղզի կամ Ճերմակ Աղբյուր՝ Ճերմակաջուր: Այդ Հրաշալի երկիրը, որտեղ ապրում էին առաքինի տիրակալներ, անվանում էին նաև Արդարության Բարեշնորհության Երկիր, Լուսավոր Ոգիների Երկիր, Ճերմակ ջրերի և Բարձր լեռների Երկիր:

Ըստ Ռ.Յա. Ռուձիտիսի՝ «Սպիտակ Լեռան մասին խոսում էր դեռևս ռուս մեծ Լուսավորիչ Սերգիյ Ռադոնևսկին՝

ռուսական հոգևոր մշակույթի շինարարը, որ այսպիսով հավատացյալ սրտերում բոցավառում էր երազանքի ճառագայթը. Սակայն այդ հրաշալի լեռան գտնվելու տեղը նա երբեք չի ցույց տվել»[3]:

Ուր ասես, որ չեն տեղակայել բազում ասացողներն այս լեգենդար երկիրը: Նրա տեղանքը ներկայացնում էին Ծայր Հյուսիսում, Ուրալում, Սիբիրում, Մոնղոլիայում, Ճապոնիայում («Օպոնյան թագավորությունում»):

Ռուսական հնահավատների Ճերմակաջուրը նման է լեգենդար հիմալայան Շամբալային:

Գիտնական, գրող Վ.Ն.Դյոմինը, ուսումնասիրելով սրբազան երկրի տեղանքը, գրում է.«Շամբալան՝ կիսալեգենդար խորհրդավոր այս երկիրը, Իմաստության, Ունիվերսալ գիտելիքի և Երջանկության նախահայրենիքն է: Սակայն ռուս ժողովուրդը Ոսկե դարի այս առասպելաբանությանը մոտեցել է իրեն ավելի մոտ ու հասկանալի կերպարների միջոցով: Դարուց դար ռուս ժողովուրդը, երազելով լավ կյանքի մասին, հայացքը հառել է դեպի Հյուսիս: Ըստ շատ գրասերների, քարոզիչների ու պարզապես երազողների, հենց այստեղ էր գտնվում օրհնյալ այս երկիրը, որ համեմատվում էր երկրային դրախտի հետ: Տարբեր անվանումներ էին տալիս սրան: Ամենից շատ հայտնի է հյուսիս-ռուսական լեգենդը Ճերմակաջրի մասին:

Սկզբում ավանդույթը նրան տեղակայում էր Սառուցյալ օվկիանոսի շրջանում (ջրավազանում): Արդեն «Մազուրական տարեգրում» նշվում է, որ ռուս իշխաններ Սլովենը և Ռուսը, որ կառավարում էին Ռյուրիկից շատ առաջ, «տիրում էին հյուսիսային հողերին՝ ամբողջ Պոմորիեում ու մինչև մեծ Օբ և մինչև Ճերմակաջուր ջրի գետաբերանը, ու այդ

ջուրը ճերմակ էր կաթի պես...»: Հին ռուսական գրություններում «Կաթի երանգ»[3] ունի այն ամենը, ինչ վերաբերում է Սառուցյալ օվկիանոսի ձյունապատ տարածքներին, որոնք հենց տարեգրություններում հաճախ անվանվում էին Մալոչնի (Կաթե):

Ճերմակաջրի ավանդությունների առավել հին ծիսական տարբերակներում (հայտնի են ընդամենը 10 ցուցակ՝ երեք խմբագրումներով), խոսվում է հենց Սառուցյալ օվկիանոսի մասին). Նիկոնի՝ մոսկովյան պատրիարքի եկեղեցական պաշտոնի փոխակերպման ժամանակ – հին հավատի հետևորդները փախչում էին Սոլովեցկի կացարանից և Ռուսական պետությունից ոչ քիչ թվով: Սառուցյալ ծովով նավերով մեկնում էին տարբեր կոչումով մարդիկ, իսկ ուրիշներն էլ՝ ցամաքային ճանապարհով, ու այդպիսով լցվեցին այդ վայրերը»: Մի այլ տարեգրության մեջ ավելի կոնկրետ վկայություններ են բերվում Բելովոդիեի բնակիչների՝ (գաղութաբնակների) մասին: «Վերաբնակներն ապրում են օվկիան-ծովի խորքերում: Վայրը կոչվում է Բելովոդիե, և՛ շատ լճեր կան և՛ յոթանասուն կղզիներ: 600 վեր ստի վրա կղզիներ են, ու նրանց միջև՝ լեռներ: Իսկ նրանց միջանցքը Զոսիմից էր և Սավվատիայից սոլովեցկյան նավերով՝ Լեդսկոե ծովով»: Հետագայում փոխվեցին Բելովոդիեի տեղանքի մասին պատկերացումները: Ռուս ճամփորդողները, որ երազում էին գտնել Երջանկության Երկիրը, այն փնտրում էին Չինաստանում, Մոնղոլիայում, Տիբեթում և «Օպոնյան Պետությունում»[3]:

Ռուս նշանավոր գրող Պ.Ի. Մելնիկովի ստեղծագործություններում բերված է աբեղա Մարկի ձեռագիրը, իր՝ Սիբիրով և Գոբի անապատով «Օպոնյան պետություն» կատարած

ուխտագնացության մասին: Այդ երկիրը նա անավանում է Բելովոդիե. «Աշխարհում կան Աստծո փրկած նվիրական վայրեր ու քաղաքներ, որտեղ հաստատապես և անխախտ կերպով պահպանվում է «հինավուրց պատվարժանությունը», և ուղղահավատ եպիսկոպոսները փայլում են արևի պես: Այդ վայրերում կողոպուտ, գողություն և այլ օրենքին հակառակ բաներ չեն լինում: Դատարան չունեն, ժողովրդին և բոլոր մարդկանց կառավարում են հոգևոր իշխանությունները...Աստված է լիացնում այդ տեղը»[3]...

Գրող և նկարիչ Ն.Կ.Ռերիխը գրի է առել ալթայական հնադավանների լեգենդը, որում խոսվում է այն մասին, որ

[3] Мельников-Печерский П.И. Полное собр. соч. Т. XIII. М., 1898, с. 31. Приводится по кн.: Рудзитис В.Я. Братство Святого Грааля.

Բելովոդիե տանող ճանապարհն ընկած է Ալթայով դեպի Հիմալայներ. «Այստեղից կգնաս Իրտիշի և Արգունյայի միջով...Եթե չմոլորվես, կհասնես աղի լճերին... Ու դու կհասնես մինչև Բոգոգորշի լեռները, իսկ այդտեղից կսկսվի ավելի դժվարին ճանապարհը: Եթե դա էլ հաղթահարես, կհասնես Կոկուշի: Այնուհետև ճամփա՛ ընկիր հենց Երգորով դեպի ամենաձյունոտ երկիրը, իսկ ամենաբարձր լեռներից այն կողմ կլինի սրբազան հովիտը: Հենց դա էլ Բելովոդիեն է...Հեռավոր աշխարհներում, մեծ լճերից այն կողմ, բարձր լեռներից այն կողմ գտնվում է սրբազան վայրը, որտեղ ծաղկում է արդարությունը: Այնտեղ է ապրում Բարձրագույն գիտելիքը և Բարձրագույն Իմաստությունը՝ մարդկության ամբողջ ապագայի փրկության համար: Այդ վայրը կոչվում է Բելովոդիե: Շատ մարդիկ են գնացել Բելովոդիե: Մեր պապերն էլ են գնացել...Երեք տարով կորչում էին և հասնում մինչև սուրբ վայրը: Բայց նրանց չէր թույլատրվում այնտեղ մնալ, ստիպված վերադառնում էին: Եվ բացի այդ՝ իրենց տեսած հրաշքների մասին չէր կարելի պատմել»[4]:

XIX դարի վերջին հնադավանների շրջանում տարածվեց Արևելքում հայր Սերգիյի կողմից Բելովոդիեի որոնման լեգենդը: Լեգենդը գրի առավ Գ.Դ. Գրեբենշչիկովը 1893 թ.՝ հայր Վլադիմիրի պատմածը, որ Տամբովյան գուբերնիայի Շացկի գավառում գտնվող Վիշենսկի Ուսպենսկի տղամարդկանց անապատի վանական էր:

Իշխան Վլադիմիր Կիևսկին այնքան էր հմայված Արևելքում գտնվող հանելուկային պետության՝ Ճերմակ Ջրերի Թագավորության մասին լեգենդով, որ 987 թ. Բելովոդիեն

[4] Н.К. Рерих. Сердце Азии. – М.: «Свет», 2019. – 180 с.

գտնելու համար կազմեց մի մեծ ջոկատ՝ հայր Սերգիյի գլխավորությամբ, որ այն ժամանակ 30 տարեկան էր:

Հայր Սերգիյը Կիեվ վերադարձավ 1043 թ., երբ արդեն խորը ծերության մեջ էր: Նա պատմել է, որ երկրորդ տարվա վերջում արշավախմբի շատ անդամներ մահացել են կամ հիվանդություններից, կամ էլ զոհվել են: Մեկ տարի էլ անց հայր Սերգիյն արդեն չափից դուրս հյուծված էր, բայց որոշել էր հասնել նպատակակետին և ապա մեռնել: Վանականը հասավ մինչև Բելովոդիեի սահմանը՝ աղից ճերմակած ափերով լճին: Այստեղ ուղեկիցը, որ սարսափահար էր, հրաժարվեց շարունակել ճանապարհը: Սերգիյը շարունակեց միայնակ քայլել դեպի արգելված տարածքի խորքը:

Հանդիպած մարդիկ Սերգիյին տարան ավան, որտեղ նա որոշ ժամանակ հանգստանալուց հետո սկսեց զբաղվել իր հոգուն հարազատ գործով: Շատ չանցած նրան տեղափոխեցին ուրիշ ավան, որի բնակիչները Սերգիյին եղբոր պես ընդունեցին: Այնուհետև նրան տանում էին ուրիշ ավաններով: Սերգիյը կորցրել էր ժամանակի զգացումը: Անցնում էին ամիսներ, տարիներ, ռուս վանականը ձեռք էր բերում նորանոր գիտելիքներ, մինչև տուն դառնալու կարգադրություն ստացավ:

Մահվանից առաջ՝ վերջին խոստովանության ժամանակ, իր խոստովանահորը հաղորդեց Բելովոդիեի մասին: Եվ պադգամեց չհաղորդել հաջորդներին՝ մինչև այնքան ժամանակ, երբ հարկավոր կլինի աշխարհին բացել գաղտնի գիտելիքը:

Ահա թե ինչ է պատմել հայր Սերգիյը.

Բելովոդիե երկիրը հեքիաթ չէ, այլ՝ իրականություն: Ժողովուրդների ասքապատումներում այն ամենուրեք տար-



բեր անվանումներ ունի: Այդ Հրաշալի կացարաններն այցելում են լուսաշող, հեզ, խոնարհ, համբերատար, կարեկցող, գթասիրտ և պայծառատես Մեծ Իմաստուններ՝ այն Բարձրյալ Աշխարհի աշխատակիցները, որտեղ ապրում է Աստծո Ոգին: Դրանք Մեծ Սուրբ ճգնավորներ են, որ միացել են Տիրոջ հետ և Նրա հետ կազմում են մեկ Ոգի, անդադար աշխատում են՝ քրտինքն ի ճակատ, բոլոր երկնային Լուսավոր Ուժերի հետ միատեղ՝ հօգուտ աշխարհի բոլոր ժողովուրդների բարենորոգման:

Այնտեղ է Մաքուր Հոգու, գեղեցկության, հրաշք կրակների, վեհ, հմայիչ գաղտնիքների, ուրախության, լույսի, սիրո, ուրույն անդորրի և անհասանելի բարձունքների Թագավորությունը...

Բոլոր տեղերից բազմաթիվ մարդիկ են ձգտում Արգելված երկիր, բայց հարյուր տարին մեկ այնտեղ կարողանում են թափանցել միայն յոթ կանչվածներ, նրանցից վեցը վերադառնում են՝ իրենց հետ տանելով նվիրական գիտելիքներ, նոր զգացողությունների զարգացում, հոգու և սրտի շողարձակում, և մեկն է միայն մնում: Այնտեղի մարդիկ ապրում են այնքան, որքան ուզում են, և որքան իրենց պետք է: Նրանց համար ժամանակը կանգ է առել:

Ինչ որ աշխարհում կատարվում է, նրանց ամեն ինչ հայտնի է, ամեն ինչ տեսանելի է ու լսելի: Երբ իմ ոգին ամրացել էր, ինձ հնարավորություն տվեցին մարմնից դուրս գտնվել ամենաբարձր լեռան վրա, Ցարգրադում, Կիևում ու նաև իմանալու, տեսնելու և լսելու, ինչ որ ուզեմ...

1000 տարի դժոխքի ուժերը կատաղի զայրույթով մոլեգնած հարձակվելու են և մինչև հիմերը ցնցելու են մեր Ռուսաստանը... Մաքուր Լույսի, աներկրային հրո ուժերը կգետ-

նեն թշնամիներին: Կենդանի կրակները կամոքեն երջանիկ երկրի վերքերը: Հնի ավերակների վրա կվերածնվի Մեծ Ժողովուրդը՝ հարուստ ոգու գեղեցկությամբ: Լավագույն ընտրյալները Աստծո Խոսքը կտանեն աշխարհի բոլոր երկրները, աշխարհին խաղաղություն կտան և կբացեն Ապագա Դարի Կյանքի Դարպասները»:

2043 թվականին կլրանա այս կանխատեսման 1000-ամյակը...

Շամբալան որոնողները և նրա հյուրերը

Որոնողները

Վաղ ժամանակներից մինչև մեր օրերը շատերն են որոնել խորհրդավոր երկիրը: Հիշատակենք միայն մի քանիսին՝ ժամանակով մեզ առավել մոտ եղողներին:

Համառ որոնողներից մեկն է եղել ռուս ճանապարհորդ Նիկոլայ Միխայլովիչ Պրժևալսկին (1839-1888): Նա հակված էր Շամբալայի ծագման և տեղանքի վերաբերյալ հյուսիսային տարբերակին: Իր գրառումներում Պրժևալսկին ասում է. «Մի շատ հետաքրքիր լեգենդ կա Շամբալայի մասին՝ մի կղզու, որ գտնվում է Հյուսիսային ծովի ծայրին: Այնտեղ շատ ոսկի կա, իսկ ցորենը զարմանալի բարձրության է հասնում: Այդ երկրին հայտնի չէ, թե ինչ է աղքատությունը. Իսկապես այդ երկրում կաթն ու մեղրը հոսում են գետերով»:[5]

Բացի Պրժևալսկուց՝ լեգենդար երկիրը փորձել են գտնել նաև Գ.Ն. Պոտանինի և Պ.Կ.Կոզլովի մոնղոլական արշա-

վախմբերը: Այս ճանապարհորդների օրագրային գրառումներում այսօրինակ պատմություններ են հանդիպում Գոբի անապատի գաղտնի վայրի մասին, որտեղ մեկուսացած ապրում են իմաստունները:

1903 թ. Ռուսական աշխարհագրական ընկերությունը հրապարակեց մի բրոշյուր՝ «Ուրալյան կազակների ճամփորդությունը դեպի Բելովոդյան թագավորություն»: «Այն գրել է ուրալյան կազակ Գ.Տ.Խոխլովը, որ 1898 թ. իր երկու ընկերների հետ հեռավոր ճոմփորդություն է կատարել դեպի Պաղեստին, Ցեյլոն, Հնդկաչին և Ճապոնիա՝ Սպիտակաջրությունը որոնելու: Այս բրոշյուրի նախաբանում գրող Վ.Գ Կորոլենկոն նշել է, որ Բելովոդիեի մասին լեգենդը «նոր չէ և վաղուց է ցնցում հասարակ սրտերը՝ իր հրապուրիչ-երազանքային հմայքով»: Նրա վկայությամբ անցած դարի ողջ ընթացքում «եղել են դեպքեր, երբ Ալթայի երկրամասի գյուղերից (Բուխտարմինսկի մարզի) մարդիկ գնում էին սահմանից այն կողմ «Բելովոդիեն» գտնելու համար»[5]:

Շամբալայի որոնումները շարունակվում են նաև մեր օրերում: Այսպես, միստիկական երկրի գաղտնիքներն իմանալու համար 1999թ. Տիբեթ՝ Կայլաս լեռան շրջան ուղևորվեցին ռուս գիտնականների և լեռնագնացների արշավախմբերը, որ կազմակերպել էր Ռուսական աշխարհագրական միությունը: Արշավախմբի ղեկավար Է.Ռ. Մուլդաշևն իր տպավորություններն ու եզրակացությունները նկարագրել է մի շարք գրքերում ու ֆիլմերում:

Ժամանակակից մոնղոլ հետազոտող Շ. Մյագմարցերենը համոզված է, որ Շամբալան գտնվում է ներկայիս Մոնղոլիայի տարածքում: 1984 թ.-ից սկսած իր կյանքի ավելի քան 30 տարին նա նվիրել է Շամբալայի գտնվելու վայրի ուսում-

նասիրությանը: Նա իր աշխատակիցների հետ մեկտեղ հայտնաբերել է 243 այդպիսի հնարավոր վայր: Հետազոտողը, իր իսկ խոսքերով, նույնիսկ գտել է դեպի այդ թագավորությունը տանող մուտքը: Շ.Մյագմարցերենը պատմում է.«Ըստ լեգենդի Շամբալա խորհրդավոր երկիր տանող երեք մուտք կա՝ Տիբեթ՝ Կայլաս, Ալթայ՝ Բելուխա և Գոբի անապատ: Մի քանի տարի առաջ Շաամ լեռան մոտ ես պատահաբար գտա Շամբալայի հանելուկային երկիր տանող մուտքը: Ես միայն մի քիչ գնացի այդ ստորգետնյա ճանապարհով...Ելքը նեղ էր: Երբ անցա 3-4 մետր, թունելի չափը մեծացավ, որ թույլ տվեց քյլել ուղիղ կեցվածքով: Պետք է նշել, որ այն կատարելապես հարթ էր, կարծես սարքված էր մարդու ձեռքերով: Բջջային հեռախոսի լապտերիկով չկարողացա տեսնել թունելի ծայրը:

Հաջորդ ամառ ես նորից եկա նույն տեղը, որ անցնեմ թունելով...Մուտքը փակված էր մի հսկայական քարով: Ստացվում է՝ դեպի այդ հանելուկային երկիր տանող ճանապարհը բացվում և փակվում է ինչ-որ ժամանակ»[5]:

Ինչպես տեսնում ենք, բոլոր որոնողները չեն, որ ընկնում են հանելուկային այս երկիրը, այլ միայն նրանք, որ կանչված են, ում թույլ է տրվում հասնել այնտեղ:

Ո՞վ էայցելել Շամբալա

Մենք արդեն վերևում հիշատակեցինք Լաո Ցզիին, Պյութագորասին և Ապոլոն Թիանացուն, ովքեր եղել են Եղբայրության Աշրամներում[5]: Վկայություններ կան նաև այլ նշանավոր անձանց մասին: Շամբալայում լինելուց հետո աշխարհ վերադառնալով, նրանք բերում էին նոր գիտելիքներ, իսկ նրանց կյանքը վեր էր ածվում ծառայության մարդկության: Արևելքի որոշ մագաղաթներում խոսվում է բոլոր համաշխարհային կրոնների և շատ փիլիսոփայական ուսմունքների հիմնադիրների և Շամբալայի հոգևոր Ուսուցիչների միջև կապի մասին:

Ահա թե ինչ է գրում Նատալյա Կովալյովան իր «Այցելե՞լ է արդյոք Քրիստոսը Շամբալա» հոդվածում. «Այսպես էլ Բուդդայական որոշ աղբյուրներում խոսվում է այն մասին, որ Բուդդան իր քարոզչական աշխատանքն սկսելուց առաջ այցելել է Շամբալա՝ մեծ ռիշիների (իմաստունների) կացարանը և այնտեղ ստացել է Մեծ Ձեռնադրումը: Քիչ չեն այն աղբյուրները, որտեղ ասվում է, թե Արևելքի հոգևոր կացարան է այցելել նաև մյուս Մեծ Ուսուցիչը՝ Քրիստոսը: Կան պատմական փաստաթղթեր, որոնց իրական լինելը գիտականորեն ապացուցված է, որտեղ խոսվում է այն մասին,որ հայրենիքից բացակայելու ընթացքում Քրիստոսը եղել է ոչ թե Եգիպտոսում, այլ Հնդկաստանում: Հին ձեռագրերից մեկում, որ գտնվել է տիբեթյան վանքում՝ Նիկոլայ Նոտովիչի կողմից, խոսվում է այն մասին, որ Քրիստոսը, ճամփորդելով Հնդկաստանում և Տիբեթում, եղել է այն շրջաններում, որ ըստ տարածքի գտնվում են «Պահպանվող հովտի» (Հնդկաստանում այսպես են անվանում այն մարզը, որտեղ գտնվում է Շամբալան) մոտակայքում: <...>

1887 թ., Տիբեթում ճամփորդելիս, Նիկոլայ Նոտովիչը մի քանի օրով կանգ է առել հին լամայական Մաուլբեկ վանքում, որ գտնվում է Լադակ գավառում: Վանքի հովիվը՝ լուսավորյալ, կիրթ մի անձնավորություն, նրան ցույց է տվել մի շատ հին ձեռագիր, ասելով, որ այն պատմում է Հիսուսի պատանեկության տարիների մասին: Տեքստում Նա անվանվում է Իսսա: Լրագրողին շատ է հետաքրքրել ձեռագիրը և Հեմի վանքի գիտնական վանականի օգնությամբ դա թարգմանել է ֆրանսերենի: Վերադառնալով Եվրոպա՝ Նոտովիչը հրապարակում է «Քրիստոսի անհայտ կյանքը» գիրքը, որի մեջ ամփոփված էր ձեռագրի ամբողջ թարգմանված տեքստը: Քանի որ տարբերակը շարադրված է Նոտովիչի կողմից, էականորեն տարբեր է Քրիստոսի կյանքի մասին եկեղեցա-

կան ուսմունքից, իր աշխատանքը հրատարակելու ընթացքում նա հանդիպել է Եվրոպայի և Ռուսաստանի կղերական ուժեղ հակդրությանը»[5]:

Եթե անաչառ ուսումնասիրենք աշխարհի առավել հայտնի կրոնների հիմնական դրույթները, մենք իսկապես կտեսնենք դրանց նմանությունը, կարծես դրանք տրված լինեն նույն հոգևոր Ակունքից:

Սա վերաբերում է նաև առաջադեմ գիտական հայտնագործություններին: Տաղանդավոր շվեյցարացի բժիշկ և միջնադարյան ալքիմիկոս Պարացելսը, բազում ճանապարհորդություններից վերադառնալով, իսկական հեղափոխություն կատարեց բժշկության մեջ: Նա բուժում էր այնպիսի հիվանդների, որոնց առողջացնելու ոչ մի հույս չկար:

Ըստ Ռերիխի պնդման «Պարացելսը մի քանի տարի էր անցկացրել Տրանս-Հիմալայան կենտորններից մեկում և ձեռք էր բերել այն մեծ գիտելիքը, որ հետագայում շարադրել է բազում հատորներում՝ հաճախ խորհրդանիշերով, քանի որ մեծ էր եկեղեցու հարձակումը գիտելիքի այդ լուսատուների դեմ: Նրա բոլոր ստեղծագործությունները թարգմանվել են գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն: Գիտնականներից և բժիշկներից շատերը նրանից գիտելիքներ են քաղում, հաճախ լռելով աղբյուրի մասին»[5]:

«Դոկտոր Լառձինի Կյանքի Տաճարը»

XX դարասկզբին չին գիտնական-հնագետ Լառձինին բախտ վիճակվեց լինել հիմալայան գաղտնի ավանում: Նա իր տպավորությունները նկարագրել է «Շանհայ թայմս»

թերթում տպագրված հոդվածում՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Լառձինի հոդվածը հետագայում վերատպեցին շատ եվրոպական և ամերիկյան թերթեր: Ներկայացնենք մի պատմություն «Շամբալան առասպել չէ» գրքից այդ ճամփորդության մասին.

«Իր հոդվածում Լառձինը մանրամասնորեն պատմում է ավան կատարած իր ճամփորդության մասին, որը նա անվանել է «Կյանքի տաճար», և որը անհասանելի է սովորական մարդկանց համար: Չին գիտնականը գրել է այն մասին, որ այդ հանելուկային ավանը գտնվում էր Կուն Լուն քիչ հայտնի բարձրավանդակում՝ Տիբեթի ամենադժվարանցանելի շրջանում: Դեպի «Կյանքի Տաճար» նրան ուղեկցել է նեպալցի մի յոգ, որի կյանքը նա մի անգամ փրկել էր, և նա որպես շնորհակալություն սուրբ ճգնավորներին խնդրել էր թույլ տալ գիտնականին տեսնել իրենց բնակատեղին: Լառձինի խոսքերով՝ յոգը պատրաստվում էր իր մնացյալ կյանքն անցկացնել այդ հոգևոր կացարանում:

Տիբեթյան ճամփորդությունը գիտնականի և նրան ուղեկցող յոգի համար ամենևին հեշտ չէր: Իր հոդվածում այսպես է Լառձինը նկարագրում իր ճամփորդությունը.

«Գոբի անապատով և Հյուսիսային Տիբեթի դժվարանցանելի լեռնշղթաներով երկու ամիս ճամփորդելուց հետո մենք վերջապես հասանք ինչ-որ ձյունապատ սարավանդի՝ մոտավորապես 15 հազար ֆուտ ծովի մակերևույթից բարձր: Մեծ էր մեր զարմանքը, երբ հեռավոր ցածրում մենք տեսանք կանաչ մի հովիտ, որի բերքատու բնությունը և ջերմությունը ապշեցուցիչ հակադրություն էին կազմում լերկ ձյունապատ լեռների հետ, որոնց մեջ մենք գտնվում էինք: Այդ հովտում մենք տեսանք յուրօրինակ ճարտարապետությամբ շինութ-

յուններ, որոնք մեկ կարմացնում էին: Հովտի մի կողմում մենք տեսանք մի մեծ խումբ գեղեցիկ շենքեր, որոնք ավելի բարձր էին, քան ծառերի կատարները: Հենց այստեղ, ինչպես ես հետո իմացա, գտնվում էր հիշյալ «Կյանքի Տաճարը»՝ գրադարանի շենքի, աստղագիտական աշտարակի (շատ նման նրանց, որ կառուցվում էին հին խալդական իմաստունների կողմից), լաբորատորիաների և այլ կառույցների հետ միասին: Սև բազալտից և մոխրագույն գրանիտից այս շինությունները, հիմա կանգուն են այնպես, ինչպես կանգուն էին Չինգիզ Խանի ժամանակ: Դրանք ավելի հին են, քան Մեծ Չինական պարիսպը, ավելի հին են, քան ամենահին հնդկական շինությունները, գուցեև ավելի հին, քան եգիպտական բուրգերը»:

Ըստ դոկտոր Լառձինի վկայության՝ Շամբալայի համայնքը գտնվում է Հյուսիսային Տիբեթի ծաղկուն, բերքատու հովտում՝ շրջապատված անհասանելի լեռներով: Նա այնտեղ տեսել է մոտ երկու հարյուր իմաստունների և նրանց աշակերտներին, որ ապրում էին բազալտից ու գրանիտից կառուցված շենքերում և պատկանում էին քսան տարբեր ազգությունների: Նրանց մեջ գերակշռում էին տիբեթցիները, հնդիկներն ու չինացիները, կային նաև վեց ռուս, մի քանի իրանցի, մի ֆրանսիացի, մի բելգիացի և մի հոլանդացի: Լառձինը գրում է, որ բոլոր ճգնակյացները, որ ապրում էին այդ վայրում, լռության ուխտ ունեին, սրբորեն պահպանում էին իրենց տեղանքի գաղտնիքը: Այս պատճառով էլ, ինչպես ավելացնում է գիտնականը, այս հանելուկային վայրը մինչև մեր օրերը մնում է աշխարհի մեծագույն գաղտնիքներից մեկը: *«Պատահական ճամփորդները, որ հասնում էին այդ սրբական վայրը, կամ մնում էին այնտեղ ընդմիշտ, կամ մեռնում էին՝ դժվարություններից կամ ետդարձի ճանապարհի*

գրկանքներից: Այն քչերը, ում վիճակված էր վերադառնալ, կապված էին երդմամբ՝ չբարձրաձայնել որևէ բան այն ամենից, ինչ տեսել ու լսել էին»,- նշում էր Լաոձինը: Չին գիտնականը գրում էր նաև, որ ուղեկցորդ յոգի ցույց տված «Կյանքի Տաճարի» նշանակությունը մարդկային ոգու հնարավորություններն ուսումնասիրելն էր.

«Կարող է պատահել, որ դա Երկրի վրա միակ վայրն է, որտեղ տարբեր հավատալիքներ ունեցող մարդիկ կարող են հանդիպել՝ միավորված լինելով ընդհանուր ձգտումներով և իրենց ամբողջ ուժերը կենտրոնացնել այն խնդիրների լուծման վրա, որոնք մեծագույն նշանակություն ունեն ամբողջ մարդկության բարօրության համար»,- ասվում էր Լաոձինի հոդվածում: Չինացի հնագետը նշում էր նաև, որ հրաշագեղ հովտի բնակիչներն ապրում էին մնացյալ ամբողջ աշխարհից առանձնացած ու անկախ: Կյանքի ու աշխատանքի համար անհրաժեշտ ամեն ինչ նրանք ստեղծում էին սեփական աշխատանքով: Դոկտոր Լաոձինի խոսքերով, ճգնավորներն ու նրանց աշակերտները իրենք են մշակում հողը, մշակում բանջարեղեն ու մրգեր. Իրենք են գործում հագուստի համար անհրաժեշտ գործվածքները: Նրանք բացառապես բուսական սնունդ են ընդունում: Ստորգետնյա տաք աղբյուրների շնորհիվ, որ հոսում են դեպի մակերես, հովտում մշտապես տաք է: Նրա հողը շատ բերքատու է և կարող է մի քանի հարյուր մարդ կերակրել:

Բնակավայրի ամենամեծ արժեքը ներկայացնում է հսկայական գրադարանը՝ բազմաթիվ ձեռագրերով, ինչպես նաև քարտեզներով ու այլևայլ սարքավորումներով, որ օգտագործվում են գիտական ուսումնասիրությունների համար:

Դոկտոր Լառձինին թույլատրված էր Շամբալայի հովտում ապրել երեք ամիս: Այդ ընթացքում նա վկան էր պսիխոէներգետիկ անսովոր ֆենոմենների: Նա եղավ Եղբայրության գրապահոցներից մեկում, որտեղ պահպանվում էին հազվագյուտ մագաղաթներ՝ աշխարհի հնագույն լեզուներով: Այդ ձեռագրերից շատերի հետ նա չկարողացավ ծանոթանալ, քանի որ տիրապետում էր միայ չինարենին, մոնղոլերենին և ռուսերենին: Չինացի գիտնականին թույլատրված էր նաև դիտել տարբեր լաբորատորիաներ՝ զարմանահրաշ սարքավորումներով և գործիքներով: Նա այցելեց աստղադիտարան և նշանավոր աշտարակը, որ նկարագրված է ուրիշ հեղինակների կողմից, որ եղել են Շամբալայում:

Նկարագրելով իր տպավորությունները՝ Լառձինը հիմնականում կանգ է առել արտաքին մանրամասների վրա, ընդգծելով, որ տարբեր հոգևոր ֆենոմենների մասին, որի վկան է եղել, իրեն թույլատրված չէ պատմել:

Հետազոտողը սահմանափակվել է միայն պարանորմալ ոգեկան այն, հնարավորությունների համառոտ թվարկումով, որ հատուկ են բնակավայրի բնակիչներին՝ պայծառատեսություն, պայծառալսություն, տելեպատիա և այլ բարձր ունակություններ: Նա հիշատակում է նաև այն անսովոր փորձարկումների մասին, որոնց իրեն թույլատրված էր ներկա լինել: Այս փորձարկումների ընթացքում նա տեսել է, թե այնտեղի մարդիկ ինչպես են ոչ միայն ազատորեն թռչում օդում, այլ նաև անտեսանելի էին դառնում ֆիզիկական տեսողության համար: Լառձինը նաև հիշատակում է այն մասին, որ այն ադեպտների կյանքի ժամկետը, որ բնակեցրել են այս հրաշագեղ հովիտը, հարյուրներով է հաշվվում, ու չնայած դրան՝ նրանք բոլորն էլ միջին տարիքի մարդկանց տեսք ունեն»[5]:

* * *

Ինչպես տեսնում ենք, սրբազան Շամբալան հիշատակվում է ինչպես հնագույն գրական կրոնական աղբյուրներում և շատ ժողովուրդների էպոսում, այնպես էլ այն ականատեսների վկայություններում, որ եղել են իմաստունների գաղտնի բնակավայրում: Ինչպես ավետում է մարգարեությունը, Շամբալայից է դուրս գալու ինդուսների Կալկի Ավատարը՝ Նոր Մեսիան կամ աշխարհի փրկիչը: Այս կերպարը հոմանիշն է հանդիսանում բրահմինների՝ Սպիտակածի Մեսիայի և բուդդայականների Մայտրեյայի, ինչպես նաև կապվում է պարսիկների Սոսիոշի, քրիստոնյաների Հիսուս Քրիստոսի, ասիական ժողովուրդների Հեսեր-Խանի, ամերիկյան հնդիկների Իսկական Սպիտակ Եղբոր հետ:

Շամբալայի գոյության ապացույցներն այնքան շատ են, որ դրանք հնարավոր չէ անտեսել: Այն մարդու համար, որ հավատացել է և խորացել է գաղտնիքի ուսումնասիրության մեջ, բացվում են աշխարհաշինության իսկապես հրաշալի երևույթներ և կեցության նոր իմաստներ: Ու նաև նոր հարցեր են առաջանում: Ովքե՞ր են Շամբալայի Մեծ Ուսուցիչները: Ի՞նչ տեսք ունեն նրանք: Արդյոք նրանք միշ աշրամներում են լինում, թե՞ հայտնվում են սովորական մարդկանց մեջ: Ինչպե՞ս է տեղի ունենում Ուսմունքի փոխանցումը: Ո՞րն է Մեծ Ուսուցիչների Ուսմունքի էությունը: Այս և այլ հարցեր կլուսաբանվեն այս գրքում այսուհետև:

Խորհրդավոր կոմս
Սեն Ժերմենը



Կոմս Սեն Ժերմենի գործունեությունը վառ օրինակն է այն բանի, թե ինչպես են Ճերմակ Եղբայրության Ուսուցիչները անմիջականորեն մասնակցում եվրոպական և ասիական ժողովուրդների կյանքին: Ե.Պ. Բլավատսկայան «Թեոսոֆիական բառարանում» նշում է, որ «կոմս Սեն Ժերմենը, անկասկած, հանդիսանում է Արևելյան մեծագույն Ադեպտը, որ երբևէ հայտնվել է Եվրոպայում»: Ե.Ի.Ռերիխը իր նամակներում Սեն Ժերմենին անվանում է «Հիմալայան Համայնքի անդամ, Գիտելիքի ու Լույսի պատվար»:

Կոմսը XVIII հարյուրամյակի ամենահանելուկային մարդն է համարվել: Նրա՝ գաղտնիքներով լեցուն կյանքը, անորոշ տարիքը, որ բազմաթիվ ասեկոսեների պատճառ էին դառնում, և նրա շփումները գրեթե բոլոր միապետների, Եվրոպայի ու Ասիայի քաղաքական գործիչների հետ, մասնակցությունը այդ ժամանակի մի շարք խոշոր քաղաքական իրադարձություններին, դիվանագիտական գործունեութ-

յունը, բազմաթիվ տաղանդները և ընդունակությունները, գիտական ուսումնասիրությունները և տեխնիկական հայտնագործությունները, մարգարեական շնորհը, այս ամենը աներևակայելի է թվում մեկ մարդու համար:

Նրա ծննդյան ու մահվան տարեթվերը ծածկված էին գաղտնիքով: Թվում էր՝ կոմսը չի ծերանում: Իզաբել Կուպեր-Օուկլիի «Կոմս Սեն Ժերմենը: Արքաների գաղտնիքները» գրքում, որ գրվել է 1911 թ, բերվում է կոմսին տեսած մարդկանց վկայությունները: Դրանք վերաբերում են 1710-1822 թվականներին: (Նկատենք, որ 1710 թ. այդ հանելուկային մարդն արդեն արտաքուստ 45 տարեկան էր)[5]:

Սեն Ժերմենը խոսում էր բազմաթիվ լեզուներով, ընդ որում այնքան ազատ, որ նրան որպես բնիկ էին ընդունում այն երկրներում, որոնց լեզուներով նա խոսում էր: Այդ լեզուների թվին էին պատկանում ֆրանսերենը, անգլերենը, գերմաներենը, իտալերենը, իսպաներենը, փորթուգալերենը, ռուսերենը, սանսկրիտը, հունարենը, չինարենը, արաբերենը և այլն: Նա այնքան լավ պատմություն գիտեր, կարծես բոլոր այն իրադարձությունների մասնակիցն էր եղել, որոնց մասին պատմում էր:

Կոմսը վիրտուոզ վարպետությամբ ջութակ ու դաշնամուր էր նվագում՝ առանց նոտաների, ընդ որում՝ ոչ միայն ռոմանսներ, այլ բարդագույն կոնցերտներ: Հրաշալի նկարում էր յուղաներկով: Իր իսկ ստացած ներկերը նրա կտավներին յուրահատուկ փայլ էին հաղորդում, նրա կերպավորած մարդկանց զգեստները թանկարժեք քարերի նման ճաճանչում էին:

Սեն Ժերմենը հմուտ բժիշկ էր և բույսերի բուժիչ հատկությունների գիտակ: Նա կարողանում էր շտկել թանկարժեք քարերի թերությունները:



Կոմսը մի շարք հայտնագործություններ է արել գիտության և տեխնիկայի բնագավառում: Օրինակ վուշը սպիտակեցնելու նրա տեխնոլոգիայով հյուսվածքը նմանվում էր իտալական մետաքսի, իսկ նրա մշակած կաշիները նման էին լավագույն սաֆյանի: Սեն Ժերմենը հորինեց մետաքսե և բրդյա գործվածքների ներկման այնպիսի ձևեր, որ նախկինում երբեք չէին եղել, ներկում էր անսովոր գույներով, նաև՝ հյուսող հաստոց և շատ այլ հարմարանքներ ու տեխնոլոգիաներ:

Լյուդովիկոս XV–ը այնքան բարձր էր գնահատում Սեն Ժերմենի արվեստը ալքիմիայի ոլորտում, որ նրան հատուկ լաբորատորիա և նստավայր էր հատկացրել Շամբորի ար-

քայական պալատում: Կոմսի ալքիմիական սեանսները ժամանակակիցների վկայությամբ ոչ այլ ինչ էին, քան հրաշագործություններ:

Սեն Ժերմենի ճանապարհորդությունների աշխարհագրությունն ընդգրկում է Եվրոպան, Ասիան, Աֆրիկան, նա անչափ հետաքրքրվում էր Ամերիկայով: «Նա շրջել է ողջ աշխարհը,- գրել է տիկին դը Պոմպադուրը, - և արքան ողորմածաբար լսում էր նրա պատմությունները Ասիա և Աֆրիկա կատարած ճամփորդությունների, Ռուսաստանի, Թուրքիայի, Ավստրիայի արքունիքների մասին»:

Սեն Ժերմենի կենսագրության բարդ կողմերից մեկը կապված է քաղաքականության հետ: Մերթ նա գտնվում է Նադիր Շահի պարսկական արքունիքում՝ բարի ազդեցություն գործելով մանրախնդիր և կասկածամիտ տիրակալի վրա, մերթ ծառայում է Ֆրանսիային, մերթ օգնում է Անգլիային, մերթ համագործակցում է Պրուսիայի հետ, մերթ ամուր կապերի մեջ է ավստրիական արքունիքի ներկայացուցիչների հետ, մերթ օգնում է Ռուսաստանում հեղշրջում իրականացնելուն և այլն... Նրա արարքները ղեկավարվում են պատմական իրողությունների իմացությամբ, քաղաքական նուրբ դիտողականությամբ ու կանխատեսումներով: Նա միշտ համաշխարհային պատմության իրողությունների կիզակետում է և միշտ զբաղված է խախտված հավասարակշռությունը կարգի բերելով:

Այսպես, արքա Լյուդովիկոս XV-ը Սեն Ժերմենին է հանձնարարում Ֆրանսիայի և Անգլիայի մջև խաղաղություն հաստատելու առաքելությունը՝ առաջինին աղետից փրկելու համար:

1762 թ. հունիսի 28-ի հեղաշրջման մեջ, որի հետևանքը եղավ Եկատերինա II-ի գահի բարձրանալը, Սեն Ժերմենը

նույնպես մասնակցություն է ունեցել, թեև սրա վերաբերյալ ուղղակի ապացույցներ չկան: Ա.Ն.Բարսուկովը «XVIII դարի ռուսական իրականության պատմվածքներում» տեղեկացնում է, որ «արմատական պետական հեղաշրջումը» իրականացվել է «առանց արյունահեղության»: Այդ օրվա բոլոր իրադարձությունները կողմնակի հայացքով նման են հմուտ վիրաբույժի գործողությունների, որ աշխատել է արագ ու ճշգրիտ:

Կոմսուհի Դ՛Ադեմարի հիշատակություններից մենք իմանում ենք, թե ինչպես է Սեն Ժերմենը փորձել փրկել Ֆրանսիան վերահաս աղետից, իսկ թագավորական ընտանիքին՝ կործանումից: Կոմսը Լյուդովիկոս XVI –ին և Մարի Անտուանետին զգուշացրել էր հասունացող հեղափոխության մասին, բայց իզուր էին այդ ջանքերը:

«Ուսանելի և ցավոտ դաս,- գրում է Էլիզաբեթ Կլեր Պրոֆետը իր «Սեն Ժերմենի մարգարեությունները նոր հազարամյակի համար» գրքում,- նույնիսկ բարձրագույն իմաստության տեր մարդը, որ ամենաբարի նպատակներն ուներ և գիտեր համաշխարհային խնդիրների այն լուծումները, որոնցից կախված է ազգի վերելքն ու անկումը, ստիպված էր ենթարկվել մահկանացուների ազատ կամքին: Նա կարող էր խորհուրդ տալ, բայց ոչ՝ հրամայել, և եթե նրա խորհուրդները ուշադրության չարժանացան, մնում էր միայն հեռանալը»[5]:

XVIII հարյուրամյակի վերջում կոմսը կոմսուհի դ՛Ադեմարին խոստացավ, որ կվերադառնա 100 տարի անց: Եվ XIX դարի վերջին նա նորից հայտնվեց, որպեսզի համագործակցի Վեհապետներ Մորիայի և Կութ Հումիի, ինչպես նաև Ե.Պ. Բլավատսկայայի հետ՝ հիմնադրելու համար Թեոսոֆիական միությունը:

Ե. Պ. Բլավատսկայայի առաքելությունը



Ելենա Պետրովնա Բլավատսկայան (1831–1891) լեգենդար անձնավորություն է, որ իր ամբողջ կյանքը նվիրել է հնագույն գիտությունների և կրոնների ուսումնասիրությանը, հիմնադիրն է թեոսոֆիական ուսմունքի:

Նրա ունակություններն անչափ անսովոր ու օտար էին հասարակ մեծամասնության համար: Նույնիսկ նրա մերձավոր աշխատակից գնդապետ Հենրի Ստիլ Օլկոտտն իր օրագրում խոստովանել է, որ չնայած երկար տարիների համատեղ աշխատանքին, նա մինչև վերջ չի կարողացել պատասխանել ինքն իրեն հաճախ տված հարցին՝ ո՞վ էր Ելենա Բլավատսկայան:

Սակայն, ով ճանաչում էր Բլավատսկայային, համաձայն էին, որ նա անսովոր հոգևոր ուժ ուներ, որ շրջապատում ամեն ինչ իրեն էր ենթարկում, որ նա ի վիճակի էր անհավանական աշխատանք կատարելու և գերմարդկային համբերություն ուներ, երբ հարցը վերաբերում էր գաղափարին ծառայելուն, Ուսուցչի կամքը կատարելուն: Նաև բոլորը

միաբերան համաձայն էին, որ նա տիրապետում էր աներևակայելի, սահմաններ չճանաչող անկեղծության: Այդ անկեղծությունը դրսևորվում էր նրա կրակոտ հոգու յուրաքանչյուր դրսևորման մեջ, երբ կանգ չէր առնում այն բանի առջև, թե ինչ կմտածեն, ինչպես կվերաբերվեն իր կտրուկ խոսքերին և արարքներին, որ հաճախ տեղ էին գտնում նրա նամակներում: Անկեղծությունը հորդում էր նրա բուռն, բազմաչարչար կյանքի բոլոր մանրամասներում: Նա շատ հետևորդներ ուներ և ավելի շատ թշնամիներ, ինչպես ուղղափառ քրիստոնյաների, այդպես էլ աթեիստների շրջանում: Առաջիններին զայրույթ էր պատճառում այն, որ նա հանդիմանում էր Աստվածաշունչը և այլ սուրբ գրքեր ճիշտ չմեկնաբանելու համար: Մյուսները չէին կարողանում ներել նրա միստիցիզմը՝ նրան անվանելով խաբեբա և շանտաժիստ[5]:

Բոլոր այն ճգնակյացների պես, որ Ճշմարտության լույսն են բերում աշխարհին, Ելենա Պետրովնան շատ տառապանքներ է կրել: Բարեկամներին ուղղված նամակներում նա գրել է.

«Իմ մասին ինչ ստեր ու կրպարտություններ ասեք որ չեն հորինել ... բայց ես սրտանց ու կրքով ծառայում եմ իմ գործին <...> Հավատացեք ինձ, ես սերմեր եմ ցանել, որ արդեն աճում են և շուտով առատ բերք կտան»:

«Երբ մեռնեմ ու այլևս չլինեմ, մարդիկ գուցե արժանին կմատուցեն իմ անշահախնդիր ձգտումներին: Ես երդվել եմ մարդկանց օգնել Ճշմարտության ճանապարհին, քանի դեռ ապրում եմ, կպահեմ իմ երդումը: Թող հայհոյեն և վիրավորեն ինձ <...> Կգա այն օրը, երբ ապագա սերունդը կսովորի ավելի լավ հասկանալ ինձ»[5]:

---

[5] Блаватская Е.П. Письма друзьям и сотрудникам. Сборник / пер. с англ. Р. Ахунова. – М.: Сфера, 2002. – 784 с.

Ե.Պ. Բլավատսկայան իր ամբողջ կյանքում գնում էր դեպի իր առաքելությանը: Դեռ մանկուց հայտնվեց նրա կապը Ուսուցչի հետ, որ երևաց նրա ներքին տեսողությանը՝ որպես վեհաշուք, շատ բարձրահասակ ինդուս՝ ճերմակ տյուրբանով: Նրան նա անվանում էր իր պահապանը և ասում էր, որ նա միշտ փրկում է իրեն ամեն տեսակի դժբախտություններից: Մերի Կ. Նեֆի «Ե.Պ. Բլավատսկայայի անձնական մեմուարները» գրքում բերվում են մի քանի այդպիսի դեպքեր: Այսպես, 13 տարեկան հասակում Ելենան ընկել է վախեցած ձիու թամբից և կախվել խառնված ասպանդակից:Այդ ամբողջ ժամանակը, քանի դեռ չէին կանգնեցրել ձիուն, նա զգում էր, որ ինչ-որ մեկի ձեռքերը պահում էին իր մարմինը:

Ուսուցչի հետ առաջին հանդիպումը կայացել է 1850 թվականին: Ա.Պ.Սիննետին գրած իր նամակում Ելենա Պետրովնան տեղեկացնում էր. *«Իմ տեսիլքներում ես վաղ մանկությունում տեսել եմ Ուսուցչին: Մինչև իմ Նեպալում լինելը՝ ես նրան անձամբ հանդիպել եմ և ճանաչել եմ, երբ Նա 1850-1851 այցելել էր Անգլիա: Դա երկու անգամ է եղել: Առաջին անգամ նադուրս եկավ ամբոխի միջից և ինձ կարգադրեց իր հետ հանդիպել Հայդ-պարկում»*[6].

Երկրորդ հանդիպման ժամանակ՝ 1851 թ., Ուսուցիչը նրան ասել է, որ ինքը Լոնդոն է եկել, քանի որ իրեն հարկավոր է նրա համագործակցությունը մի նախաձեռնության մեջ: Այնուհետև նրան պատմել է Թեոսոֆիական Ընկերության մասին և տեղեկացրել, որ ուզում է, որ Ելենան լինի դրա հիմնադիրը: Համառոտակի նա բացատրել է սպասվող

---

[6] Здесь и далее рассказ и цитаты приводятся по кн.: Мэри К. Нэф. Личные мемуары Е.П. Блаватской / пер. с англ. Л. Крутиковой и А. Крутикова. – М.: Эксмо, 2006.

դժվարությունները և ասել, որ նախ պետք է նա երեք տարի անցկացնի Տիբեթում, որպեսզի նախապատրաստվի այդ չափազանց կարևոր գործն իրականացնելուն: Շատ երկրներ ճամփորդելուց հետո Ելենան մոտ երեք տարի է անցկացրել Փոքր Տիբեթում՝ Ուսուցիչ Կութ Հումիի տանը:

Այն մասին, թե ինչո՞ւ հենց Ելենա Պետրովնան է ընտրվել Մեծ Ճերմակ Եղբայրության կողմից, պատմել է Ուսուցիչ Մահաթմա Մորիան՝ 1882 թ. փետրվարին Ա.Պ.Սիննետին գրած իր նամակում:

«Մեկանից մեկը կամ երկուսը (Մահաթմաներ Մորիան և Կութ Հումին) հուսով էինք, որ աշխարհը բավականաչափ լավ կարգացած է, եթե ոչ ինտուիտիվ, գոնե մտավոր առումով, որ օկկուլտային ուսմունքը ինտելեկտուալ կերպով ընդունվի և խթանի օկուլտային ուսումնասիրությունների նոր ճյուղին... Շուրջբոլորը երկար նայելուց հետո մենք գտանք մի մարդու, որ ունակ էր լիդեր դառանալու:Նա մեծ բարոյական առնականությամբ էր օժտված, եսասեր չէր և մի շարք այլ լավ հատկություններ ուներ: Նալավագույնը չէր, բայց եղածների մեջ լավագույնն էր: Մենք նրան կապեցինք Ե.Պ.Բ.-ի հետ: Ելենան հրաշալի և բացառիկ օժտվածություններ ուներ: Սրահետ մեկտեղ նամի շարք անձնական թերություններ ուներ, բայց այդպիսին էլ, ինչպիսին նա կար, կենդանի մարդկանց մեջ չկար մեկը, որ այդ աշխատանքին պիտանի լինելու մեջ հավասարվեր նրան:Մենք նրան Ամերիկաուղարկեցինք: Նրանց միացրինք իրար և փորձությունն սկսվեց»:

Այս նամակում խոսքը Հենրի Ստիլ Օլկոտի մասին է: Նրա հանդիպումը Բլավատսկայայի հետ կայացավ 1874 թվականին Ամերիկայում: Օլկոտը դարձավ Ելենա Պետրովնայի աջակիցը, աշակերտն ու ընկերը, որի հետ նա աշխա-



տեց մինչև իր կյանքի վերջը և, որը ամբողջ աշխարհում ճանաչվեց որպես Թեոսոֆիական Ընկերության երկրորդ հիմնադիր: Գնդապետ Օլկոտը՝ Նյու Յորքյան հայտնի փաստաբանը, նշանավոր էր իր էրուդիցիայով, բարեկրթությամբ և բարոյականությամբ, և այդ ժամանակ նա կրքոտ կերպով հրապուրված էր պարապսիխոլոգիական ֆենոմեններով:

Եղբայրության Ուսուցիչների հետ ծանոթությունների մասին Օլկոտը տեղեկացնում է իր «Էջեր հին օրագրից» գրքում: *«Ե.Պ.Բ.-ն պատմում էր Արևելքի Աղեպտների գո-*

յության ու նրանց հպորության մասին...Նրա բարեկամական վերաբերմունքն ինձ օգնեց անձնական նամակագրություն ունենալու Ուսուցիչների հետ: Ես պահպանում եմ Նրանց նամակներից շատերը, որոնց վրա առկա է դրանց ստացման թվականները:

Ես Ե.Պ. Բալվատսկայի կողմից ներկայացված էի Նրանց: Ջոն Քինգը ինձ ծանոթացրեց չորս ուսուցիչների հետ: Նրանցից մեկը ղպտի էր, մյուսը Նեապոլիտանական դպրոցի ներկայացուցիչ էր, երրորդը՝ Ուսուցիչների բարձրագույն Ուսուցիչն էր, որ կոչվում էր Վենետիկցի և վերջինը՝ անգլիացի էր՝ փիլիսոփա, որ թաքնվում էր իր շրջապատից, և որին շատերը մեռած էին համարում: Նրանցից առաջինը դարձավ իմ Գուրուն. Նախիստ բարքերի տեր մարդ էր և առնական բնավորություն ուներ»:

Արևելքի հին հոգևոր ճշմարտությունների և Արևմուտքի ավանդույթները միավորելու խնդիրը հիմնականում կատարվեց Թեոսոֆիական դպրոցի հիմնավորման միջոցով: Այդ նշանավոր իրադարձությունը տեղի ունեցավ Նյու Յորքում 1875 թ. նոյեմբերի 17-ին:

Ընկերության ստեղծման առիթով Բլավատսկայան Օկոլտին գրել է. *«Ուսուցիչն ինձ ուղարկում է Միացյալ Նահանգներ, իմ առաջ խնդիր դնելով ամեն ինչ անել դադարեցնելու համար նեյկրոմանիան՝ մեռելահարցուկությունը) և սպիրիտուալիստների անգիտակից սև մոգությունը: Ես պետք էհանդիպեի ձեվ և փոխեի ձեր մտքերի ընթացքը, ինչը և արեցի: Եղբայրությունը ձևավորվել էև աստիճանաբար նրանում ներմուծվեց Ուսմունքի և Գաղտնի Դոկտրինի՝ Օկուլտային Փիլիսոփայության հնագույն դպրոցի սկիզբը, որ անցյալում ռեֆորմացրեց Տեր Հաութաման: Այդ Ուսմուն-*

քը չէր կարելի հաղորդել ակթնթարթորեն: Այն պետք էր լցնել աստիճանաբար՝ կաթիլ առ կաթիլ»:

Մերձավոր աշակերտների մի խումբ Ուսուցիչների պատգամներն ստացել է Բլավատսկայայի միջոցով կամ անձնական նամակների ձևով: Հետագայում նամակները հավաքվել և հրատարակվել են 1923 թ. «Մահաթմաների նամակները» վերտառությամբ: Նամակներից մեկում Ուսուցիչ Կութհումին 1880 թվականին գրել է. *«Ավագ Մահաթմաները ցանկանում են, որ դրվի «Մարդկության Եղբայրության» սկիզբը՝ իսկական Համընդհանուր Եղբայրության, որը պետք էի հայտ գաամբողջ աշխարհում և գրավի մեծագույն ուղեղների ուշադրությունը»:*

Այսպիսով, 1880-ականներին ձևավորվեցին Թեոսոֆիական Ընկերության երեք հիմնական նպատակները.

1. Մարդկության Տիեզերական Եղբայրության միջուկի ստեղծումը՝ առանց ռասաների, հավատալիքների, սեռի, կաստայի և մաշկի գույնի խտրականության:

2. Համագործակցություն համեմատական կրոնի, փիլիսոփայության և գիտության միջև:

3. Բնության այն չբացատրված օրենքների և ուժերի Ուսումնասիրությունը, որ պահված են մարդու մեջ:

Սակայն Ե.Պ.Բլավատսկայայի գործունեությունը չեր սահմանափակվում Թեոսոֆիական Ընկերությունում կատարած աշխատանքով: Նրա կյանքի կարևորագույն գործերից մեկը հետազոտական գիտական-գրական աշխատանքների՝ գրքերի ու հոդվածների ստեղծումն էր: Նրա ամենահանրահայտ և նշանակալի գրքերն են «Մերկացված Իսիդան» (1877 թ.) և «Գաղտնի Դոկտրինը» (1888 թ.): Գնդապետ Օլկոտը «Մերկացված Իսիդա» գրքի ստեղծման մասին գրել է.

«Թեոսոֆական Ընկերության հիմնադրումից մեկ կամ երկու ամիս անց մենք երկու բնակարան վարձեցինք 34-րդ Վեստ-Սթրիթի 433-ում: Նաառաջին հարկում էր, ես՝ երկրորդում: Այդ պահից սկսած աշխատանքն «Իսիդայի» վար շարունակվեց անդադար՝ մինչև 1877 թ.-ը, գրքի ավարտը: Իր նախկին կյանքի ողջ ընթացքում նաչի կատարել այդ գրական երկի մեկ տասներորդի չափ աշխատանք, և ես երբևէ չեմ հանդիպել այդպիսի համբերատարության և անդադրում աշխատունակության: Առավոտից երեկո նաիր աշխատանքային սեղանի մոտ էր, և հավվադեպ էր լինում, որ մեվանից մեկնումեկը գիշերվա ժամը երկուսից շուտ քնի: Ցերեկը ես պետք է զբաղվեի իմ ծառայության գործերով, բայց միշտ ճաշից հետո մենք տեղավորվում էինք մեր մեծ սեղանի մոտ

և աշխատում էինք այնքան, մինչև մեկ հաղթում էր հոգնածությունը: Ինչպիսի՜ կենսափորձ: Դա ուսումնառություն էր, որի համար մի ամբողջ կյանք էհարկավոր. Ինձ սեղմ չափերի մեջ տրված էր ավելի քիչ, քան երկու տարի...»:

«Նա ամբողջ ժամանակն անց էր կացնում գրասեղանի առաջ, գրում էր, գրում էր, գրում էր հիմնականում ցերեկով,

իսկ երբեմն նաև մինչև ուշ գիշեր՝ հետն էլ հսկայական նամակագրություն վարելով... Օրական նա իր սեղմ ձեռագրով գրում էր մինչև քսան էջ: Նա գրքերից չէր օգտվում, թեև հայրս հսկայական գրադարան ուներ, որ ամբողջությամբ բաղկացած էր անգլիական գրականությունից: Շատ հավվադեպ էր դիմում նրահորհուրդներին»:

Ելենա Պետրովնան հաճախ էր կրկնում, որ ինքը գիտական այն խորը իմացությունը չունի, որ անհրաժեշտ է այսքան լուրջ աշխատություններ գրելու համար, բայց իրեն օգնում են Ուսուցիչները: Թե ինչպես էր տեղի ունենում ինֆորմացիայի փոխանակումը, նա հայտնում էր իր հարազատներին:

*«Երբ ես գրում էի «Իսիդան», դա ինձ այնքնա հեշտ էր տրվում, որ դաաշխատանք չէր, այլ իսկական բավականություն: Արժե՞ ինձ գովել դրա համար: Երբ ինձ ասում են **գրե՛լ**, ապա ես ենթարկվում եմ, իսկ այնուհետև հեշտությամբ կարող եմ գրել ամեն ինչի մասին՝ մետաֆիզիկայի, հոգեբանության, հին կրոնների փիլիսոփայության, կենդանաբանության, բնական գիտությունների և շատ այլ բաների մասին: Ես երբեք ինքս ինձ հարց չեմ տալիս. «Կարո՞ղ եմ գրել դրամասին» կամ «Կկարողանա՞մ այդ հարցը լուծել»: Պարզապես նստում եմ ու գրում: Ինչո՞ւ: Որովհետև ինձ թելադրում է **նա, ով ամեն ինչ գիտի**... Իմ Ուսուցիչը, երբեմն ուրիշները՝ իմ անցյալ ճամփորդություններում ձեռք բերած ծանոթներս... ...Ես քեզ ակնարկել եմ նրանց մասին նախկինում...ու ես քեզ անկեղծորեն ասում եմ, երբ ես գրում եմ անծանոթ կամ քիչ ծանոթ առարկայի մասին, դիմում եմ Նրանց, ու Նրանցից մեկը ոգևորում էինձ: Նա ինձ հնարավորություն էտալիս պարզապես արտագրել ձեռագրերից, և նույնիսկ տպագրված նյութը,*



որ իմ աչքի առջև հայտնվում են օդում. Այս դեպքերում ես երբեք անգիտակից վիճակում չեմ լինում: Հենց Նրա հովանավորության գիտակցումն է ու հավատը Նրա հպորության հանդեպ, որ ինձ թույլ են տվել այսքան ուժեղ լինել՝ մտքով և հոգով... Եվ նույնիսկ Նա(Ուսուցիչը) միշտ չէ, որ անհրաժեշտ է, որովհետև Նա իր բացակայության դեպքում իմ մեջ թողնում էփոխանորդին՝ գիտելիքը... Այդպիսի պահերին արդեն ոչ թեես եմ գրում, այլ իմ ներքին Էգոն, իմ լուսավոր «ես»-ը, որ մտածում ու գրում էիմ փոխարեն»:

Ե.Պ. Բլավատսկայայի կյանքի վերջին տարիներին նրա գլխին թափվեցին ամեն տեսակի զրպարտություններ, բամբասանքներ, աբսուրդ մեղադրանքներ, նրան մեղադրում էին խաբեբայության և արատների մեջ: Նրան դավաճանում էին ամենամոտ մարդիկ: Նա տառապում էր, բայց մինչև վերջին րոպեն շարունակում էր աշխատել:

Ելենա Պետրովնայի մտերիմ աջակից կոմսուհի Կոնստանցիա Վախտմեյստերը իր հիշողություններում գրում է. *«Թույլ առողջությունը, աստանդական կյանքը, շրջապատի անխիղճ մարդիկ, նյութական անբավարարությունը, կեղծ բարեկամների հասցրած վնասներն ու թշնամիների հարձակումները այն խոչընդոտներն էին, որ կասեցնում էին նրա աշխատանքը: Իսկ համագործակցող կամավոր օգնականները, նվիրված համախոհների սերն ու հոգատարությունը, ու կարևորը՝ սիրված ու հարգված Ուսուցիչների օգնությունն ու ղեկավարումը նրան դարձրին....հնարավոր»*[7]:

1891 թվականի մայիսին Ելենա Պետրովնան վախճանվեց իր աշխատանքային բազկաթոռի մեջ՝ որպես իսկական Ոգու ռազմիկ, ինչպիսին եղել էր ողջ կյանքում: Ու թեև նրա կյանքի գլխավոր աշխատությունը՝ «Գաղտնի Դոկտրինը» ավարտված չէր, այդուամենայնիվ նրան հաջողվեց կատարել կարևորագույն խնդիրը, որ նրա առաջ դրել էր Ուսուցիչը՝ հզոր թափ հաղորդել Ճշմարտությանը հասնելու մարդկության գիտակությանը:

[7] Вахтмейстер К. Воспоминания о Е.П. Блаватской и «Тайной Доктрине». – Одесса: Астропринт, 2011. – 148 с.



Անմոռանալի հանդիպումներ Ուսուցրի հետ

Ռենրի Օլկոտն իր հիշողություններում նկարագրում է իր կյանքի ամենանշանավոր իրադարձությունները.

«...Ես շրջեցի գլուխս և կարմանքից գիրքը ձեռքիցս ընկավ: Իմ գլխավերևում ծառացել էր Արևելքի մարդու պատկառելի կերպարանքը՝ ճերմակ հանդերձանքով, գլխին հակինթի դեղին շերտավոր գլխանոցով կամ տյուրբանով, որ ասեղնագործված էր մետաքսով: Երկար, ածխաթույր, սև մազերը տյուրբանի տակից թափվում էին մինչև ուսերը: Նրա սև մորուքը, որ ռաջփուդների սովորության համաձայն կիսված էր կլակին, տարածվում էր ու ծայրերով հասնում էր մինչև ականջները: Նրա աչքերում վառվում էր ոգու կրակը, ու հայացքը միաժամանակ սիրալիր էր ու թափանցող: Դաստիարակի ու դատավորի հայացք, որ սիրով էր նայում որդուն, որին պետք է խորհուրդ տալ և կառավարել: Նրա կերպարանքն այնքան վեհ էր, այնքան լեցուն բարոյական ուժով և այնքան գերազանց սովորական մարդուց, որ ես



կորցրի գլուխս Նրաներկայությունից, խոնարհեցի գլուխս և ծնկի իջա նրա առաջ, ինչպես անում են Աստծո կամ աստվածանման մարդկանց առջև: Նրա ձեռքը թեթևակիորեն դիպավ իմ գլխին, մեղմ, բայց ուժեղ ձայնը ինձ կարգադրեց նստել, ու երբ ես բարձրացրի հայացքս, Այցելուն արդեն

նստած էր աթոռին՝ սեղանի մյուս կողմում: Նա ասաց, որ եկել էայն ճգնաժամային պահին, երբ ես Իր կարիքն ունեմ, որ Իրեն բերել են իմ գործողությունները, որ միայն ինձնից է կախված՝ մենք հաճախ ենք այս կյանքում հանդիպելու՝ որպես ընդհանուր բարօրությանը ծառայող աշխատակիցներ, որ մեծ աշխատանք է պետք կատարել հանուն մարդկության, և որ ես իրավունք ունեմ մասնակցելու դրան, եթե կամենում եմ: Որ խորհրդավոր կապը, որ ինձ ու իմ համախոհուհուն միացրել է և այդ պահին պետք չէ բացատրել, չի կարելի քանդել, որքան էլ որ այն ժամանակ առ ժամանակ լարված լինի: Նա ինձ պատմեց մի քանի բան, որ վերաբերում էին Ե.Պ.Բ.-ին. դրանք կրկնելու իրավունք չունեմ, նաև իմ մասին, որ ուրիշների հետ կապ չունի: Չեմ կարող ասել, թե նա որքան մնաց՝ գուցե կես, գուցե և մեկ ժամ, բայց դա ինձ մեկ րոպե թվաց, քանի որ չնկատեցի, թե ինչպես թռավ ժամանակը: Վերջապես Նա վեր կացավ: Ես հիացած էի նրաբարձր հասակով և տարօրինակ շողարձակումով, որ ցոլում էր նրա դեմքից. Դա արտաքին փայլ չէր, այլ ներքին լույսի ճառագայթում էր՝ ոգու լույս: Հանկարծ մտքովս անցավ.«Գուցե սա հալյուցինացիա՞ է: Գուցե Ե.Պ.Բ.-ն է ինձ հիպնոսացրել: Ա՛յ, եթե նրանից հետո մի որևէ նյութեղեն բան մնացած լիներ, որ հաստատեր, որ Նա իսկապես եղել է ինձ մոտ, մի որևէ բան, որ կարողանայի ձեռքիս մեջ պահել, երբ Նա արդեն գնացած լինի»: Ուսուցիչը բարի ժպիտով, ասես կարդալով իմ մտքերը, գլխից արձակեց «ֆեխթան», բարկամաբար ողջունեց ինձ հրաժեշտի պահին ու հեռացավ: Նրա աթոռը դատարկ էր: Ես միայնակ էի իմ հոգու ամբողջ հուզմունքի հետ: Բայցևայնպես ոչ բոլորովին մենակ: Սեղանին էր ասեղնագործ գլխի թաշկինակը՝ նյութեղեն ու ամուր ապացույց,

որ ինձ չէին կախարդել ու ֆիզիկապես աչքով չէին տվել, այլ ես դեմառդեմ եղել էի մարդկության Եղբայր Ավագներից, մեր անփույթ ու անհաս ռասայի Ուսուցիչներից մեկի հետ»[8]*:*

Ե.Պ. Բլավատսկայայի աշակերտներից մեկը, որ ունեցել է իր Ուսուցչին տեսնելու երջանկությունը, եղել է Ռամասվամիրը[9]: Իր հրաշալի հանդիպումն Ուսուցչի հետ նա նկարագրել է ընկերոջը գրած նամակում: Ամեն ինչ սկսվել է նրանից, որ Ռամասվամիրը լսել է ներքին ձայնը, որ պատկանում էր Ուսուցչին, որ կոչ էր անում նրան ամեն ինչ թողնել և արագ հետևել Ե.Պ.Բլավատսկայային, որ ուղևորվել էր դեպի Տիբեթի սահմանը՝ Ուսուցչի հետ հանդիպելու համար: Ռամասվամիրը անհապաղ հետևեց ներքին կարգադրությանը, բայց երբ հասավ Բոմբեյ, պարզվեց, որ Ելենա Պետրովնան արդեն հեռացել է այդ քաղաքից ու հասել Դարջիլինգ, որ գտնվում էր Տիբեթի սահմանին, որտեղ ամենայն հավանականությամբ արդեն տեղի էր ունեցել հանդիպումն Ուսուցիչների հետ: Հուսահատության մեջ Ռամասվամիրը որոշեց հատել Տիբեթի սահմանը և ինքնուրույն, միայնակ, հաշվի չառնելով բոլոր վտանգները, որ կարող էին հանդիպել այդ ճանապարհին, որպեսզի գտնի իր Ուսուցչին կամ էլ՝ մեռնի: Զգեստափոխվելով, ուխտագնացի հագուստով նա միայնակ ճանապարհ ընկավ, առանց միջոցների, առանց լեզվի իմացության, առանց սահմանն անցնելու իրավունքի: Երտասարդը առաջ գնաց ջունգլիներով, որտեղ վխտում էին վայրի գազանները, ու հազիվ փրկվեց մահվանից: Սակայն

---

[8] Մեջբերումը ըստ՝: Махатмы – Старшие Братья человечества. – URL: https://roerich-lib.ru/index.php/rudzitis-r-ya/bratstvo-graalya/4169-makhatmy-starshie-bratya-chelovechestva.

[9] Այստեղ եւ հետագայում մեջբերումները հետեւյալ գրքից՝: Самохина Н. Шамбала – это не миф. – М.: Эксмо, 2008. – 592 с.

նրա գիտակցությունն այնքան էր կենտրոնացած Ուսուցչի սիրելի կերպարի վրա, որ ոչ վախը, ոչ անհանգստությունը չէին խռովում նրա հոգին: Նրա մեծ հավատը Բարձրագույն Կամքի հանդեպ նրան փրկեց ավազակի ձեռքից և գիշատիչ գազաններից: Վերջապես Տիբեթի սահմանին մոտ նա տեսավ Նրան, ում ձգտում էր:

Ռամասվամիրը այդ հանդիպումն այսպես է նկարագրում. *«Կարծում եմ առավոտյան ժամը ութին կամ ինին մոտ էր: Ես ուղղվեցի դեպի Սիկկիմի քաղաքներից մեկը, որտեղ, ինչպես ինձ հայտնեցին հանդիպած մարդիկ, ես ուխտավորի իմ հագուստով հեշտությամբ կարող էի անցնել Տիբեթի սահմանը: Հանկարծ ես տեսա մի միայնակ հեծյալի, որ սլանում էր դեպի ինձ: Նրա պատկառելի կեցվածքն ու ճարպիկ ձիավարությունը տեսնելով՝ մտածեցի, որ երևի նա Սիկկիմյան ռաջայի սպաներից մեկն է: Ուրեմն՝ վերջ ամեն ինչին: Հիմա նա անձնագիր կպահանջի, կհարցնի, թե ինչ գործ ունեմ անկախ Սիկկիմի տարածքում, գուցեև ձերբակալի ինձ և ետ ուղարկի, նույնիսկ՝ վատթարը... Ձիավորը մոտեցավ ինձ և սանձեց ձիուն: Ես նայեցի և ակնթարթորեն ճանաչեցի Նրան... Երանելի դողը համակեց ինձ, քանի որ ես կանգնած էի Մահաթմայի՝ բարձրապատիվ Գուրուի հետ դեմ հանդիման՝ Նրան, որ նախկինում տեսել էի միայն աստրալ մարմնով: Նաէր՝ «Հիմալայան եղբայրը»: Հենց այդ պահին ես տարածվեցի գետնին՝ Նրա ոտքերի մոտ: Նրա հրամանով ոտքի կանգնելով ու համրացած նայելով Նրան, ես միանգամայն կորցրել էի ինձ Նրա կերպարի հանդեպ, որը շատ լավ ծանոթ էր ինձ նկարով: Ես չէի կարողանում որևէբան ասել. Ուրախությունն ու երանությունը ինձ զրկել էին խոսելու ունակությունից:*

Նրա կերպարանքի վեհությունը, որ ինձ հպորության և մտքի մարմնավորում էր թվում, հիացմունք և երանելի հուզմունք էր պատճառում: Ես դեմ առ դեմ կանգնած էի Հիմալայան Մահաթմայի հետ, և Նա ոչ միֆ էր, ոչ էլ «մեդիումի երևակայության արդյունք», ինչպես կասեին սկեպտիկները: Դա գիշերային երազ չէր, քանի որ առավոտվա ութի կամ ինևի կողմերն էր: Արևը փայլում էր և լուռ վկան էր այս իրողության: Ես նրան տեսնում եմ միս ու արյունով, և Նա ինձ հետ խոսում է բարությամբ ու մեղմությամբ: Մի՞թե կարող էի ավելիին սպասել: Երջանկության առատությունից կորցրել էի խոսելու կարողությունս, և որոշ ժամանակ անցավ՝ մինչև կարողացա մի քանի բառ արտաբերել՝ խրախուսված Նրա բարեհունչ բառերից...

Զարմանքի ու հիացմունքի առաջին ակնթարթներից հետո, երբ ես արդեն հանգստացել էի և վարժվել եղելությանը, մենք երկար զրուցում էինք Նրա հետ...Նա ասաց, որ ես պետք է համբերությամբ սպասեմ, եթե ուզում եմ իր աշակերտը դառնալ, որ շատերն են իրենց առաջարկել որպես թեկնածու, բայց քչերն են արժանի եղել...

Ու հիմա, երբ ես տեսա Մահաթմային՝ միս ու արյունից, և լսում էի Նրա կենդանի ձայնը, թող ոչ ոք չհամարձակվի ինձ ասել, որ Եղբայրները գոյություն չունեն: Հիմա ինչ ուզում է, թող լինի, ոչ մի մահ, թշնամու ոչ մի վրեժ ինձ չի վախեցնի, քանի որ ես գիտեմ այն, ինչ գիտեմ»: (Bregdon C. Episodes from an Unwritten History. Rochester, 1910, c. 36-38).

Ուսուցչի հետ ևս մի վկայություն պատկանում է նույնպես Ե.Պ. Բլավատսկայայի աշակերտ և հետևորդ Դամոդար Մավալանկարին: Մավալանկարը ծագումով ազդեցիկ և հարուստ բրահմինների ընտանիքից էր, որ չէր ըն-



դունում նրա կապվածությունը թեոսոֆիական շարժմանը: Այնուամենայնիվ Մավալանկարն ընդունվեց Թեոսոֆիկան ընկերություն՝ հրաժարվելով իրեն սպասվող հարուստ ժառանգությունից: Դամոդարի նվիրվածությունը Ե.Պ. Բլավատսկայային բացարձակ էր: Թեոսոֆիական ընկերության ողջ գործունեության ընթացքում Դամոդարը մի քանի անգամ հանդիպել է Ուսուցիչների հետ: Մի անգամ, ին-

չպես գրում է Կլոդ Բրեգդոնը «Չգրառված պատմության դրվագներ» գրքում, նա անսպասելիորեն անհետացավ այն վայրից, որտեղ սովորաբար ապրում էր և շուտով վերադարձավ.

«Նաեղել էր իր Ուսուցչի Աշրամում՝ այնտեղ հայտնի նախապատրաստությունն անցնելու: Այնտեղ նա գնաց նիհարած, գունատ, շատ նման պատանի աշակերտի՝ փխրուն, վեհերոտ, ամոթխած: Երբ վերադարձավ նրա դեմքի բրոնզագույն արևահարությունը ավելի էր մգացել. նա ուժեղ էր երևում, դիմացկուն ու ճարպիկ, համարձակ ու եռանդուն: Նրա մեջ կատարված փափոխությունն այնքան ուժեղ էր, որ ընկերները հապիվ ճանաչեցին նրան: Ինքը այսպես է նկարագրել այն ամենն, ինչ կատարվել է իր հետ. «Ես կանչված լինելու և սուրբ Աշրամ այցելության թույլտվություն ստանալու երջանկությունն ունեցա, որտեղ ես մի քանի օր անցկացրի Հիմալայան Մահաթմաների և նրանց աշակերտների օրինյալ հասարակության մեջ: Այնտեղ ես ոչ միայն իմ սիրելի Գուրուդևային (Աստվածային Ուսուցչին) հանդիպեցի Ուսուցիչ գնդապետ Օլկոտտի հետ, այլ նաև Եղբայրության մի քանի ուրիշ անդամների, նաև՝ Բարձրագույններից մեկին: Ցավոք, Իմ այցելության բացառապես անձնական բնույթը այդ երիցս օրինյալ վայրեր, ինձ թույլ չի տալիս սրա մասին ավելին պատմել: Բավական է միայն այն, որ ես կասեմ, թե այդ վայրը Հիմալայներում է գտնվում և ոչ թե Հավիտենական Ամռան ֆանտաստիկ Երկրում, որ ես իմ Ուսուցչին տեսել եմ իր ֆիզիկական մարմնով, և Նա հենց այնպիսին էր, ինչպեիսին ես նրան տեսել եմ իմ աշակերտության առաջին օրերին: Ես իմ Գուրուին տեսել եմ որպես կենդանի մարդ, և նաիսկական պատանի էր երևում այդ օրինյալ հա-

սարակության մյուս Սադխիների համեմատությամբ... Տեղ հասնելուս հաջորդ օրը ինձ թույլ տրվեց Ուսուցչիս հետ մեկ ժամից ավելի խոսելու»:

Հետագայում Դամոդարը հեռացավ թեոսոֆիական ընկերության անդամներից, որպեսզի անմիջականորեն միանա Ճերմակ Եղբայրության աշխատանքին՝ հենց հիմալայան կացավայրում:



Թեոսոֆիական հայացքների հետևորդները



Ե.Պ. Բլավատսկայայից և Գ.Ս. Օլկոտից բացի՝ Մեծ Ճերմակ Եղբայրությունն իրենց աշխատություններում նկարագրել են նաև XIX-XX դարերի թեոսոֆիական ընկերության նաև այլ նշանավոր գործիչներ: Նրանցից են Ջաջ Ուիլյամը, Աննի Բեզանտը, Չարլզ Լեդբիտերը, Ալիսա Բեյլին. Ռուդոլֆ Շտեյները, Չարլզ Ջոնսթոնը և ուրիշներ:

Աննի Բեզանտը Մեծ Ճերմակ Օթյակում

Ե. Պ. Բլավատսկայայի աշակերտուհի Աննի Բեզանտը 1907 թ.-ից ղեկավարել է Թեոսոֆիական ընկերությունը: Նա հանդիսանում էր թեոսոֆիային և Մեծ Ճերմակ Օթյակի ուսմունքին վերաբերող բազմաթիվ աշխատություններ: Հատկանշական է Ա. Բեզանտի «Ճերմակ Օթյակը և նրա լրաբերները» դասախոսությունը, որ կարդացել է 1911 թ.-ին Աղյարում՝ թեոսոֆիական շարժման հնդկական գլխամասային գրասենյակում Դասախոսության ընթացքում խոսվում է Մեծ Ճերմակ Օթյակի ռետրոսպեկտիվ պատմության մասին՝ սկսած այն պահից, երբ Կրակի Տիրակալները Երկիր եկան Վեներայից (Արուսյակ), օգնելու համար մարդկությանը, որ այն ժամանակ մանկության վիճակում էր գտնվում: Մի քանի մեջբերումներ անենք այդ դասախոսությունից.

«Եթե դուք կարողանայիք հայացք գցել այն նախապատմական շրջանին, որ դեռ մշուշված էր լեգենդներով ու առասպելներով... այդժամ դուք կկարողանայիք տեսնել, թե ինչպես է ոսկյա ամպն իջնում Երկրի վրա հեռավոր մոլորակից, մոլորակ, որ դուք գիտեք Շուկրա անվանումով և, որին մենք Արևմուտքում անվանում ենք Վեներա:

Այդ հեռավոր մոլորակից եկավ շողացող ամպը՝ հրո ու լույսի ամպը... իջավ երկրի վրա և հիմնավորվեց կղզու՝ Ճերմակ (այսպես է կոչվել այն Պուրաններում) կղզու վրա, որտեղ հետագայում կառուցվեց սրբական Շամբալա քաղաքը: Հրո ամպը եկավ և մնաց այնտեղ: Նրա տեղափոխած շողացող Էակներն ասես հրե կառքերից իջան: Հրո որդիները, Բոցի Տիրակալները ժամանեցին այս մոլորակը՝ որպես Լոգոսի, Իշվարի դեսպանորդներ: Նրանք եկան, որ օգնեն երեխա-



श्री सनकादि महर्षि
(सनक, सनन्दन, सनातन, सनत्कुमार)

յության մեջ գտնվող Մարդկությանն օգնելու, ուղղորդելու նրա անվստահ առաջացումը՝ էվոլյուցիայի ճանապարհով:

Մարդկային հարգանքը և մարդկային կարմանքը շատ անվանումներ է տվել Ճերմակ Օթյակի այս նախահայրերին, որպեսզի արտահայտեն այն հրաշալի կյանքը, որով առլեցուն էին այդ հզորագույն Էակները: Պուրաններում նրանց

անվանում են չորս Կումարաներ[10]՝ կուսական պատանիներ: Երբեմն մենք հանդիպում ենք Շիվա Կումարա անվանը, երբեմն ուրիշ անունների, բայց անուններն այստեղ այնքան էլ կարևոր չեն, քանի որ Նրանք վեր են բոլոր այն անուններից, որ կարող է հնչյունավորել մարդկային լեզուն: Այդ հին, շատ հին ժամանակներում՝ հնարավոր է՝ տասնվեց միլիոն տարի առաջ, Նրանք ապրել են այնտեղ, որտեղ եղել է Ճերմակ Կղզին, որի ափերը ինչ-որ ժամանակ ողողել է մեծ ծովը, որ տարածվում էր դեպի հյուսիս՝ մինչև Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս, որն այսօրվա Գոբի անապատն է»[11]:

Մեծ Ճերմակ Օթյակը՝ Մարդկության Պահապանը, սկսեց բարգավաճել «բանյան ծառի պես»՝ առաջացնելով մեծ քաղաքակրթությունների կենտրոններ: Ա. Բեզանտը Ատլանտիդան մայրաքաղաքով անվանում է տոլտեկների լայնարձակ կայսրություն, Ոսկե դարպասների Քաղաք, որտեղ իշխում էր Ճերմակ կայսրը՝ աստվածային դինաստիայի որդին: Եգիպտոսն իր ապշեցուցիչ քաղաքակրթությամբ, «որն ըստ Բունզենի խոսքերի, պատմության ասպարեզ ելավ միանգամայն ձևավորված, առանց անցյալի», իր վիթխարի բուրգերով ու անսովոր գիտելիքների տեր «փարավոններով». Հարավային Ամերիկայի և հնդկական հարթավայրերում «մինչարիական փառահեղ քաղաքակրթությամբ, որ ավերվեց նվաճողների կողմից:

«Ո՞րն է, ուրեմն, այն գլխավոր կետը, որ կա ցանկացած կայսրությունում, երբ դուք ուշադիր նայում եք դրան»,- հարցնում է Ա. Բեզանտը և միանգամից պատասխանում է. *«Եվ*

---

[10] Կումարները՝ Հինդուիզմի չորս իմաստուն մանուկներն են, Սանատ Կումարան (ավագը), Սանական, Սանատանան եւ Սանանդանան: Ե.Պ. Բլավատսկայան հայտնում է, որ Կումարներըը յոթն են, որոնցից երեքը՝ գաղտնի էզոթերիկ են:

[11] Յաստեղ եւ հետագայում ցիտվում է՝: ЛитВек. – URL: https://litvek.com/br/304346?p=10.



հոյակապ մշակույթը, և շշմեցուցիչ ճարտարապետությունը, և՛ բնության ուժերի կառավարումը, ամեն ինչ ծագում է աստվածային տիրակալների՝ ապգեր հիմնողների ու դրանք կառավարողների կողմից... որ ուղարկված էին Ճերմակ Օթյակի կողմից՝ մանուկ աշխարհում քաղաքակրթություն ձևավորելու համար».

Ա. Բեզանտը խոսում է այն մասին, որ անցյալի մեծ Կառավարիչները Մեծ Ճերմակ Օթյակի դեսպանորդներն էին հանդիսանում: Նրանք անդադար սովորեցնում ու կրթում

էին մարդկությանը՝ զարգացման բոլոր փուլերում: *«Աշխարհի շատ կրոններ պատասխաններն են Ավագ Եղբայրների, որ մանուկ հոգիներին պատմում են Հավիտենական Կյանքի մասին, մանկական լեզվով նրանց տալով այնքան, որքան մանուկ հոգին կարող է հասկանալ»:*

Դասախոսության մեջ հնչում են Ուսուցիչներ Վայվասվաթա Մանուի, Կյահիի, Շրի Ռամայի անունները Հնդկաստանում, Հերմեսի անունը Եգիպտոսում, Զրադաշտի անունը Պարսկաստանում, Պլատոնի և Պյութագորասի անունները Հունաստանում, Հաութամա Բուդդայի, ՔՐԻՍՏՈՍԻ, Մուհամեդի... Խոսվում է այն մասին, որ *«Ճերմակ Օթյակի մեծ ստեղծողները դրեցին ժամանակակից Եվրոպայի հիմքերը ու այնտեղ վարպետներ և աշակերտներ ուղարկեցին, որպեսզի ժամանակակից մտքի ու ժամանակակից քաղաքակրթության նոր Տաճար կառուցեն: Մեծերը աշխարհը չեն թողնում առանց Իրենց Սիրո»:*

Աննի Բեզանտը ցավով է խոսում այն մասին, որ *«Ուսուցիչներն այժմ մարդկանց մեջ չեն լինում՝ ոչ այն պատճառով, որ Նրանց սերը թուլացել է, ոչ էլ այն պատճառով, որ նրանց ուժն էպակասել, այլ այն պատճառով, որ ինքնավստահ ինտելեկտը Նրանց համար տեղ չի թողել ժամանակակից մարդկանց մտքերում և սրտերում:*

Մեծ Ճերմկ Օթյակի հայտնությունը եվրոպական պատմության բակում հարյուրամյակներում ամեն անգամ ուղեկցվել է հետապնդումներով, կտտանքներով ու ատելությամբ»: Ցավոք իրերի այս դրությունը նույնն է մինչև այսօր: Բայց խավար դարաշրջանի ավարտի և աշխարհի ապագա Փրկչի հայտնության մարգարեությունը մեզ հուսադրում է:

Չարլզ Ջոնսթոնը Շամբալայի ադեպտների մասին

Ամերիկացի թեոսոֆ, լրագրող և գրող Չարլզ Ջոնսթոնն իր «Ելենա Պետրովնա Բլավատսկայա» գրքում մեջ է բերել խոսակցությունը Թեոսոֆիական ընկերության Հիմնադրի հետ, որում նա պատմում է Շամբալայի Ուսուցիչների մասին:

«...նա (Ե.Պ Բլավատսկայան.) պատմում էր այն Ուսուցիչների ու ադեպտների մասին, որոնց ինքը իմացել է: Նրանց միջև նա տարբերակում էր դնում, ընդգծելով, որ Ուսուցիչները բարձր էին սովորական ադեպտներից: Նա ծանոթ է եղել տարբեր ռասաների պատկանող ադեպտների հետ՝ Հյուսիսային և Հարավային Հնդկաստանից, Տիբեթից, Իրանից, Չինաստանից, Եգիպտոսից, եվրոպացիների հետ՝ Հունաստանից, Հունգարիայից, Իտալիայից, Անգլիայից, Հարավային Ամերիկայի մի քանի ռասաներից ադեպտների հետ, որտեղ, ինչպես նա էր ասում, գտնվում էր ադեպտների օթյակներից մեկը»:

Ելենա Պետրովնան հայտել էր, որ ադեպտները կապի տարբեր միջոցներ ունեն:

«Աստրալ ձևերի միջոցով»,- հարցրել էր Ջոնսթոնը:

«Այո՛,- պատասխանել էր նա,- *նաև այլ՝ ավելի բարձր միջոցներով: Նրանք ընդհանուր կյանք և ուժ ունեն: Հոգևորապես վերածնվելով, նրանք վեր են բարձրանում ռասայական տարբերություններից՝ դեպի մեր համամարդկային սկիզբը: Նրանց շղթան անքակտելի է: Ադեպտներն անհրաժեշտ են երկրային և վերերկրային Բնության մեջ: Նրանք իրենցից կապող օղակ են ներկայացնում մարդանց և Աստվածների միջև:* ***«Աստվածները» հենց վաղուց հեռացած՝ մինչև***

Նիրվանայի շեմին հասնող ռասաների ու դարերի մեծ ադեպտների և Ուսուցիչների հոգիներն են: *(Ընդգծումը հեղ.)Այս հաջորդականությունն անխախտ է».*

«Ինչն է նրանց գործունեությունը»,- հարցրել է Ջոնսթոնը:

«Դժվար է դա հասկանալը, երբ ադեպտ չես: Բայց նրանք պահպանում են մարդկության հոգևոր կյանքը»,-պատասխանել է Ելենա Պետրովնան:

«Ինչ կերպով են ադեպտները կառավարում մարդկային հոգիները»,- հաջորդում է նոր հարցը:

«Տարբեր կերպ,- պատասխանել է Բլավատսկայան,- *բայց* ***հիմնականում նրանք մարդկանց գիտելիքներ են***

փոխանցում անմիջականորեն՝ հոգևոր պլանում: *Դահասկանալը ձեվ հաամար դժվար կլինի: Բայց կա հասկացողության համար ավելի մատչելի փաստ. ժամանակային որոշակի հատվածներում նրանք փորձում են աշխարհին հոգևոր կարգերի մասին ճիշտ պատկերացում տալ: Նրանցից մեկը աշխարհ է գալիս, որ սովորեցնի ժողովուրդներին և մնում է պատմության մեջ որպես կրոնի հիմնադիր: Այդպիսի Ուսուցիչներ են եղել Կրիշնան և Զորոաստրը, ինչպես նաև Բուդդան և Շանկարաչարյան՝ Հարավային Հնդկաստանի մեծ իմաստունը: Այսպիսին էր նաև Նազովրցի ՅԻՍՈՒՍԸ»:*

«Աղեպներն արդյո՞ք ունեն ՆՐԱ կյանքի մասին այնպիսի վկայություններ, որ հայտնի չեն մեզ», – հետաքրքրվել է Ջոնսթոնը:

«Պետք է լինեն, – պատասխանել է Բլավատսկայան, – *քանի որ նրանց մանրամասն վկայություններ են հայտնի բոլոր Ձեռնադրվածների մասին: Մի անգամ ես Ուսուցչի հետ եղա Հիմալայներում գտնվող մի մեծ քարանձավային տաճարում: Այնտեղ աղեպտների շատ արձաններ կային: նրանցից մեկը մատնացույց անելով, Ուսուցիչն ասաց. Սա ՆԱ է, ում դուք ՅԻՍՈՒՍ եք անվանում: Մենք Նրան համարում ենք նրանց մեջ եղած ամենամեծերից մեկը»*[12].

Ֆրանչիա Լա Դյուն Ուսուցիչների մասին

Թեոսոֆիական հայացքների աճող ճանաչումը հանգեցրեց այն ընկերությունների և շարժումների ձևավորմանը, որոնք ղեկավարվում էին Մեծ Ճերմակ Եղբայրության

[12] Մեջբերվում է հետեյալ գրքից՝.: Самохина Н. Шамбала – это не миф. – М.: Эксмо, 2008. – 592 с.

Ուսմունքով: Դրանց մեջ առանձնանում է «Մարդկության Տաճար» համայնքը, որը ձևավորվել էր 1898 թվականին Սիրակուզա քաղաքում՝ Նյու Յորքի նահանգում: Այն ղեկավարում էին թեոսոֆիական ընկերության անդամներ Ֆրանչինա Լա Դյուն և Հ.Դաուերը:

Ե.Պ. Բլավատսկայայի մահվանից հետո Լա Դյուն՝ Ուսուցիչ Հիլարիոնի անմիջական ղեկավարության տակ իր հետագա ամբողջ կյանքը նվիրեց Հին Նվիրական Գիտելիքը մարդկությանը փոխանցելու գործին:

Ֆրանչինա Լա Դյուն ոչ միայն պայծառալսությամբ Ուսուցչի պատգամն ընդունելու, այլ նաև նրա հետ գնացքով մի անգամ Նյու Յորքի նահանգով ուղևորվելու և նրանից շատ արժեքավոր կարգադրություններ ստանալու բախտն

ունեցավ: (Ե.Ի. Ռերիխի և Ուսուցիչ Մորիայի զրույցից պարզ է դառնում, որ Ուսուցիչ Հիլարիոնը ոչ թե ֆիզիկական մարմնում էր, այլ խտացած աստրալում):

Լա Դյուն Ուսուցիչների մասին գրել է. *«Կարճ ասած՝ Ճերմակ Եղբայրության Ուսուցիչը նա է, ով Օրենքին կատարյալ ծառայելով ու ենթարկվելով, ինքն էդարձել Օրենք, և աշխատում է բացարձակապես նրաբոլոր գործողություններ ու ռեակցիաների հետ միավորված և ի վիճակի է իշխելու բնության վիթխարի թաքնված ուժերին, աշխատելով հանուն մարդկության բարօրության, աշխատելով մեծ մասամբ «աներևույթ», ոչ միայն իր սեփական պաշտպանվածության, այլ նաև հանուն այն մարդկանց, որ դեռ ունակ չեն գիտակցաբար կառավարելու կամ անվտանգ կրելու այն հզոր ուժերի ազդեցությունը, որոնցով ինքը ստիպված է աճպարարություն անել: Բայց քանի որ Ուսուցիչները միասնական են ամբողջ կյանքի հետ, նրանք ունակ են գործելու կեցության բոլոր պլաններում»*[13]:

[13] Путь Голубой Звезды. Франчиа Ла Дью (1849–1922). – URL: https://nowimir.ru/DATA/030023.htm.

Ռերիխ ընտանիքի աշխատությունները



Մեծ Ճերմակ եղբայրության անդամներ են եղել նաև Նիկոլայ Կոնստանտինովիչ և Ելենա Իվանովնա Ռերիխները: Ուսուցիչների հետ նրանց հանդիպումների փաստերը նշված են ընտանիքի կենսագիր Պ.Ֆ. Բելիկովի «Ռերիխ: Հոգևոր կենսագրության փորձը»[14] գրքում:

Կենսագիրը հաղորդում է, որ ապագա ամուսիններից երկուսն էլ մանկության և երիտասարդության տարիներին հիշողության փայլատակումներ ու երազներ են ունեցել Ուսուցչի հետ հոգևոր կապի մասին: Հասուն տարիքում այդ կապը ձևավորվեց և ամրացավ պայծառատեսության և պայծառալսության, ինչպես նաև ներխոկման հատուկ սեանսների օգնությամբ: Հենց այսպիսի միջոցով է գրի առնվել Ագնի Յոգայի կամ Կենդանի Էթիկայի Ուսմունքը: Բացի դրանից՝ Ռերիխները մի շարք հանդիպումներ են ունեցել

[14] Մեջբերվում է հետեւյալ գրքից՝ Беликов П.Ф. Рерих. Опыт духовной биографии. – URL: https://roerich-lib.ru/index.php/belikov-rerikh-opyt-dukhovnoj-biografii/4813-belikov-p-f-rerikh-opyt-dukhovnoj-biografii.



Մահաթմաների հետ նաև ֆիզիկական պլանով: Խորհրդանշական է, որ առաջին հանդիպումն Ուսուցիչների հետ կայացել է հենց այն Հայդ Պարկում, որտեղ Ե.Պ Բլավատսկայան առաջին անգամ հանդիպել է իր Ուսուցչին: Դա տեղի է ունեցել 1920 թ. մարտի 24-ին: Այդ ժամանակվանից մարտի 24-ը հոգևորը որոնողների միջավայրում նշվում է որպես Ուսուցչի օր:

Եվս մի հանդիպում տեղի է ունեցել Հնդկաստանում: Բելիկովը հաղորդում է. *«Սիկկիմում կայացավ հանդիպումը Ուսուցչի և նրան ուղեկցող Ջուլ-Կուլի հետ: Դատեղի ունեցավ Դարջիլինգի ծայրամասերում՝ տաճարում»:*

Կենսագիրը հաստատում է. «Бывальщина» ակնարկում թվարկված են բոլոր անսովոր երևույթներն ու հանդիպումները ժամանակագրական կարգով: *«Չի մոռացվի նաև Իկագոյի հանդիպումը: ԻսկաԼոնդոնը 1920 թ.: Իսկ Փարիզը 1923 թ.: Իսկ Դարջիլինգը: Իսկ Մոսկվան 1926 թ: Իսկ Բելուխան: Իսկ Ուլան Բատորը: Իսկ Տիբեթը: Իսկ Հնդկաստանը: Ամենուրեք ուղենիշեր են».* Այստեղ Դարջիլինգը հիշատակված է Փարիզից հետո (Քարի ստացումը) և Մոսկվայից առաջ: Ռերիխը Ուսուցիչների մասին գրում է. «Օրհնության ճանապարհներում», «Աշխարհի Մոր Աստղը» ակնարկում, որ թվագրված է՝ 8 մայիսի 1924 թ., կարծես հանդիպել է նրանց հետ. *«Այն մարդիկ, որ կյանքում հանդիպել են Ուսուցիչների հետ, գիտեն, թե որքան պարզ, որքան ներդաշնակ ու գեղեցիկ են Նրանք: Գեղեցկության այդ մթնոլորտը չէ՞ որ պետք է պարուրի այն ամենն, ինչ վերաբերում է Նրանց ոլորտին»:*

Անկասկած սա Ուսուցիչների և Դ. Կ.-ի հետ հանդիպումների մասին է Դաևջիլինգում: Եթե Լոնդոնում Ճերմակ Եղբայրության Պատգամաբերների հետ հանդիպումները անսպասելի էին ու կարճատև, ապա այս հանդիպումը շարունակական էր և ծրագրված: Դարջիլինգի հանդիպման ժամանակ ցուցումներ էին տրված այն մասին, թե ինչ է պետք անել մոտակա տարիներին՝ ըստ Տիրակալների Պլանի, այդ թվում նրանց գլխավոր առաքելության կոնկրետ հանձնարարության՝ Սովետական Ռուսաստան մեկնելու մասին, որ այնտեղ հաղորվեն «Մահաթմաների ուղերձները»:

Կենսագրական գրքում օրինակներ են բերվում, որ Ռերիխները մշտապես ցուցումներ էին ստանում Ուսուցչից: Ահա մի հատված 1921 թ. հուլիսի 25-ին Շիբաևին գրած նամակից. *«Հիմա Նրա ուղերձն ինձ հետևյալն է՝ Ամերիկա-*

յի արվեստի մեջ ներմուծել հոգևորը, Վարպետի անունով արվեստի դպրոց հիմնել և հիմնել «Այրվող Սիրտ» միությունը: Միությունն արդեն հիմնված է: Դպրոցը Աստծո կամոք, կբացվի աշնանը: Իսկ իմ արվեստի հոգևորությունը այստեղ խորապես հասկացված է, և նախատեսվում է, որ շատ աշակերտներ և հետևորդներ կունենանք: Այնուհոտև մենք պետք է մեկնենք Հնդկաստան՝ Աղյար, որտեղ հույս ունեմ՝ կհանդիպեմ Ձեզ». <...>

Ռերիխները մասամբ Արևելքին մոտենում էին Թեոսոֆիայի միջոցով, ավելի ճիշտ՝ Բլավատսկայայի միջոցով: Թեոսոֆ էր նաև Շիբաևը... Ռերիխն անկեղծորեն հավատում էր, որ թեոսոֆները կհասկանան իր առաքելությունը, թեկուզև մասամբ կմիանան դրան: 1922 թ. Հունիսի 22 ի նամակում նա Շիբաևին գրում է. *«Երեկ ստացանք Ձեր նամակը, իսկ երեկոյան տրված էր կարգադրությունը: Դրանում Դուք տեսնում եք, որ Օթյակը պետք է պահպանել Աղյարում, որ Ռուսաստանում Օթյակը յուրահատուկ տեղ կզբաղեցնի: Հարկավոր են նոր տարրեր: Հարկավոր էնորացնել բարի նետերի փետրակալումը, նշանակում է մարտեր կընթանան, և Ուսուցչի գործը կասեցնելու կարիք կլինի»:*

1924-1928 թվականներին Ռերիխները արշավ կազմակերպեցին Կենտրոնական Ասիայի դժվարանցանելի շրջաններով: Այն անցնում էր Հնդկաստան, Չինաստան, Ալթայ, Մոնղոլիա, Տիբեթ, Հնդկաստան երթուղիով: Բացի գիտական արժեքից՝ արշավը նշանավորվում էր նաև այն Ուսուցիչների հետ նոր հանդիպումով, ովքեր իրենց կարգադրություններով ուղղորդում էին աշխատակիցների գործունեությունը:

Արշավի ժամանակ կուտակված հսկայածավալ նյութերը համակարգում և մշակում էին պահանջում: Ն.Կ. Ռերիխը

Հնդկաստանում հիմնում է բարձր լեռնային «Ուռուսվատի» գիտական ուսումնասիրությունների ինստիտուտը, որ սանսկրիտերեն նշանակում է «Լուսաբաց». Ինստիտուտը ներգրավեց Ասիայի, Եվրոպայի, և Ամերիկայի տասնյակ գիտական հիմնարկների աշխատակցությունը:

Նիկոլայ Կոնստանտինովիչի աշխատասիրությունը պարզապես ապշեցնող է: Նա ստեղծել է ավելի քան 500 կտավ, էտյուդ և նկար: Գրվել են «Ասիայի սիրտը», «Ալթայ-Հիմալայներ», «Շողացող Շամբալան», և բազում այլ գրքեր ու հոդվածներ: Նա լայն հասարակական գործունեություն էր ծավալում:

1929 թ. Ն.Կ. Ռերիխը տարբեր լեզուներով հրապարակեց Մշակութային արժեքների մասին պայմանագրի նախագիծը: Երկար տարիներ գործադրած ջանքերից հետո 1935 թ. ապրիլի 15-ին Վաշինգտոնում ավելի քան 20 երկրներ ստորագրեցին Ռերիխի համաձայնագիրը՝ «Գեղարվեստական և գիտական հաստատությունների և պատմական հուշարձանների պահպանման մասին» պայմանագիրը: Այսօր ապրիլի 15-ը նշվում է որպես Մշակույթի միջազգային օր:

Ե. Ի. Ռերիխը 1920 թվականին Լոնդոնում սկսեց գրի առնել Կենդանի Էթիկայի՝ փիլիսոփայական նոր համակարգի առաջին տողերը, և մինչև կյանքի վերջը կատարում էր այս աշխատանքը: Կենդանի Էթիկայի 13 գրքեր ստեղծվել են նրա կողմից Ճերմակ Եղբայրության Ուսուցիչների օգնությամբ և ղեկավարությամբ:

Իր կյանքի ընթացքում Ելենա Իվանովնան մեծ քանակությամբ նամակներ է գրել բարեկաներին և աշխատակիցներին, որոնցում իր թղթակիցներին պարզ և մատչելի ձևով բացատրել է կեցության ամենաբարդ հարցեր: «Նամակները» հրատարակվել են մի քանի հատորով:

Օտար լեզուների փայլուն իմացությունը Ե.Ի Ռերիխին թույլ էր տալիս ռուսերեն թարգմանել «Գաղտնի Դոկտրինի» երկու հատորները, ինչպես նաև Մահաթմաների ընտրանին («Արևելքի Գավաթը»): Ռուսալեզու ընթերցողին այս կարևորագույն թեոսոֆիական ստեղծագործություններին ծանոթացնելը օրախնդիր անհրաժեշտություն էր, քանի որ հենց Ռուսաստանի հետ էին Շամբալայի Տիրակալները կապում ապագա Ոսկե Դարի հասարակության հոգևոր և բարոյական վերածնունը:

Ռերիխ ընտանիքի անձնազոհ կյանքն ու գործունեությունը շարունակությունն էր այն լայն հոգևոր-լուսավորչական աշխատանքի, որ Տիրակալներն սկսել էին Ե.Պ. Բլավատսկայայի օգնությամբ: Ռերիխների ընտանիքի առաքելությունն էր մարդկության գիտակցությունը նախապատրաստել մոտեցող Նոր Դարաշրջանին, դնել նոր մարդկային Ռասայի աշխարհայացքի հիմքերը: Ռերիխները մարդկության համար բացահայտեցին, որ Շամբալայի և Մայտրեյայի ժամանակը եկել է, և առաջին անգամ մոլորակի վրա ծածանեցին Աշխարհի Դրոշը-Մայտրեյայի Դրոշը:



Ռերիխների աշակերտներն ու հետևորդները



Քսաներորդ դարը դարձավ հոգևոր գիտելիքների ակտիվ տարածման ժամանակաշրջան՝ չնայած կառավարական, գիտական և հոգևոր շրջանակների դիմադրությանը, զանգվածային մտածողության քարացածությանը: Թեոսոֆիստական և Ռերիխյան շարժումները հետևորդներ ունեցան, ավելի ու ավելի շատ գրականություն էր լույս տեսնում Շամբալայի և Մահաթմաների մասին: Մեծ Ճերմակ եղբայրության հասկացությունը ավելի ու ավելի ակնառու գծեր էր ձեռք բերում:

Եղբայրության Ուսմունքի գործունեությունն ու հիմքերը պարզ ու հասկանալի լեզվով շարադրված են Ռերիխների աշակերտների ու հետևորդների աշխատանքներում:

Ա.Ի. Կլիզովսկին
Ճերմակ Եղբայրության առաքելության մասին:

Ալեքսանդր Իվանովիչ Կլիզովսկին՝ Ե.Ի.Բլավատսկայայի աշակերտը, իր «Նոր դարաշրջանի աշխարհըմբռնման հիմքերը» գրքում հստակ պատկերացում տվեց Մեծ Ճերմակ Եղբայրության Միսիայի մասին:

«Եղբայրությունը մի կենտրոն է, որտեղից ելնում է մեր մոլորակի մարդկության հոգևոր ղեկավարումը: Այն ամենը, ինչ մարդկությունը ստացել է ու ստանում է իր մտավոր, բարոյական և հոգևոր զարգացման ընթացքում, գալիս է այդ Միակ Ակունքից: Մարդկային ամբողջ իմաստությունը, նրա ամբողջ փիլիսոփայությունը և նրա բոլոր կրոնները սկիզբ են առնում այդ Միակ Ակունքից:

Մարդկության արշալույսին, երբ պետք էր մանուկ ժողովրդին հասարակության առաջին հիմքերը տալ, Եղբայրության անդամներից մեկը կամ գուցե պատրաստված մի աշակերտ, նրանց մեջ մարմնավորվեց որպես քուրմ, որպես տոհմի առաջնորդ, որպես իմաստուն կառավարիչ, որպես մարգարե, որ կազմակերպում և միավորում էր ժողովրդին և դնում էր պետականության հիմքերը, գիտելիքների, արվեստների և կրոնների հիմքերը:

Եվ հետագա զարգացման ընթացքում, երբ հարկավոր էր մարդկության գիտակցությունը հասցնել ավելի բարձր աստիճանի, նրա միտքն արթնացնել դեպի նոր ուղղություն կամ նրա գործունեությունն ուղղել դեպի նոր հուն, միշտ ուղարկվում էր մի իմաստուն, փիլիսոփա, օրենսդիր, ուսմունքի հիմնադիր, որ կատարում էին Եղբայրության կողմից իրենց վրա դրված առաջադրանքները: Այդ պատմական ժամանակներում Եղբայրության նշանավոր աշխատակիցներից կարելի է հիշատակել Սոկրատին, Ջորդանո Բրունոյին, Յակոբ Բյոմին և ուրիշների:

Երբեմն Եղբայրության այդ աշխատակիցները բացում էին դպրոցներ և միություններ, որոնք առավել պատրաստված մարդկանց մեջ բարձրագույն գիտելիք ու բարձրագույն իմաստություն էին տարածում: Դրանցից, որ կային պատմական ժամանակներում, հայտնի են Հերմետիկ, Ալեքսանդրյան, Նոր պլատոնական, Օրփեոսյան, Պյութագորական դպրոցները, որոնք մինչև այժմ էլ մարդկությանը սնում են իրենց իմաստությամբ:

Ժամանակ առ ժամանակ Եղբայրությունը աշխարհ է ուղարկում իրենց Եղբայրակիցներից մեկին, Մեծ Ուսուցիչներից մեկին, որոնցից յուրաքանչյուրը մարդկությանը տվել են գոյություն ունեցող համաշխարհային կրոններից մեկը:

Մի այլ աղբյուր, որից մարդկությունը կարող էր ստանալ գոնե մի կաթիլ իմաստություն, չկա, չկա մի Ուսուցիչ, որ կարողանար աշխարհ մուտք գործել մի այլ ճանապարհով, որ կշրջանցեր Եղբայրությունը: Այլ, ինքնուրույն ճանապարհով դեպի մարդկությունն են եկել և գալիս են կեղծ ուսուցիչներն ու կեղծ մարգարեները:

Ակունքի նույնությունը, որից սերել են բոլոր համաշխարհային կրոնները, նրանով է հաստատվում, որ բոլոր համաշ-

խարհային կրոնների հիմքերը նույնն են, դրանցից ոչ մեկը մյուսին չի հակասում, և յուրաքանչյուր հաջորդ Ուսուցիչ, նույն հիմնական ճշմարտություններին տվել է ավելի լայն մեկնաբանություն, շարունակել է իր նախորդների գործը՝ մարդկության լուսավորության գործը»[15]:

Արթուր Հեյդոկը Շամբալայի աշխատանքի նշանակության մասին



Ն.Կ. Ռերիխի աշակերտ, գրող, թարգմանիչ Արթուր Պետրովիչ Հեյդոկը այնքան էր ոգևորված Կենդանի Էթիկայի Ուսմունքով, որ իր ստեղծագործական կյանքը նվիրեց նոր գիտելիքների մասսայականացմանը:

Իր շատ հոդվածներում նա գրել է Ն.Կ. Ռերիխի մասին: Անգլերենից թարգմանել է տիբեթագետ Ա.Դավիդ-Նեելի գրքերը, «Գաղտնի Դոկտրինի» երրորդ հատորը և Ե.Պ. Բլավատսկայայի «Մերկացված Իսիդան», «Թեոսոֆիական բառարանը», «Նամակներ մահաթմա Սիննետին» և այլ թեոսոֆիական գործերը: Գրել է բազմաթիվ պատմվածքներ հրաշագործ ֆենոմենների մասին:

[15] Клизовский А. И. Основы миропонимания новой эпохи. В 3-х томах. – Рига: Виеда, 1990. Том 1.

Իր փիլիսոփայական «Դարի մեծագույն իրադարձությունները» (1982 թ.) գրքում խոսել է Շամբալայի գործունեության ու մարդկության համար նրա նշանակության մասին:

«Մարդու գաղտնիքը, նրա ծագումը, դերը աշխարհակառուցման մեջ բացահայտելու համար, հարկավոր են բարձրագույն գիտելիքներ, որոնց պահապանը Շամբալան է հանդիսանում: Էվոլյուցիայի թշնամիներին պետք է, և նրանք ամեն մի հնար կգործադրեն, որ թերագնահատեն Շամբալայի նշանակությունը և դրանով Ազնի Յոգայի նշանակությունը հասցնեն տարբեր Յոգաների մասին գրված գրքերի մակարդակին, որոնք հիմա շատ են տարածված: Նրանց զենքը նսեմացնելն է: Հիմա արդեն իսկ փորձեր են արվում Շամբալայի Հիմալայների Մահաթմաներին պատկերել որպես ինչ-որ Հիմալայան ճգնավորների աղանդ, այն դեպքում, երբ Շամբալայի մեծությունն ու մասշտաբայնությունը անհնար է նկարագրել և ընդլայնված գիտակցություն է պահանջվում դրանք տեղակայելու համար...կարճ ասած՝ Շամբալան կարելի է բնութագրել որպես Տիեզերական Բանականության ներկայացուցչություն, որ պատասխանատու է մեր մոլորակի և մարդկության համար, որտեղ Թևավոր Հրեշտակների փոխարեն աշխատում են մեզանից անհաշվելի ժամանակ առաջ իրենց էվոլյուցիան սկսած ու այդ իսկ պատճառով հոգևոր զարգացումով շատ առաջ անցած մարդիկ:

Այս մոտեցումը պետք է արտահայտվի այն գիտակցությունների վրա, որ ներծծված են աշխարհաստեղծման եկեղեցական պատկերացումներով: Սակայն հնի կործանումն անխուսափելի է, այլապես գիտակցությունը չի կարող լցվել նոր բովանդակությամբ:«Չկա մի աստված, որ նախկինում

մարդ չի եղել, ասում է արևելյան աֆորիզմը՝ հաստատելով էվոլյուցիան:

Շամբալան անվանում են նաև Միջազգային Կառավարություն: Այս անվանումը ինչ-որ չափով արտահայտում է Շամբալայի կարգավիճակը, եթե կարելի է այսպես ասել, պայմանով, որ Շամբալան երբեք ֆիզիկական ճնշումներ չի գործադրում՝ դիվանագիտությամբ, սակայն ուղղորդում է ժողովուրդների մտածողությունը, որքանով թույլ է տալիս ազատ կամքի Տիեզերական օրենքը, որ յուրաքանչյուր մարդու իր ճանապարհը գտնելու հնարավորություն է տալիս:

Սակայն սա չի բացառում Շամբալայի անմիջական միջամտությունը պետության կառավարմանը: Մենք պատմական օրինակներ ունենք, երբ Շամբալայի դեսպանները հայտնվել են տարբեր երկրներում և արժեքավոր ցուցումներ են տվել:

Բայց երբ խամրում և հանգչում են հին, իրենց դարն ապրած լուսատուները, այնժամ վառվում են նորերը՝ ավելի զորեղ, ավելի կատարյալ և ավելի պայծառ: Ու այդպիսի լուսատուն այժմ վառվում է: Շամբալայի Մահաթմաները աշխարհին տվել են Ագնի Յոգան, այլ անվանումով՝ Կենդանի Էթիկայի Ուսմունքը: Հանդիսանալով թեոսոֆիական ուսմունքի գագաթնակետը, որ Ելենա Պետրովնա Բլավատսկայային էր տրվել Մահաթմաների կողմից, Ագնի Յոգան չի ժխտում մեծ կրոններին հատուկ համամարդկային էթիկական և բարոյական հիմքերը, բայց մաքրում է դրանք դարավոր նստվածքներից և տանում է դեպի նոր աշխարհընկալում, որ կոչում է գու հառնումի անսահմանափակության:

Շամբալան մեծ կրոնների, փիլիսոփայությունների, լավագույն մտքերի, գիտական հայտնագործությունների ակունքն է: Շամբալայի Տիրակալները տիեզերական զո-

ություն ունեցողներ են, որոնց սահմանները մենք չգիտենք, և Բնության ուժերը ենթարկվում են Նրանց: Բայց նրանք սիրո և կարեկցանքի Տիրակալներ են, որ մեծագույն ճիգեր են գործադրում, հանուն մարդկության Բարօրության մեծամեծ զոհողություններ են անում: Շամբալան մտքի վիթխարի լաբորատորիա է՝ ոչ թե զբաղեցրած տարածքով, այլ իր Մտածողների ուժով: Սակայն այս փաստի ամբողջ նշանակությունը հասկանալի է միայն նրանց, ովքեր համոզվել են, որ մտքերը կարող են հաղորդվել հեռավորության վրա: Մարդ կային գիտակցության արգասիք լինելով, միտքը կենդանի է, ինչպես որ կենդանի է այն ծնողը: Այն կայծակնային է և իրականացնում է ուղարկողի կամքը: Այս պատճառով Շամբալան կարող է հզորագույն ռադիոկայանի նմանվել, այն տարբերությամբ, որ այն չի ենթարկվում սովորական ռադիոյի խանգարումներին, և ուղարկված մտքերը հիմնականում մարդկանց կողմից ընկալվում են ոչ թե որպես ինչ-որ արտաքին բան, այլ որպես սեփական:

Շամբալայի վեհությանը կարելի է հասնել միայն ոգու հառնումի ճանապարհներին, որ առաջարկվում են Շամբալայի Մեծ Ուսուցիչների կողմից:

Նոր ուսմունքի հիմնական գաղափարը Ա.Պ.Հեյդոկը անվանում էր «համագործակցության սկզբունքը, ինչպես մարդկանց, այդպես էլ պետությունների միջև, որն էլ վերջին հաշվով պետք է հանգեցնի ժողովուրդների Համաշխարհային Եղբայրության՝ համաշխարհային Միության ձևավորմանը»[16]:

[16] Величайшее событие века / А.П. Хейдок. Огонь у порога. – Магнитогорск, «Амрита-Урал, 1994. – 816 с.

Ս.Վ. Ստուլգինսկին էվոլյուցիայի էության և Տիեզերական Օրենքների մասին

Ստեպան Վիկենտևիչ Ստուլգինսկին (Ստուլգինսկիս) լիտվական պետական և հասարակական գործիչ է: «Իդեալիստական» հայացքների համար 1949 թվականից 6 տարի անց է կացրել ՆԿՎԴ-ի ճամբարում, 1990-ական թվականներին գլխավորում էր իր կողմից վերականգնված Լիտվական Ռերիխյան Ընկերությունը:

Ս.Վ.Ստուլգինսկին ամենաբարդ հարցերը պարզ լեզվով բացատրելու յուրահատուկ ձիրք ուներ: Երբ 1970 թվականին «самиздат»-ի կողմից լույս տեսավ նրա «Արևելքի Տիեզերական լեգենդները» գիրքը՝ առանց հեղինակի անունը նշելու (ըստ էության դա «Գաղտնի Դոկտրինի» հիման վրա աշխարհի և մարդկության էվոլյուցիայի հանրամատչելի շարադրանքն էր) այն, մեծ հետքրքրություն առաջ բերելով, շատ արագ տարածվեց ամբողջ Սովետական Միությունով մեկ:

1995թ. սկիզբներին Ստեպան Վիկենտևիչը ավարտեց իր վերջին գիրքը «Ագնի Յոգայի ներածությունը», որ նվիրված էր Շամբալային և Մահաթմաներին:

Մեջ բերենք «Ո՞վ են վերջապես նրանք» գլուխը այդ գրքից, որում համառոտ շարադրված է էվոլյուցիայի և տիեզերքի Օրենքների էությունը.

*«...Մահաթմաներն իրենք իրենց գոյությունը բացատրում են մարդկության **տիեզերական էվոլյուցիայի օրենքով:** Այդ օրենքի էությունը հետևյալն է. յուրաքանչյուր առանձին մարդ անմահ հոգևոր էակ է, որի էվոլյուցիան կատարվում է Երկրի վրա կրկնակի մարմնավորման ճանապարհով: Մարդկային մարմնի մահվանից հետո նրա հոգևոր էությունը չի*

ոչնչանում, այլ շարունակում է ինքնուրույն տարածական գոյությունը: Երբ գալիս էժամանակը, «Ես»-ը վերամարմնավորվում է: Այսպես, յուրաքանչյուր մարդու կյանքը կրկնվում է շատ անգամ:

Վերամարմնավորումների՝ Երկրի վրա ապրելու ընթացքում մարդու ձեռք բերած մտավոր և բարոյական որակները պահպանվում են, գումարվում և այս կերպ աճում են: ***Շատ վերմարմնավորումներով անցնելուց հետո՝ հոգևոր որակները աստիճանաբար աճում ու վարգանում են:*** *Այսպես, երկար ժամանակի ընթացքում մարդը վերջապես հասնում է մարդկային լիարժեք կատարելության՝ ավարտելով մարդկության համար նախասահմանված էվոլյուցիան:*

Այսպիսի՝ «արդեն ոչ մարդն» սկսում է տիեզերական էվոլյուցիայի հաջորդ՝ «ետմարդկային» փուլը, որ կարելի էանվանել աստվածամարդության կամ նույնիսկ՝ աստվածային: Չէ՞ որ նրագիտակցությունն այնքանով է գերազանցում սովորական մարդու գիտակցությանը, որքանով վերջինս գերազանցում է անասունի գիտակցությանը: Էվոլյուցիայի սահմաններում ոչ մի գերբնականություն չկա: Այդ էակները, որ անցել են էվոլյուցիայի հաջորդ աստիճան, կոչվում են Մահաթմաներ, որ թարգմանաբար նշանակում է «Մեծ Հոգիներ»:

Մարդու տիեզերական էվոլյուցիան ոչ միայն վերմարմնավորման մեջ է, այլ նաև պատճառի ու հետևանքի օրենքի՝

կարմայի օրենքի *մեջ: Այդ օրենքն ասում է, որ մարդու այս կամ այն «ճակատագիրը»՝ նրա երջանիկ կամ տառապալից կյանքը, պայմանավորված է նրանախորդ կյանքերի հետևանքներով: Յուրաքանչյուրին տրվում է ըստ իր վաստակի, յուրաքանչյուրը հնձում է այն ամենի պտուղները, ինչ նա ցանել է նախորդ կյանքերում: Ժողովրդական իմաստությունը գիտի կարմայի մասին, դրա մասին ասացվածքներ կան. «Ինչ որ ցանես, այն կհնձես», «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի փոսը» և այլն... <...>*

Լինելով էվոլյուցիայի հաջորդ՝ բարձր աստիճանի վրա՝ Մահաթմաները՝ սովորական մարդկանց համեմատությամբ վիթխարի գիտելիքների, իմաստության և ներքին հզոր ուժերի են տիրապետում: Համաձայն ***տիեզերական կարգի՝ տիեզերքի հիերարխիկ կառավարման սկզբունքի****, Մահաթմաները մեր մոլորակի անտեսանելի Կառավարությունն են ներկայացնում: Մեր գիտությանն անհայտ սարքավորումներից օգտվելով՝ նրանք կարող են տեսնել մոլորակի ցանկացած անկյուն, կարող են կարդալ մարդկանց մտքերը: Երկիր ուղարկվող էվոլյուցիոն գաղափարներով Մահաթմաները ղեկավարում են մարդկության էվոլյուցիան: Հարկ եղած դեպքում Համաշխարհային այս կառավարությունը խառնվում է աշխարհի գործերին, ուղարկում է իր դեսպանորդներին, որոնք բերում են նախազգուշացումներ, խորհուրդ կամ օգնություն»*[17]*:*

[17] Стульгинский С.В. Введение в Агни Йогу. – Новосибирск, 1997. – 133 с.



Երկրի վրա՝, թե երկնքում



Թեոսոֆիական դոկտրինը, որ հանդիսանում է Հնագույն Գիտելիք, հոգևոր հետազոտողի հայացքի առջև տիեզերքի և մարդկության հոյակապ պատկերն է կերտում: Մարդու կեցությունը բոլորովին այլ, օրինաչափ իմաստ է ձեռք բերում՝ կապված վերամարմնավորման և հոգևոր էության (նրա գիտակցության)՝ հանուն էվոլյուցիոն սանդուղքով անընդհատ հառնումի՝ մինչև Աստվածային վիճակը: Տիեզերքում հաստատված է **Հիերարխիկ սկզբունքը**, և յուրաքանչյուր էակ գտնվում է հիերարխիկ շղթայի իր մակարդակում՝ անվերջ առաջ շարժվելով ցածրագույն վիճակներից դեպի բարձրագույնը: Հակոբի Սանդուղքը այդ հառնումի վառ պատկերն է:

Մարդկության Ուսուցիչները, որ ներկայացնում են Մեծ Ճերմակ Եղբայրությունը, կանգնած են այդ վիթխարի սանդուղքի առավել բարձր աստիճանների վրա՝ առավելապես նուրբ մարմինների մեջ և համբարձյալ վիճակում: Իրենց ժամանակին նրանք անցել են էվոլյուցիայի մարդկային փուլը

Տիեզերքի այլ մոլորակների վրա և այժմ երկրային մարդուն օգնում են իր էվոլյուցիայի խնդրում:

Եվ այնուամենայնիվ՝ որտե՞ղ է գտնվում Եղբայրությունը՝ երկրի վրա՞, թե՞ Երկնքում:

Ե.Ի. Ռերիխը գրել է, որ «Ճերմակ Եղբայրությունն ունի իր Լույսի Կացարանը կամ Երկնային Շամբալան Նուրբ աշխարհում, բայց նաև որպես Երկնային Շամբալայի արտացոլանք՝ Տրանսհիմալայան անմատչելի ամրությունում» (18.12.1948).

Եղբայրությունը հսկայական աշխատանք է իրականացնում կեցության բոլոր ոլորտներում: Աշխատակիցների մի մասը ակտիվորեն աշխատում է աշխարհում, գիտակցաբար մարմնավորվելով ֆիզիկական պլանով, մյուսները գտնվում են նուրբ ոլորտներում, որ մոտ են Երկրին, որտեղից կարող են կապ պահպանել իրենց աշակերտների և դեսպանորդների հետ և նրանց միջոցով մարդկանց օգնության հասնել, երրորդները այնքան բարձր ոլորտներ են հասել, որ այլևս մեզ հետ հաղորակցվելու հնարավորություն չունեն:

Որքան ավելի բարձր Հիերարխիական աստիճանի վրա են էակները, այնքան ավելի բարձր է նրանց թրթռանքը: Նրանք, ովքեր թրթռանքի ավելի փոքր աստիճան ունեն, երկար չեն կարող դիմանալ Վերին Էակների ներկայությանը, սակայն, նույն կերպ ավերիչ է մեր Ուսուցիչների այցելությունը երկրային պլանի թրթիռների համար:

Աստվածաշնչից հիշենք Աստծո հայտնությունը Մովսեսին՝ այրվող թփի տեսքով: Աստված Մովսեսին զգուշացրեց, որ նա մոտ չգնա, քանի որ կարող է այրել մարմինը: Իսկ Աստվածամոր և սրբերի՝ Սերգիյ Ռադոնեսկուն և Սերաֆիմ Սարովսկուն հայտնվելու պահին Երկնային էակների շողար-

ձակումն այնքան ուժեղ էր, որ նրանք չկարողացան նայել ու ծնկի ընկան:

Ե.Ի Ռերիխի նամակներից մենք իմանում ենք, որ *«Հիմալայան Մահաթմաները երկար չեն կարողանում շփվել երկրաբնակների աուրայի հետ և անգամ պարկապես լինել հովիտների մթնոլորտում՝ թրթիռների անհամատեղելիության պատճառով, որովհետև երկարատև հաղորդակցությունը երկու կողմերի համար էլ վնասակար է, երկրաբնակների դեպքում՝ նույնիսկ կործանարար: Այսպես Ե.Պ. Բլավատսկայայի ժամանակներում Մահաթմա Կ.Հ.-ն, որ մյուսներից ավելի հաճախ էր շփվում հովիտների աուրաների հետ, ուժերը վերականգնելու համար իր Հիերարխի կողմից կանչվեց Ամրակերտ: Գիտենք նաև, որ մի ուրիշ Մահաթմա Սիկկիմի լեռներում Ե.Պ.Բլավատսկայայի հետ հանդիպման ժամանակ գրեթեամբողջ ժամանակ օպոնից հատուկ պրեպարատ էր ներշնչում: Մենք գիտենք, որ Բուդդան երկար ժամանակ չէր կարողանում մնալ քաղաքներում՝ ժողովրդի մեջ և հաճախ հեռանում էր դեպի անապատ»*[18]: Այսպիսով Եղբայրությունն ամենուրեք է: Բայցևայնպես մեր ֆիզիկական աշխարհի ցածր թրթռականության և խտության պատճառով Շամբալայի Տիրակալները չեն կարող մնալ երկրային մարմիններում, և լինում են նուրբ աշխարհներում, Լույսի եթերային օկտավաներում՝ Երկնային Շամբալայում:

Բայց քանի որ մեր իմաստուն Ուսուցիչները մեզ չեն կարող թողնել առանց իրենց օգնության, Նրանք գործում են առավելապես իրենց Դեսպանորդների միջոցով:

[18] Письма Елены Рерих. – Рига, 1940. Т. II.



Ովքեր են Դեսպանորդները

Մեծ Եղբայրության Դեսպանորդը այն մարդն է, ում ընտրում են Շամբալայի Տիրակալները, որպեսզի նա Իրենց անունից կատարի իրենց կարգադրություններն ու հանձնարարությունները: Դեսպանորդը միջնորդ է, որ կապում է երկու աշխարհների հաղորդակցությունը, նա ծառայում է որպես Աստվածային էներգիաների և գիտելիքների ուղեկցորդ՝ դեպի ֆիզիկական պլան:

Դեսպանորդության ինստիտուտը գոյություն է ունեցել բոլոր ժամանակներում: Շատ կրոնական մշակույթներում, նաև հուդայականության, քրիստոնեության, իսլամի, զրադաշտականության, հին հույների և հռոմեացիների և այլ կրոններում եղել են մարգարեներ, դեսպանորդներ, մեսիաներ, որոնք իրենց մեջ կրում էին առավել Բարձր Էակների ներկայությունը և խոսում էին Աստծո անունից: Հնդիկ մտածող Շանկարաչարյան, աստվածաշնչյան մարգարեներ Մովսեսը և Աբրահամը, պարսկական քուրմ Զրադաշտը, հույն փիլիսոփա Սոկրատը քրիստոնեական ՄԵԾ ՓՐԿԻՉ ՀԻ-



ՍՈՒՍԸ, արաբ քարոզիչ Մուհամեդը նրանցից ամենանշանավորներն են:

Ե.Պ.Բլավատսկայան, Ե.Ի և Ն.Կ. Ռերիխները Եղբայրության դեսպանորդներ էին: Նրանք երջանկություն են ունեցել Ուսուցիչների հետ «կենդանի» հաղորդակցվելու: Սակայն, սկսած XX դարասկզբից, Մեծ Ուսուցիչներն իրենց Ուղերձները փոխանցում են կեցության նուրբ պլաններից՝ առանց անմիջականորեն Երկիր գալու:

Ինչպե՞ս են Մեծ Ուսուցիչներն ընտրում Դեսպանորդներին:

Ուսուցչի և աշակերտի միջև կապերը ձևավորվում են այն շատ վերամարմնավորումների ընթացքում, երբ աշակերտը ձեռքբերումների, նվիրվածության, կարգապահության, զոհաբերության որոշակի մակարդակի է հասնում: Եվ յուրաքանչյուր նոր մարմնավորման մեջ աշակերտը պարտավոր է հաստատել իր նախորդ վաստակը, ու նաև երկար ժամանակ անցնել ծանր փորձություններով, որպեսզի ապացուցի համագործակցելու, Աստվածային Ակունքից հաղորդագրություններ ընդունելու իր իրավունքը:

Դեսպանորդները կատարելագործում են իրենցից ավելի բարձր ոլորտներում գտնվող Ուսուցիչների հետ համագործակցելու ունակությունները և ապա Հին Ուսմունքը փոխադրում են ժամանակակից մատչելի լեզվի: Նրանց բարձր հոգևոր-բարոյական որակները հաղորդչի մաքրության գրավականն են, որ տեղեկատվությունն ու էներգիան երկրային պլան հասնեն առավելագույնս մաքուր, անխաթար տեսքով:



XX–XXI դարերի փիլիսոփայական-էթիկական հոգևոր ուսմունքները



Ավիրական ավանդույթների գիտելիքների հաղորդումը մինչև օրս էլ չի դադարում: Սակայն ժամանակակից ուսմունքները իրենց պարզ, սիմվոլիզմից զերծ շարադրանքով տարբերվում են XIX – դարի վերջերի և XX դարի սկիզբների խարհիրդապաշտական աշխատություններից: Նրանցում նկարագրվում են հոգևոր-բարոյական ստանդարտները և կոնկրետ հանձնարարականներ են տրվում ներկայիս քաղաքակրթության ամենօրյա կեցության պայմաններում էթիկական պատշաճ որակների համար:

Բուլղարական ուսուցիչներ Պյոտր Դոնովը և Օմրաամ Միքայել Այվանխովը

Պյոտր Դոնովը (Դինով) բուլղարական հոգևոր ուսուցիչ է՝ Եղբայրության դեսպանորդ: 1922 թ. նա Իզգրևում (Սոֆիայի արվարձանում) բացեց «Մեծ Եղբայրության Համաշխարհային դպրոցը», անուն առ անուն հավաքագրելով աշակերտական մի քանի դասարան, որոնց հետ անձամբ էր պարապում: Ժամանակի ընթացքում ուսանելու ցանկություն ունեցողների թիվն այնքան մեծացավ, որ «Դպրոցն» սկսեց հանրային հանդիպումներ անցկացնել, որտեղ արդեն հարյուրավոր մարդիկ էին հավաքվում:

Պ.Դոնովն ասում էր, որ «Դպրոցի» խնդիրն է մարդկանց մտքերն ու սրտերը նախապատրաստելը Ճշմարտությունն ընկալելուն, որը ծագում է *«Հավերժական Լույսի աշխարհից, որպեսզի լուսավորվեն մտքերը, վերածնվեն սրտերը, վեհանան ու նորոգվեն Ճշմարտության բոլոր որդիների հոգիները, որոնք նախորոշված են նոր մարդկության սաղմերը լինելու, և որոնց համար սլավոնականությունը օջախ կլինի»*[19].

Պյոտր Դոնովի աշակերտները գիրք հրապարակեցին նրա մասին և նրա մտքերը Մեծ Ուսուցիչների մասին: Նրանում ասվում է. *«Մեծ հոգիները՝ Կատարյալները, ավարտած լիելով իրենց մարդկային կարգացումը, կպմում են Համաշխարհային Մեծ Եղբայրությունը: Նրանք Սիրով և Իմաստությամբ կառավարում են մարդկությանը՝ իր կատարելգործման ճանապարհին: Համաշխարհային Ճերմակ Եղբայրությունը աշխատում էարևի նման՝ ջերմություն ու լույս էտալիս, կյանք*

[19] Մեջբերվում է հետեյալ գրքից՝ Учитель. – София, 1947. (Книга составлена по стенографическим записям Петра Донова его ближайшими учениками).

ու իմպուլս է տալիս: Մարդկության պատմության բոլոր մեծ իմպուլսները, որ մշակույթներ են սկզբնավորել, այս Աստվածային կենտրոնից են ծագել:

Աշխարհի բոլոր միստիկական եղբայրությունները, որ սիրո մեջ են, Աստվածայինի կրողներ են հանդիսանում և Համաշխարհային Ճերմակ Եղբայրությունից աջակցություն ունեն: Հենց նրա միջոցով է, որ միավորվում են: Ճերմակ Եղբայրությունը հավարամյակների ավանդույթներ ունի: Այս ավանդույթների հետքերը կան բոլոր այն ժողովուրդների մեջ, որոնցում այն աշխատել է: Սրանք Եղբայրության աշխատանքի մեթոդներն են»:

Ուսուցչի խոսքերից աշակերտները հետևյալ պարզաբանումներն են տվել *Համաշխարհային Ճերմակ Եղբայրություն* անվանումին:

«Համաշխարհային Ճերմակ Եղբայրություն անվանումը հարցեր է առաջացնում այն մարդկանց մեջ, ովքեր «Ճերմակ» բառի մեջ ռասիստական իմաստ են տեսնում: Մյուս երկու բառերը՝ «Համաշխարհային» և «Եղբայրություն», դեն են նետում այս առիթով ամեն մի երկիմաստություն:

Եղբայրություն – այս բառը նշանակում է, որ այս ուսմունքը հասցեգրված է Աշխարհի բոլոր այն մարդկանց միավորմանը, որոնց վիճակված է միասին ապրել՝ որպես նույն հոր՝ Աստծո որդիներ:

Ճերմակ – այս բառը որպես խորհրդանշական պետք է ընդունել: Այն մեզ դարձնում է դեպի ճերմակ լույսը՝ հոգևոր բարձրագույն սիմվոլին, որ բոլոր գույների սինթեզն է հանդիսանում (*մի բան, որ կարելի է տեսնել պրիզմայի միջով նրա անցնելիս*), գույներ, որոնք լուսավորչական ավանդույթը համարում է հոգու առաքինության արտահայտություն:





Համաշխարհային – Ֆրանսերենից թարգմանություն է Universelle, որ լայն իմաստ ունի: Իր հոգեբանական կառուցվածքի շնորհիվ մարդը, որ ստեղծված է Աստծո պատկերով, ունակ է բարձրացնելու և ընդլայնելու իր գիտակցությունը՝ մինչև կյանքի տիեզերական ընկալումը»:

Պյոտր Դոնովի աշակերտ Օմրաամ Միքայել Այվանխովը հազարավոր դասախոսություններ է կարդացել: Նրա դասախոսությունների սղագրությունները ժամանակի ընթացքում հրատարակվել են գրքերի և բրոշյուրների տեսքով: Նա համոզված էր, որ մարդիկ պետք է Երկրի վրա ստեղծեն Եղբայրության նախատիպերը, որպեսզի Երկրի վրա, ինչպես Երկնքում է, բնության և միմյանց հետ ներդաշնակության

մեջ ապրեն: Հենց այս տեսանկյունից էր նա դիտարկում իր կողմից Ֆրանսիայում հիմնադրված «Համաշխարհային Ճերմակ Եղբայրության Դպրոցներ»- ի բաժանմունքը և իր խնդիրն էր համարում *«այդ մեծ եղբայրներին օգնելը: Ես գիտակցաբար նրանց խոստացել եմ օգնել, որ նրանք մի օր կարողանան իջնել նախապատրաստված, մաքրված հոգիների մեջ»:*

«Եղբայրությունը պետք է գոյություն ունենա աշխարհում՝ մարդկանց մեջ,և քանի որ այն արդեն գոյություն ունի բնության մեջ, նշանակում է՝ մենք պետք է ապրենք ըստ Եղբայրության օրենքների: Եղբայրությունը գոյություն ունի Տիեզերքում, և այն կազմված էմարգարեներից, որ ձեռնադրված են մեծ Ուսուցիչներ: Բոլորը միասին են աշխատում՝ փեթակի մեղուների պես, որ Ամենաբարձրյալի համար կերակուր են պատրաստում: Եթե այսօր մարդիկ իրենց միմյանցից առանձնացած են կգում, միմյանցից մեկուսացած են, դժբախտ են, պատճառն այն է, որ խզվել էՄեծ Ուսուցիչների հետ նրանց կապը: Համաշխարհային Ճերմակ Եղբայրությունը հրավիրում է ամբողջ աշխարհում եղբայրական, ներդաշնակ կյանք իրականացնելու»[20]*:*

Միշտ և ամենուրեք խոսքը նույն Ուսմունքի մասին է, քանի որ ճշմարտությունը չի փոխվում: Բայց քանի որ մարդկությունը զարգանում է, միջոցները, մեթոդները, ձևերը չպետք է նույնը մնան:

Այսպես, նայե՛ք, երբ երեխան մեծանում է, նա չի կարող նույն հագուստը կրել, որ կրել է երկու կամ երեք տարեկանում. Նրան պետք է ուրիշը տալ: Այսպես է նաև փիլիսոփա-

[20] Айванхов О.М. Второе рождение: Любовь. Мудрость. Истина. Том 1. – М.: Просвета, 2009. – 262 с.

յության և կրոնների մեջ. Յուրաքանչյուր նոր դարաշրջան նոր ձևերի կարիք ունի: Իսկ այժմ գալիս է ժամանակը, երբ Համաշխարհային Ճերմակ Եղբայրությունը, որ գոյություն ունի երկնքում, ուզում է իրեն ներկայացնել Երկրի վրա:

Տեր Հիսուսն Իր տված աղոթքում ասում է.«Թող լինի կամք քո՝ որպես յերկինս և յերկնի»[21]:

Ամերիկյան դեսպանորդներ Բալլարդները և Պրոֆետները

Ամերիկյան դեսպանորդների մեջ հատուկ տեղ են զբաղեցնում երկու ընտանեկան զույգեր՝ Բալլարդները և Պրոֆետները: XX դարի 30-ական թվականներին Մեծ Ճերմակ Եղբայրության դեսպանորդն էր Գայ Բալլարդը, որն իր աշխատությունները տպագրում էր Գոդֆրի Ռեյ Քինգ կեղծանունով: Իր կնոջ՝ Էդնա Բալլարդի հետ նա Չիկագոյում՝ Իլլինոյս նահանգում հիմնեց «ԵՍ ԵՄ» կազմակերպությունը, որն այնքան մեծ ճանաչում գտավ ԱՄՆ-ում, որ 1938 թ. մոտ միլիոն հետևորդ ուներ: Բալլարդը երջանկություն ունեցավ հանդիպելու իր Ուսուցիչ Սեն Ժերմենի հետ, որ նրան ցույց տվել Եղբայրության բնակատեղիները և բացատրեց նրա ապագա առաքելությունը: Գայ և Էդնա Բալլարդների միջոցով Սեն Ժերմենն առաջին անգամ աշխարհին տվեց մանուշակագույն բոցի մասին գիտելիքը:

Մեծ Ճերմակ Եղբայրության մասին Գայ Բալլարդը խոսում էր որպես Անմահ Սրբերի և Իմաստունների Եղբայրության, որ անցել են Վերափոխման ձեռնադրումը, Հարությունը և Համբարձումը:

[21] Նույն գրքում. Том 2.

Բալլարդի տված Ուսմունքում Եղբայրության Ուսուցիչ-ները անվանվում էին Համբարձյալ Վեհապետեր՝ բացի 20-ից, որոնց նկարագրում էր Ե. Պ. Բլավատսկայան[22]:

Դեսպանորդ Մարկ Պրոֆետի ծառայությունն սկսվեց 1950 թվականին, երբ նա սկսեց ուղերձներ ստանալ Ուսուցչից (Համբարձյալ Վեհապետ Էլ Մորիայից) և նամակների տեսքով տարածել դրանք, որոնք կոչվում էին «Իմաստության Մարգարիտներ»: Ավելի ուշ Համբարձյալ Տիրակալներն

[22] Վիկիպեդիայի նյութերի համաձայն. – URL: https://en.wikipedia.org/wiki/%22I_AM%22_Activity.

այդ ուսմունքը սկսեցին հաղորդել Էլիզաբեթ Կլեր Պրոֆետի՝ Մարկ Պրոֆետի կնոջ միջոցով:

Պրոֆետները շատ երկրներ այցելեցին, որտեղ հանդես էին գալիս դասախոսություններով և հանդիպում էին հայտնի հասարակական և կրոնական գործիչների հետ: Նրանք հիմնեցին մի քանի կազմակերպություններ, որոնցից ամենանշանավորը 1958 թ. ստեղծված Լայթհաուզ Սամմիտն էր (Գագաթնային Փարոս):

Պրոֆետների գրքերում նկարագրված են հոգևոր անհատական աշխատանքի միջոցները, Էվոլյուցիայի օրենքները, ինչպես նաև հանգամանորեն պատմում են Մեծ Ճերմակ Եղբայրության Ուսուցիչների մասին «Վեհապետերն ու նրան բնակատեղիները» գրքում: Պրոֆետները Համբարձյալ Վեհապետեր էին անվանում այն Անհատականություններին, որ ապրում էին ֆիզիկական մարմիններով, բայց կարողացել էին հասնել Համբարձման, այսինքն՝ մաքրված ներքին ԵՍ-ի հետ լիակատար միացման՝ ԵՍ-ը ԵՍ ԵՄ որ եմ-ի հետ, Աստծո՝ յուրաքանչյուր մարդու մեջ անհատականացման մեջ ունիկալ Ներկայությամբ[23]:

Մարկ և Էլիզաբեթ Պրոֆետների «Վեհապետերը և նրանց բնակատեղիները» գիրք-հանրագիտարանում հեղինակները խոսում են Շամբալայի մասին՝ որպես Սանատ Կումարայի, Հիերարխ Վեներայի և այլոց մասին, որոնք իրենց օգնականների հետ բազում միլիոնավոր տարիներ առաջ եկել են մեր մոլորակ երկրային մարդուն օգնելու համար:

«Շամբալան Սանատ Կումարայի և Հաութամա Բուդդայի հինավուրց տունն է, որ գտնվաում է Գոբի անապատի եթերային թագավորությունում: Այդ Սրբավայրը, որ ինչ-որ

[23] Վիկիպեդիայի նյութերի համաձայն. – URL: https://en.wikipedia.org/wiki/The_Summit_Lighthouse.

ժամանակ ֆիզիկապես է գոյություն ունեցել, հետագայում հեռացրել են դեպի եթերային օկտավա, այսինքն՝ երկնային աշխարհ:

Սկզբնական շրջանում բնակատեղին կառուցվել էր Վեներայի հիերարխի՝ Սանատ Կումարայի համար, որ Երկիր էր եկել ամենախավար դարաշրջանում, երբ այս մոլորակի էվոլյուցիաները կորցրել էին իրենց ամբողջ լույսը, և այստեղ ոչ ոք չէր մնացել, որ երկրպագեր Աստծո Ներկայությանը, կամ Ներքին Բուդդային: Սանատ Կումարայի հետ՝ հատուկ առաքելություն իրականացնելու համար եկավ մի ջակատ, որ կազմված էր հարյուր քառասուն հազար լույսի հոգինե-

ից, որ ինքնակամ հանձն առան Երկրի մարդկանց անունից կյանքի հուրը պահպանելու գործը:

Չորս հարյուր հոգին, որ ձևավորում էին առաջնային ջոկատը, նախորդեցին Սանատ Կումարայի գալստյանը, որպեսզի Ճերմակ կղզու վրա, որ գտնվում էր Գոբիի ծովի կապույտ ջրերի մեջ (այնտեղ, որտեղ այժմ Գոբի անապատն է) կառուցեին այն հոյակերտ կացարանը, որը հավիտյանս պետք է դառնար լեգենդար Շամբալա: Քաղաքը սկզբում Վեներայի վրա գտնվող Կումար քաղաքի պատճենն էր ներկայացնում: Վեներայից ժամանած կամավորները այստեղ կենտրոնացրին տարերքի կրակների հարյուր քառասունչորս առաքինությունները, որ կազմում էին Մեծ Կենտրոնական Արևի ալմաստյա կենտրոնի (фокус) պատճենը:

Սանատ Կումարան մոլորակային մակարդակում հիմնադրեց Մեծ Ճերմակ Եղբայրության կազմակերպությունները, և դրանց գլխավոր կենտրոնը մինչև այժմ էլ գտնվում է այդ բնակավայրում: Այստեղ Վեհապետերը ուսուցանում են դեսպանորդներին, որոնք պետք է տարածեն Քրիստոսի ուսմունքը՝ ադապտացված մարդկային գիտակցության տարբեր մակարդակների համար»[24]:

Մեջբերենք Է.Կ. Պրոֆետի գեղարվեստական վերապատումը Սանատ Կումարայի թագավորության շրջանի մասին.

«Վաղնջական, անհիշելի ժամանակներում մայր ցամաքում կար ներքին ծովը: Այդ ծովի մեջտեղում կար մի կղզի: Կղզին մայր ցամաքի հետ կապվում էր հիասքանչ մարմարյա կամրջով:

[24] Профет М.Л., Профет Э.К. Владыки и их обители / пер. с англ. А. Белова. – М.: М-Аква, 2006. – 592 с.

Կղզու կենտրոնում խոյանում էր պալատը: Գահադահլիճում գտնվում էր մաքուր ոսկուց գահը՝ զարդարված թանկարժեք քարերով:

Տարին մեկ անգամ կարևոր իրադարձություն էր տեղի ունենում: Մերձակա բոլոր շրջաններից տոնական հանդերձանքով մարդիկ էին գալիս, ուղղվում էին դեպի պալատ: Նրանք անցնում էին կամրջով և մտնում էին գահադահլիճ՝ հրաշքի սպասման մեջ: Յուրաքանչյուրի ձեռքին մի լապտեր էր, որի մեջ դեռևս կրակ չկար:

Հավաքվածները երանելի թրթռանքով սպասում էին հրաշքի:

Եվ ահագահի վրահայտնվում էր Սանատ Կումարան: Նա կուրացուցիչ փայլ էր արձակում: Գթասրտություն էր հորդում նրանից: Նա մեղմացնում էր իր շողարձակումը, որպեսզի մարդիկ կարողանային տեսնել Իրեն:

Սանատ Կումարայի կոչով դահլիճի կենտրոնում գտնվող ջահը ինքն իրեն վառվում էր: Եվ բոլոր հավաքվածները հերթով մոտենում էին Սրբական Կրակին և նրանից վառում էին իրենց փոքրիկ լապտերները:

Արարողության ավարտին Սանատ Կումարային նվիրված երգերով ու ձոներով հեռանում էի դահլիճից: Յուրաքանչյուրի ձեռքին Սրբական Կրակով լապտերներ էին:

Ամբողջ տարին լապտերների կրակը վառ էր մնում՝ պահելով ու պահպանելով կացարանների տարածքը, բնակիչներին և ամենայն ինչ շրակայքում

Դաանհիշելի ժամանակներում էր:

Ժամանակի ընթացքում մարդիկ ավելի քիչ էին ուշադրություն դարձնում Աստվածային հրաշքին և ավելի քիչ՝ նյութական աշխարհին:

Ներքին ծովը և Կղզին աստիճանաբար տեղափոխվեցին դեպի նուրբ ոլորտ և սովորական մարդկանց համար անտեսանելի դարձան: Միայն այն ընտրյալները, որ շարունակել են պահպանել Աստվածային Աշխարհի հետ ներդաշնակությունը, մնացել են Շամբալայում ապրելու և ծառայելու համար մարդկությանն ու Սանատ Կումարային»:

Ռուսական դեսպանորդ Տայանա Միկուշինան

XXI դարի սկզբում Եղբայրությունը շարունակում էր Հին Գիտելիքի հաղորդումը նոր ձևի մեջ: Ռուսական դեսպանորդ Տատյանա Նիկոլաևնա Միկուշինան ներկայացնում էր նոր փիլիսոփայական - էթիկական Ուսմունքը, որ հրապարակված էր «Իմաստության Խոսք» և«Իմաստության գիրք» շարքով: Դրանցում Իմաստության Վեհապետերը հասկանալի զրույցների ձևով գիտելիք են տալիս ժամանակակից մարդկանց: Ուսմունքն իր մեջ ներառում է տիեզերքի, կենդանի ամենայն ինչի տիեզերական օրենքները՝ Բարձրագույն բարոյական Օրենքը, Կարմայի Օրենքը, Վերամարմնավորման օրենքը և այլն: Ուղերձներում բացատրվում են Եղբայրության գաղափարախոսության սկզբունքները, որ խարսխված են Սիրո ու հավատի, ազնվության ու անկեղծության, ցածրակարգ ցանկություններից, գիտակցության անորակ վիճակից հրաժարման, եղբայրության և համագործակցման, մերձավորի նկատմաբ հոգածու վերաբերմունքի և Երկրի ամբողջ կյանքի վրա:

Ուսմունքում տրվում է մարդու էվոլյուցիայի հասկացությունը՝ որպես նրա գիտակցության էվոլյուցիա: Այստեղ

ամփոփված են նաև ժամանակակից կյանքի համար անգնահատելի գործնական խորհուրդներ:

Ինչպես շատ այլ դեսպանորդներ, Տատյանա Նիկոլաևնան նույնպես տարիներ շարունակ անցավ դժվարին փորձություններով, մինչև 2004 թվականին Եղբայրությունը նրան իր Դեսպանորդի պարեգոտը տվեց: Պարեգոտը թույլ

է տալիս հատուկ մեթոդիկայով վերին աստիճանի հավաստի ընդունել ու մարդկությանը հաղորդել կեցության բարձր ոլորտների էակների Ուղերձները:

Տասը տարիների ընթացքում Տ.Ն.Միկուշինան ընդունել է Ուղերձների 21 փուլ, մոտավորապես՝ 500 թելադրանքներ: Տատյանա Նիկոլաևնան գրել ու հրատարակել է ավելի քան 70 գիրք: Ուղերձները թարգմանվել են աշխարհի 19 լեզուներով:

Մեծ Ճերմակ Եղբայրության մասին Տ.Ն.Միկուշինան ասում է հետևյալը.

«Ճերմակ Եղբայրությունն իրենից ներկայացնում է Շամբալայի Վեհապետերին կամ Համբարձյալ Դասը կամ մարդկության Ուսուցիչներին, որ Երկիր մոլորակ են եկել Երրորդ Բնիկ Ռասսայի ժամանակներում: Նրանք առաջներում գտնվում էին մարդկանց մեջ և սովորեցնում էին նրանց, իսկ այնուհետև տեղափոխվեցին նուրբ ոլորտ և այժմ ապրում են եթերային Սրբավայրերում և այնտեղից շարունակում են աշխատել Երկրի մարդկության հետ: Եվ Նրանք կոչվում են Մեծ Ճերմակ Եղբայրություն (2003 թ., «Սիրիուս» առաքում)»:

«Մեծ Ճերմակ եղբայրություն»-ը անվանումն էԼույսի էակների հասարակության, որ հասել են էվոլյուցիոն կարգացման հաջորդ աստիճանին: Նրանք Կեցության առավել նուրբ ոլորտներում են լինում:

«Մեծ» նշանակում էայդ էակների հոգևոր նվաճումների բարձրագույն աստիճանը:

«Ճերմակ»-ը խորհրդանշում էԼույսի Էակների աուրայի ճերմակ լուսավորությունը:

«Եղբայրություն» բառը խոսում էԼույսի այս էակների փոխհարաբերությունների միանգամայն այլ սկզբունքների մասին: Նրանք մշտապես միմյանց և այս տիեզերքի Արարչի

հետ Սիրո և միաբանության մեջ են» (2006 թ, Բուլղարիայում հանդիպման ժամանակ):

Այն մասին, թե Ինչպես են Մեծ Ուսուցիչներն օգնում մարդկությանը և, թե ինչպես են մարդիկ զարգանալու հնարավորություն ստացել՝ ստանալով Մեծ Ոգիների մասնիկը, որն էլ դարձել է իրենց ներքին ուսուցիչը, իրենց Պահապան Հրեշտքկը, Տ.Ն.Միկուշինան պատմել է հետևյալը.

«...Երրորդ Բնիկ Ռասսայի մոտավորապես կեսերին մարդկությունը ֆիզիկական մարմին ստացավ: Բայց նրանց մեջ առաջվա պես բացակայում էր գիտակցությունը: Այսինքն՝ մարդը դեռևս բանական չէր: Նա տեսքով մարդու էր նման, մեկանից գրեթե ոչնչով չէր տարբերվում, բայց էությամբ նա պարզապես անասուն էր: Եվ հարց էր առաջանում՝ ո՞ւմ է պետք այսպիսի փակուղային մարդկությունը. Շատ ավելի հեշտ էր դրան ոչնչացնելն ու Երկիրը այլ էակներով բնակեցնելը:

Եվ Տիեզերքում գտնվեցին Էակներ, որոնք անցյալ մանվանտարներում արդեն անցել էին էվոլյուցիայի մարդկային փուլը, այսինքն՝ հարյուրավոր միլիոն տարի առաջ... Դրանք Ոգիներ էին: Եվ այդ Ոգիները եղել էին այն աշխարհում, որը մենք անվանում ենք Աստվածային: Ու այս Ոգիները որոշեցին վոհաբերել իրենց և մարդկությանը բանականությամբ օժտել: Այդ Բարձր Ոգիները, որոնք որոշ կրոնական համակարգերում կոչվում են Սուրբ Կումարաներ, իրենց մի մասը կիսեցին մարդկության հետ:

Բայց բոլոր մարդիկ չէին, որ այդ Մեծ տիրակալներից նույն մասն ստացան: Որովհետև մարմինները պատրաստ չէին: Նրանք, որ վարգացման ավելի բարձր աստիճանի վրա էին, այդ Էակներից ավելի մեծ բաժին ստացան: Իսկ նրանք, որ պատրաստ չէին, միայն կայծ ստացան: Կային նաև մար-

դկային այնպիսի էակներ, որ Այդ Բարձրագույն էակներից ոչինչ չստացան: Սրանով էբացատրվում ինտելեկտի, գիտակցության, մտքի մակարդակների տարբերությունը, որ այժմ հատուկ էմարդկությանը:

Երրորդ Բնիկ Ռասսայի այն ժամանակներում այդ Բարձրագույն Ոգիները կարողացել են գրեթե ամբողջությամբ մարմնավորվել այն մարմիններում, որոնք «պատրաստ էին»: Նրանք Արխատներ էին կամ Աստվածներ: Նրանք Աստվածների էին նման մնացած մարդկության համար, քայլում էին մարդկանց մեջ և սովորեցնում էին նրանց:

Երբ Վեհապետերն իրենց մի մասով կիսվեցին մարդկանց հետ, մարդիկ բանականություն ձեռք բերեցին: Բանականությունը երկսայր կենք է, որ կարելի է գործածել ինչպես բարու, նույնպես և չարի համար: Եվ մարդկությունն այդ գործիքն սկսեց գործածել ըստ իր հայեցողության: Եվ սկսեց կարմագործել, այսինքն՝ կատարել գործողություններ, որոնք չէին համապատասխանում Աստվածային ծրագրերին:

Եվ երբ մարդն սկսեց կարմագործել շրջապատող աշխարհը դարձավ ավելի ու ավելի խտանալ: Եվ մարդկային թրթիռները չափից դուրս նվազեցին: Այս պատճառով էլ Աստվածները չէին կարող մարդկանց մեջ լինել, ու նրանք մասնակիորեն սկսեցին մարմնավորվել Աստվածային դինաստիաների տեսքով մարդկանց առաջնորդների մեջ: Այս Աստվածային դինաստիաների մնացորդները մենք գտնում ենք, օրինակ, հին Բաբելոնում, հին Եգիպտոսում: Այսպես Աստվածները շարունակում էին ուսուցանել մարդկությանը, նրան բարոյական Օրենքներ տալ, որոնցով ապրում է հասարակությունը:

Եվ այսպես շարունակվում էր ոչ միայն Երրորդ Բնիկ Ռասսայի, այլ նաև Չորրորդ Բնիկ Ռասսայի ժամանակներում, որ եկավ փոխարինելու Երրորդ Ռասսային և ապրում էր



Ատլանտիդա աշխարհամասում: Չորրոդ Բնիկ Ռասային հաջորդեց Հինգերորդ Բնիկ Ռասան: Թեև ժամանակակից մարդկության մեծամասնությունը առաջվա պես պատկանում է Չորրորդ Բնիկ Ռասային:

Ու քանի որ մարդկության թրթիռները ավելի ու ավելի նվազ էին դառնում Աստվածային էներգիայի ոչ ճիշտ օգտագործման արդյունքում, այդ Բարձր Ոգիների ներկայությունը Երկրի վրա ավելի ու ավելի էր դժվարանում: Բայց նրանք գալիս էին որպես մասնակի մարմնավորումներ և այժմ կարող էին ներկայանալ որպես մարգարեներ՝ համաշխարհային կրոնների հիմնադիրներ: Եվ մենք գիտենք ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒՆ՝

ՀԻՍՈՒՍԻՆ, Մարգարե Մուհամեդին, գիտենք Հաութամա Բուդդային, որոնց մեջ առկա էին Բարձրագույն էակները և տալիս էին հասարակության բարոյական օրենքը:

Ներկայումս Համբարձյալ Դասերը գտնվում են ուրիշ պլանում: Մենք Նրանց չենք կարող տեսնել, նրանք գտնվում են նուրբ ոլորտներում և չեն կարող ներկալինել այստեղ՝ ֆիզիկական աշխարհում: Բայց այդ նուրբ ոլորտներում գտնվելով՝ նրանք այնուամենայնիվ փորձում են ուղղորդել մարդկության էվոլյուցիան: Ուսմունքը պետք է տրվի, քանի որ մարդկային գիտակցությունը արդեն պատրաստ է այդ ուսմունքն ընդունելուն: Եվ այժմ Վեհապետերը մարդկության հետ աշխատելու նոր ուղի են ընտրում՝ Դեսպանորդների միջոցով»[25]:

[25] Տեքստը վերցված է 2006թ., հուլիսի 29-ին Տ. Միկուշինայի ելույթի տեսաֆիլմից, որը տեղի է ունեցել Սոֆիայում, եւ կորդ է ունենալ բանավոր խոսքի ոճային դարձվածներ: պատմությունը հիմնված է Ե.Պ Բլավատսկայայի «Գաղտնի դոկտրինան՝ գրքի տեղեկությունների վրա:



Պատմական անհատները՝
Ուսուցիչների վերամարմնավորումներ են

Թեոսոֆների կարծիքով համաշխարհային կրոնների և թեոլոգիական կազմակերպությունների խոշոր գործիչները, գիտնականները, կոմպոզիտորները, հումանիստ ղեկավարները և շատ այլ նշանավոր մարդիկ կապ են ունեցել Մեծ Ճերմակ Եղբայրության հետ, Եղբայրության անդամներ են եղել կամ ուսանել են նրանց մոտ հաղորդակցվել են նրանց հետ: Պատմական դեմքերի մեջ՝ նրանք, որ իրենց դասում էին Մեծ Ճերմակ Եղբայրության միսիոներների շարքում (բացի արդեն հիշատակված Ե.Պ.Բլավատսկայայից և Ն.Կ. և Ե.Ի.Ռերիխներից), կարելի է դասել փիլիսոփաներ Ռոջեր Բեկոնին, Ֆրենսիս Բեկոնին՝ Թոմաս Մորին, կոմպոզիտոր Ալեքսանդր Սկրյաբինին: Ռոզենկրեյցերների օթյակի անդամներն իրենց առաքելությունն էին համարում «Ունիվերսալ Եղբայրությանը» ծառայելը, սրա հետ մեկտել ճշտում մտցնելով, որ «Ունի-



վերսալ Եղբայրությունը» և «Շամբալայի Եղբայրությունը» նույն բաներն են[26]:

Մեծ Ճերմակ Եղբայրության մյուս անդամների մասին, որպես պատմական և մարդկության զարգացման գործում նշանակալի դեր կատարած անձնավորություններ, կարելի է դատել ըստ թեոսոֆիական աշխատությունների:

Ե.Ի. Ռերիխը նրանց դիրքը հասարակության մեջ և նրանց առաքելությունը այսպես է նկարագրել.

«...Նրանցից են մեծ թագավորությունների, կրոնների, փիլիսոփայությունների հիմնադիրների, ալքիմիկոսների և սրբերի կերպարները: Նրանք սրտի կենդանի կրոնի հիմնադիրներն են, բայց ոչ կաշկանդող դոգմաների»[27]:

---

[26] Ян ван Райкенборг, Катароза де Петри. Универсальный гнозис. Теософия в России. – URL: http://www.theosophy.ru/lib/gnosis.htm.

[27] Рерих Е.И. Письма. Том II (1934 г.). – Международный Центр Рерихов, 2013.

Էզոթերիկ ավանդույթներն ասում են, որ մարդկության Ուսուցիչներ Կրիշնան, Բուդդան, ՀԻՍՈՒՍԸ տիեզերական ավատարների Աստվածային մարմնավորումներն են:

Մեծ Ճերմակ Եղբայրության Ուսուցիչների մարմնավորումներից են այնպիսի պատմական անձեր, ինչպիսիք են Անատոլի Թիանացին, Ռամզես II –ը, Պյութագորասը, Պլատոնը, Օրիգենը, Լաո Ցզին, Կոնֆուցիոսը, Շանկարան, Սերգիյ Ռադոնեժսկին, Աքբար Մեծը, Յակոբ Բյոմեն, Դանթեն, Ջորդանո Բրունոն, Ժաննա Դ՚Արկը, Կամպանելլան, Սեն Ժերմենը[28]: Կարելի է նաև հիշատակել աստվածաշնչյան նահապետ Աբրահամին, Հովսեփին՝ Սուրբ կույս Մարիամի ամուսնուն, Հիսուսի մորը՝ Մարիամին, երեք մոգեր Մելխիորին, Կասպարին և Բալթազարին, որ ողջունեցին Հիսուսի ծնունդը, Անգլիայի թագավոր Արթուրին, Շահ Ջահանին, որ իր սիրելի կնոջ՝ Մումթազի պատվին կառուցեց Թաջ Մահալը, Սերաֆիմ Սարովսկուն և ուրիշներ...[29]:

[28] Ковалева Н. Путь в Шамбалу. – М.: Рипол-классик, 2004. – 318 с.
[29] М.А. И Э.К. Профетов и Т.Н. Микушиной գրքից.

Եղբայրության ազդեցությունը փիլիսոփայության և գիտության վրա



Թեոսոֆիական գաղափարները և հասկացությունները, որ հատուկ են Մեծ Ճերմակ Եղբայրությանը՝ միասնական աստվածային սկիզբը, հոգևոր հիերարխիան, հոգու էմանացիան մատերիայի մեջ, մոտ են նոր պլատոնական փիլիսոփաներին՝ սկսած անտիկ շրջանից: Միավորելով Արիստոտելի և Պլատոնի փիլիսոփայությունները, նոր պլատանականները, այդ թվում նաև նոր պլատոնականության նշանավոր ներկայացուցիչ Պլոտինը, վերահիմաստավորում են Մտքի, Հոգու, Միակի օնտոլոգիական հասկացությունները և Տիեզերքի ծագումը բացատրում են էմանացիայով՝ Միակի դեպի կեցության ցածր մակարդակներ էջքով: Այդ պրոցեսը կատարվում է Միակի ստեղծագործական էներգիայի ավելցուկի շնորհիվ: Եվ Բարձրագույն կեցության դեպի ցածրագույնը անցման չափով տեղի է ունենում Բարիքի նվազում: Սակայն կամային հաղթահարման շնորհիվ ցածրագույն կեցությունը դեպի Ակունք վերադառնալու հատկություն ունի, և սա է թելադրում էվոլյուցիոն ճանապարհով գնալու նրա ձգտումը: Այսպիսով Ոգին Տիեզերքում

նյութականանալով, բնական ճանապարհով կորցնում է Բարիքի հատկությունը, և նյութեղենացման յուրաքանչյուր առավել ցածր մակարդակ բնութագրվում է նվազ կատարելությամբ: Սրանով է բացատրվում Տիեզերքում չարի առկայությունը՝ որպես բարձրագույն Բարիքի բացակայություն: Ձգտելով վերադառնալ միակ սկզբին, հոգին անցնում է կատարելագործման նույն աստիճաններով, բարձրանալով դեպի կեցության ավելի բարձր մակարդակներ:



Ռուս փիլիսոփա, պատմաբան Վ.Ֆ. Ասմուսի բառերով *«Պլոտինի գլխավոր խնդիրն է Աստվածային միասնականից՝ որպես ամեն մի կեցության վերջին հիմքից, հետևողականորեն դուրս բերել մնացած ամեն ինչի աստիճանավորումը, որ գոյություն ունի աշխարհում և նշելը այն ուղին, որ տանում է դեպի ետ՝ ելման միասնականը: Այս խնդիրը գիտական չէ և ոչ էլ՝ փիլիսոփայական, այլ կրոնական է, թեոսոֆիական: Պլոտինը հասկանում էր այս խնդրի անչափելի դժվարությունը: Անմիջականորեն բարձրանալ մինչև Միակի հասկացությունը, Միակն ընդունել որպես միակ անվերապահորեն ինքնուրույն սկիզբ, դրանում դիտարկելն այն հիմքը, որից պետք էր որ բխի ամեն ինչ, կարող է միայն հանճարը և այն էլ այնդ եպքում, եթե գտնվում է ոգեղեն բացառիկ վիճակում: Սովորական մարդիկ, որ ամբողջ կյանքում մխրճված են զգայականի մեջ, նաև այն մարդիկ, որ կարճ ժամանակով բարձր են կանգնել դրանից, և*

ապավերադարձել են սովորական գործնական կյանքի, գնում են մի ճանապարհով, որ հակառակ է իրենց իրական բնույթին, և որքան նրանք ավելի են հեռանում սրանից, այնքան ավելի է դժվարանում նրանց վերադարձը: Այն երեխաների նման, որոնց թողել են ծնողները և նրանք օտարների կողմից են դաստիարակվել, չեն կարող ճանաչել իրենց հայրերին, և իրենց ծագումը մոռացած, չեն կարող ճիշտ հասկանալ իրենք իրենց, այդպես են այն մարդկանց հոգիները, որ շատ հեռու են գնացել նախասկզբից. նրանք մոռանում են կեցության վերջին հիմքերը՝ իրենց հորը, իրենք իրենց, իրենց անցյալը»[30]*:*

Նոր պլատոնականներն ընդունում էին և ակտիվորեն օգտագործում էին միստիկական պրակտիկաները, թեուրգիան՝ որպես Աստծո հետ միավորվելու գործընթաց՝ աղոթքի պրակտիկաների ժամանակ: Ուսմունքը տարածվում էր Եվրոպայի ու Ասիայի փիլիսոփայական դպրոցներում, ուներ մի շարք տարատեսակներ և պաշտպանվում էր այնպիսի փիլիսոփաների կողմից, ինչպիսիք էին Պորֆիրին, Թեոդոր Ասինացին, Յամվլիխը, Պրոկլոսը, Պլուտարքոսը, միջին դարերի փիլիսոփաները, որոնցից Օրիգենը, Ավգուստինոս Երանելին, Կեղծ Դիոնիսիոս Արեոպագիտը, Մեյստեր Էկհարտը, Թաուլերը[31]:

Վերածնության դարաշրջանում նոր պլատոնականների գաղափարները տարածում էին Նիկոլայ Կուզանսկին, Պարացելսը, Տոմազո Կամպանելլան, Ջորդանո Բրունոն: Հետագայում նոր պլատոնականության և սրա հետ կապված գաղափարներն իրենց արտացոլումը գտան այն փիլիսոփա-

[30] Асмус В.Ф. Античная философия. – Высшая школа, 2009. – 400 с.
[31] Шичалин А. Неоплатонизм. Новая философская энциклопедия. Электронная библиотека ИФ РАН. – URL: https://iphlib.ru/library/collection/newphilenc/document/HASHec86502a308ba51ee4f8ec.

ների աշխատություններում, որ զարգացնում էին գիտական մեթոդը՝ բնագետ Ռոջեր Բեկոնի, նատուրալիստ փիլիսոփա Բենեդիկտ Սպինոզայի, մաթեմաթիկական վերլուծության հիմնադիր Գոտֆրիդ Լեյբնիցի, գիտական մեթոդի հիմնադիր Ֆրենսիս Բեկոնի:

Փիլիսոփաների կարծիքով գիտական մեթոդը թույլ է տալիս ճանաչել աստվածային բնույթը, քանի որ Աստված «կազմում է ինչպես բոլոր իրերի կեցության, այնպես էլ դրանց էության առաջին և միակ ազատ պատճառը»[32]:

Քաղաքական գործիչ և փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնին նույնպես համարում էին ռոնզեկրեյցերների օթյակի՝ Ունիվերսալ Եղբայրության մասին գաղափարների հիմնադիրներից մեկը[33]:

XIX–XX դարերում՝ Ե.Պ. Բլավատսկայայի հրապարակած աշխատությունների և Թեոսոֆիական դպրոցի ստեղծման հետ թեոլոգիական և թեոսոֆիական հայացքները նորից տարածում գտան ԱՄՆ ում և Եվրոպայում, նշանակալի ազդեցություն ունեցան ռուսական փիլիսոփայության վրա:

Թեոսոֆիական և անտրոպոսոֆիական հայացքները արտացոլվեցին ոչ միայն ռուս փիլիսոփաների, այլ նաև գրողների, գիտնականների, նկարիչների և կոմպոզիտորների աշխատանքներում:

Հոգևոր վերածնունդը, աստվածայինի հետ ձուլումը հավիտենության մեջ հնչում է սիմվոլիստ պոետներ Դ. Մերեժկովսկու, Վ.Բրյուսովի, Կ.Բալմոնտի, Ա.Բելու, Ա.Բլոկի, գրողներ Ֆ.Դոստոեվսկաու, Ա.Պլատոնովի, Ս.Բուլգակովի գործերում:

«Мы были – сумеречной мглой, мы будем пламенные духи» (Андрей Белый. «Карма»).

[32] Бенедикт Спиноза. Вики-цитатник. – URL: https://ru.wikiquote.org/wiki/Бенедикт_Спиноза/

[33] Спаров В. Полная история тайных обществ и сект мира. Фрэнсис Бэкон. ВикиЧтение. – URL: https://history.wikireading.ru/77734/

Եղբայրության գաղափարները բարձրագույն կամքի, գիտության բարոյաէթիկական հիմքերի, հոգևոր էվոլյուցիայի մասին արծարծվում էին ռուս փիլիսոփայության և կրոնական նոր մտքի՝ «ռուսական կոսմիզմի» մեջ, որի վառ ներկայացուցիչներն էին փիլիսոփաներ Ն.Կ. Ռերիխը, Վ.Ս Սոլովյովը, Ն.Ա.Բերդյաևը, Ն.Ֆ Ֆյոդորովը, Վ.Ի. Իվանովը, Պ.Ա Ֆլորենսկին, Ի.Ա Իլյինը, Ս.Լ Ֆրանկը, XX դարի կեսերին՝ Ա.Ֆ. Լոսևը[34]:

Թեոսոֆիական գաղափարների վրա մեծ ազդեցություն ունեցան Ն.Կ. և Ե.Ի. Ռերիխները «Կենդանի Էթիկայի», ինչպես նաև Վ.Ս.Սոլովյովի Սոֆֆի՝ որպես համաշխարհային ոգու մասին դրույթները:

Գիտության էթիկական սկիզբներն էին զարգացնում Կ.Է.Ցիոլկովսկին, Վ.Ի.Վերնադսկին, Ա.Լ.Չիժևսկին: Այսպես՝ Վ.Ի.Վերնադսկին համարում էր, որ մարդը կատարյալ արարած չէ, և նրա կողքին կան ավելի զարգացած արարծներ:

«Homo Sapiens-ը ավարտուն չէ, նա մտածողության կատարյալ ապարատին չի տիրապետում: Նա միայն մի միջանկյալ օղակն է այն արարածների երկար շղթայի, որոնք ունեն անցյալ և, անկասկած կունենան նաև ապագա»[35]:

Կ.Է.Ցիոլկովսկին մատնանշում էր այն մոլորակների առկայությունը, որ գտնվում են էվոլյուցիայի բարձրագույն աստիճանների վրա և բնակեցված են «Բարձրագույն մարդկանցով»:

«...մենք պետք է ընդունենք տարբեր կարգի բազմաթիվ աստվածների գոյությունը: Որքան ավելի բարձր են նրանք մարդուց, այնքան ավելի անհասանելի են նրանց»[36]:

---

[34] Фролов В.В. Космизм философии Н.А. Бердяева и мировоззрение Рерихов // Космическое мировоззрение – новое мышление XXI века: Материалы международной конференции. – URL: https://lib.icr.su/node/888.

[35] Вернадский В.И. Научная мысль как планетное явление / Ф.Т. Яншина. – М.: Наука, 1991. – 271 с.

[36] Циолковский К.Э. Есть ли Бог? Очерки о Вселенной. – Москва, 1992. – 256 с.

Մեծ Եղբայրությունը գրական ստեղծագործություններում



Մեծ Ճերմակ Եղբայրության գործունեությունն իր արտացոլումն է գտել գեղարվեստական գրականության մեջ: Հիշատակենք այդ ստեղծագործություններից ամենանշանավորները:

Ֆիլոս. «Երկու մոլորակների բնակիչը»

Վեպի գործողությունները կատարվում են XIX դարի Ամերիկայում: Այնտեղ նկարագրվում է «Լոտիինյան Եղբայրությունը», որի աշակերտներին անվանում էին նաև «Միայնության որդիներ» կամ «Աստծո աշակերտներ»: Նրանց օթյակները, որ Սեչ էին կոչվում, տեղակայված են ամբողջ արևմտյան կիսագնդով մեկ: Միստիկական Եղբայրության տաճարը գտնվում է Շաստա լեռան մեջ. *«...Քչերն են, որ դեպի այնտեղ մուտք ունեն: Միայն հետաքրքրասիրությունը չի կարող բացել նրագաղտնի դարպասները: Բայց փնտրողները*

գտնում են, թակողների առջև բացվում են դրանք: Շաստան հավատարիմ պահակ է, նրա լռակյաց աշտարակները, ոչ մի ձևով չեն բացի այն ամենը, ինչ կատարվում է նրա կրծքում: Սակայն բանալին կա. նրահամար, ով նախապես հաղթանակ էտարել ինքն իր վրա,Շաստին չի մերժի»:

Աշակերտի ուղու մասին ասված է. *«Նա, ով իրականում նվաճումներ ունի, դրան ինքն է հասնում, նա ինքնուրույն է աճում: Նրա գիտելիքը մյուսների հետ ուսումնառության արդյունք չէ: Աստծո յուրաքանչյուր աշակերտ ինքն է իրենից ներկայացնում Աստվածային իմաստության կենտրոն: Նույնիսկ այն երդումները, որ պահանջվում են ձեռնադրում անցնողներից, նախատեսվում են միայն նրահամար, որ փորձվի՝ արդյոք աշակերտը իր էությամբ մ՚ն է, Որի հետ ձգտում էմիանալ»*[37]:

[37] Филос. Гражданин двух планет / пер. С. Беляева. – М.: Сфера, 2011. – 512 с.

Վեպը գրավիչ կերպով պատմում է Ատլանտիդայի հեռավոր ժամանակների մասին: Ընթերցողն այստեղ հետաքրքիր արկածների նկարագրության հետ մեկտեղ կգտնի պատճառի ու հետևանքի օրենքի խորը վերլուծությունը:

Էլիզաբեթ Հեյչ «Ձեռնադրում»

Ինքնակենսագրական այս պատումը ներառում է հեղինակի մի քանի երկրային կյանքերը: Հիշողությունները Է. Հեյչին տանում են դեպի հին Եգիպտոս, որտեղ նա վերամարմնավորվել էր: Գրքում նկարագրված է Եղբայրությունը կամ եգիպտական այն քրմերի գաղտնի օթյակը, որ կամավոր իրենց վրա էին վերցրել Երկրի մարդկանց օգնելու հոգևոր պարտքը:

Վեպը պատմում է էվոլյուցիայի Օրենքների և մարդու հոգու վերածնունդի ուղիների մասին: Երբ մարդը որոշում է ընդունում, որ պետք է հրաժարվի ֆիզիկական աշխարհի հետ կապվածությունից, նա կանգնում է Ձեռնադրման Ուղու վրա: Յոթ տարվա ընթացքում անցնում է փորձություններով՝ առանց օթյակի հետ հաղորդակցվելու: Դրանց թվին են պատկանում ազատագրումը զգացմուն-

քայնությունից, զայրույթից, փառասիրությունից, ագահությունից, զգացականությունից, հակադրվելը արտաքին ազդեցություններին:

Բոլոր փորձություններից հետո ձեռնադրվածներն իրենց մնացյալ կյանքը պետք է տաճարում անցկացնեն՝ իրենց բոլոր ջանքերն ուղղելով մատերիայի ոգեղենացմանը՝ օգնելով մարդկանց գտնելու դեպի Բարձրագույն Ես-ը տանող ճանապարհը:

Հ.Պ. «Ձեռնադրվածի կյանքը»

Գրքում նկարագրվում են Ջասթին Մորուորդ Հեյգի կյանքի մի քանի տարին: Հենց այս անունով է ապրում և աշխատում Ճերմակ Եղբայրության Ադեպտը XIX դարի Լոնդոնի տարածքում: Ինչպես միայն իր անվան սկզբնատառերը նշող հեղինակն է վկայում, ինքը եղել է Ջասթին Հեյգի աշակերտը և նկարագրվող պատմությունների վկան:

Գրքում մի անգամ չէ, որ հիշատակվում է Ճերմակ Եղբայրությունը, և բացահայտվում է Երկրի մարդկանց ծառայելու նրա իսկական իմաստը:

«Ինչ վերաբերում է վերջին մի քանի տարուն, որոնց ընթացքում մենք այնքան միակամ աշխատեցինք միասին, ապաթույլ տվեք շնորհակալություն հայտնել Ձեզ Ձեր համակրանքի համար, որով այդ տարիները իսկապես երջանիկ էին, և Ձեր ընկալունակության համար, որը ինձ Ձեզ թույլ տվեց կամաց-կամաց մի քիչ գիտելիք հաղորդել, որ Ձեզ հետ որոշեց կիսել Եղբայրությունը: Չէ՞ որ ոչ թե մեր հովանավորյալները պետք է շնորհակալ լինեն օգնության համար, այլ մենք պետք է շնորհակալ լինենք նրանցից, ովքեր մեզ թույլ տվեցին

իրենց օգնել էվոլյուցիոն արահետով վբոսնելու, այսպիսով մեկ հնարավորություն տալով վբաղվելու նրանով, ինչով աշխարհում ամենաշատն ենք ուզում վբաղվել»[38]:

Կ.Ե. Անտարովա. «Երկու կյանք»

Կ.Ե Անտարովայի «Երկու կյանք» գիրքը գրվել է պայծառալսության միջոցով, և սկզբում նախատեսված է եղել աշակերտների նեղ շրջանակի համար, իսկ 1990 թվականին մեծ տարածում գտավ Ռուսաստանում:

Վեպի հերոս Լյովուշկան գալիս է Լուսավոր Եղբայրություն՝ ուսանելու, և մեծ Ուսուցիչները նրան կանգնեցնում են ինքնազարգացման և բարձր գաղափարներին ծառայելու ուղու վրա: Լյովուշկայի ճանապարհը լի էր վտանգներով, հետապնդումներով, ցնցող հանդիպումներով և հայտնագործություններով: Նրա ուսուցիչներն էին Իլարիոնը, Պավել Վենդիանեցը և Էլ Մորիան, ինչպես նաև Սանատ Կումարան, Սեն Ժերմենը և ուրիշներ: Գրքում նրանք բոլորն էլ հանդիսանում են Ճերմակ Եղբայրության Վեհապետեր: Համընդհանուր բա-

[38] Х.П. Жизнь Посвящённого / пер. с англ. Р.Ш. Ахунова. – М.: Сфера, 2003. – 480 с.

որության համար աշխատանքը համարվում է մեծագույն արժեք: Լուսակիր Եղբայրները նկարագրվում են որպես ավագ ընկերներ և հոգևոր առաջնորդներ,որոնք ղեկավարվում են հոգևոր-բարոյական ամենաբարձր սկզբունքներով: Այդ սկզբունքները նրանք իրենց կյանքում կիրառում են ամեն օր՝ մյուսներին նույնպես նույնը կոչ անելով:

«Ահա թե ինչպես կարող է երջանիկ լինել մարդն իր ներքին վիճակով: Ահա թե որտեղ է մարդկանց օգնելու ուժն՝ առանց խոսքերի, առանց քարոզների, այլ միմիայն սեփական օրինակով»[39]*:*

Հերոսը Ձեռնադրում և օրհնություն է ստանում ընդհանուրի բարօրության համար կատարած աշխատանքի համար:

«Խորացիր և ես մի կարգադրության մեջ, որ քեզ համար պատվիրել է մեկնաբանել մեր մոլորակի Մեծ Աստվածը՝ Սանատ Կումարան: ...նրան, ում պատվել են Աստծո աչքերը՝ դուրս դնելով մարդկանց շարժման ընդհանուր օրենքներից, նրան ընդունելով որպես Իր անմիջական աշխատակի: Նա պետք ապրի ոչ թե երկրում, այլ՝ երկու աշխարհներում, հստակ հասկանալով, որ ապրում է երկնքի աշխարհում, բայց գործում է Երկրի աշխարհում»[40]*:*

---

[39] Антарова К.Е. Две жизни. Часть 1. – М.: Сиринъ, Скорпион, 1993. – 528 с.
[40] Նույն տեղում՝. Часть 3. Книга 2.

Դեննիոն Բրինկլի «Լույսով Փրկվածը»

Ինքնակենսագրական գրքերի շարքում հեղինակը պատմում է կլինիկական մահվան երեք փորձառությունների մասին: Յուրաքանչյուր այսպիսի դրվագ ուղեկցվում է նրանով, որ հեղինակը հայտնվում է այլ չափման մեջ, որ գտնվում է ուրիշ թրթիռային մակարդակում: Այլ չափման մեջ գտնվելով՝ Դեննիոնը հաղորդակցվել է տասներեք Լույսի Էակների հետ, որոնք հետևում էին Երկիր մոլորակի էվոլյուցիային: Հեղինակի խոսքերով՝ Էակները նրան օգնել են հասկանալու իր ետզարգացումը (դեգրադացիան)՝ որպես մարդու, որին Աստված է ստեղծել, մարդկության էվոլյուցիային վերաբերող հորդորանքներ է հղել, նաև հաղորդել են, թե ինչ է լինելու Երկրի վրա 50 տարվա ընթացքում: Ինչպես նշում է հեղինակը, Լույսի Էակները, որոնց ինքը հանդիպել է հոգևոր թագավորությունում, Համբարձյալ Վեհապետերն էին, որ ապրում էին Ոգու ոլորտում:

Վերջաբան



Մենք համոզվեցինք, որ Մեծ Ճերմակ Եղբայրություն հասկացությունը ոչ առասպել է, ոչ էլ հնագույն հեքիաթ: Հազարմյակների ընթացքում աշխարհի տարբեր ծայրերում բազմաթիվ ժողովուրդներ բանավոր ու գրավոր վկայություններ են պահպանել Մեծ Ոգիների մասին, որոնք մարդկությանն օգնում են և նրան ուղղորդում են դեպի հոգևոր էվոլյուցիա: Մեծ Եղբայրության մասին գիտելիքը արտացոլված է բոլոր համաշխարհային կրոններում, փիլիսոփաների, գիտնականների, ճանապարհորդների, անցյալի և ներկայի հոգևոր հետախույզների աշխատություններում:

Սրբազան Բնակատեղին շատերին է ոգեշնչել ուղևորվելու, և մինչև մեր օրերը Եղբայրության բնակատեղին՝ միստիկական Շամբալան որոնող արշավախմբեր են կազմակերպվում, որոնք գտնում են նրա գոյության վկայությունները:

Մեծ Ճերմակ Եղբայրության պատմությունը գնում է մինչև դարերի անչափելի խորքերը՝ միլիոնավոր տարիներ

այսօրվանից առաջ, երբ մարդկությունը դեռևս գտնվում էր մանկության, կիսաանասնական վիճակում:

Հենց Մեծ Ուսուցիչների շնորհիվ է, որ մարդկությունը զարգացման հնարավորություն ստացավ: Հենց Նրանք են, որ բոլոր ժամանակներում տարբեր ժողովուրդների տվել են բարոյական կյանքի և խաղաղ գոյակցության հիմքերը, առաջ են մղել մշակույթն ու գիտությունը: Հենց Նրանք են Երկիր եկել որպես Աստվածային տիրակալներ, կրոնների հիմնադիրներ, նշանավոր փիլիսոփաներ, կոմպոզիտորներ, գրողներ: Հենց Նրանք են Երկրի վրա և Երկնքում ստեղծել Շամբալան՝ սրբազան Բնակատեղին, որտեղից ուղղորդում և լուսավորում են մարդկությանը:

Եվ որքան էլ կրոնական դոգմատիկները աշխատել են պնդել իրենց ուղղափառ պատկերացումները, Մեծ Ճերմակ Եղբայրության, տիեզերքի Օրենքների, իրական մետապատմության և մարդկության ծագման մասին գիտելիքները արդեն հաստատուն կերպով մտնում են ժամանակակից ժողովուրդների մտածողության մեջ: Հենց այս գիտելիքներն են տալիս կեցության իմաստի, բարոյական կյանքի անհրաժեշտության և շահավետության մասին հարցերի պատասխանները, վերացնում են մահվան վախը, պատկերում են մեր հոգու անվերջ զարգացման վիթխարի հեռանկարը, որպեսզի ի վերջո դառնանք «Աստվածանման»:

Ըստ երևույթին մարդկության համար եկել է իր էվոլյուցիայի՝ որպես տիեզերքի ընդհանուր զարգացման մաս լինելու ժամանակը և հասկանալու, որ մարդը ոչ թե Արարչության պսակն է, այլ կան Նրանք, որ գտնվում են էվոլյուցիայի ավելի բարձր աստիճանների վրա և անխոնջ կերպով մարդկությանն ուղղորդում են դեպի իր զարգացումը: Նրանց անունն է ՄԵԾ ՃԵՐՄԱԿ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ:

Մեծ ճերմակ Եղբայրության գաղտնիքները